Առաջին Պատգամը Կույս Մարիամից

Առաջին պատգամը Կույս Մարիամից
Ստացված երկուշաբթի 8 նոյեմբերի, 2010թ, ցերեկվա ժ 3.30 տանը
Վարդարանն աղոթելուց հետո:

(Հայտնում է գալիք մարգարեությունների մասին, որոնք ստանալու էր այդ մարգարեուհին, ով այդ պահին գաղափար չուներ, թե իրենից ինչ էին խնդրելու անել):

<<Զավակս, դու պատասխանատու գործ ունես անելու և չպետք է թույլ տաս, որ որևէ մեկը կանգնեցնի քեզ: Ճշմարտությունը պետք է դուրս գա: Դու ընտրվել ես այս աշխատանքն անելու համար: Զավակս, ուժեղ մնա: Նայիր Աստծուն վերևում առաջնորդության համար, որ անես Իմ աշխատանքը:

Քեզ հետ աշխատում են բոլոր սրբերը: Պատկերները * (տես պատգամի վրջում), որ տեսնում ես, բոլորն այնտեղ են, որ օգնեն քեզ տարածելու Իմ անսահման պատգամները, որպեսզի ողջ աշխարհը լսի: Քեզ առաջնորդություն է տրվում: Քեզ համար հեշտ չի լինի, բայց սիրով կդիմանաս: Այն ամենն, ինչ տեղի է ունենում, կանխասացվել է: Դու մի գործիք ես, որ հաղորդես Աստծո խոսքը Իր բոլոր զավակներին:

Երբեք մի մոռացիր, Աստված սիրում է Իր բոլոր զավակներին, ներառյալ այն մեղավորներին, ովքր վիրավորել են Նրան: Գթասրտություն խնդրիր ձեզանից յուրաքանչյուրի և ամեն մեկիդ համար: Սուրբ Ընտանիքը կվերամիավորվի:

(Դադար….ես զարմացած էի, ուստի հարցրեցի Տիրամորը <<Այս մասը ճի՞շտ է: Նա մեղմ ժպտաց և շարունակեց …)

Վերցրու գրիչդ, դա ճիշտ է, և տարածիր ճշմարտությունը քանի դեռ չափազանց ուշ չէ:

Այս պատգամներն աստվածային ծագում ունեն, և պետք է հարգվեն; Ես վստահում եմ քեզ, որ դրանք արդյունավետորեն կհանձնվեն չհավատացող աշխարհին: Ամենակարևորն է, որ դու ուժեզ մնաս Իմ սիրելի Որդու համար: Ես գիտեմ, որ դու տառապում ես Նրա համար, Նրա հետ և Նրա միջոցով: Ուրախացիր, որովհետև դա լավ է: Դու օրհնյալ ես, զավակս, որ ընտրվել ես այս աշխաանքի համար: Մնա ուժեղ:

Աղոթիր առաջնորդության համար ամեն օր: Ժամանակի ընթացքում դու ավելի կուժեղանաս: Մի վախեցիր, Ես ամեն օր քեզ հետ եմ և քո ընտանիքի հետ: Դու

լցվում ես Սուրբ Հոգով, որպեսզի կարողանաս քողազերծ անել ճշմարտությունը երկրի վրա Իմ Հոր ծրագրի մասին:

Զավակս, մի կողմ նետիր կասկածներդ: Դու չես երևակայում այս աստվածային պատգամը: Սուրբ Գրքերը պատրաստ են կատարվելու:

Աղոթիր Աստծո բոլոր զավակների համար: Իմ սիրելի Որդին ամեն օր այնքան շատ է վիրավորվում: Նա տառապում է մարդու մեղքերից: Նրա տառապանքը հասել է անասելի աստիճանի հիմա, որն Իր խաչելության օրվանից ի վեր այդքան ուժգին չի եղել:

Դու ունես պահանջվող էներգիան և ոգին, Աստծո օրհնությամբ, որ կատարես քո առաքելությունը: Քո մաքրագործումն ավարտված է: Դու պատրաստ ես այն մարտին, որը սպասում է քեզ:

Գնա հիմա, զավակս, հագիր քո զրահը: Կանգնիր գլուխդ բարձր պահած և օգնիր կռվել Չարի դեմ: Մի հուսահատվիր երբ ժամանակ առ ժամանակ մեկուսացված կզգաս: Քեզ հետ են բոլոր հրեշտակներն ու սրբերը, ներառյալ Հովհաննես Պողոս II-ը, սուրբ Ֆաուստինան և սուրբ Հովսեփը, որոնք քեզ ուղղություն են տալիս ամեն քայլափոխի:

Շնորհակալ եմ զավակս, այն հավատի համար, որ ցույց տվեցիր: Դու մի մարտիկ ես և շատ սիրված ես Հայր Աստծո և Իմ սիրելի Որդու կողմից: Դու մեկ ես Հիսուսի հետ, և քո ձեռքին ուղղություն է տրվում Սուրբ Հոգու կողմից:

Գնա հիմա, զավակս, որ կատարես այս աշխատանքը, օգտագործելով հնարավոր բոլոր միջոցները մարդկության պատմության այս ամենակարևոր ժանամակաշրջանում:

Աստված օրհնի քեզ, զավակս:

Քո Սիրելի Մայրը Քրիստոով՝ Մարիամ, Երկրի Թագուհի

* տարբեր սրբերի պատկերներ, ովքեր հայտնվեցին տեսանողուհուն մասնավոր երևման ընթացքում, բայց նա սկզբում գաղափար չուներ, թե դրանք ովքեր էին, բացի նրանցից ում մասին նշվեց վերևում՝ սուրբ Հովհաննես Պողոս 11-ը, սուրբ Ֆաուստինան և սուրբ Հովսեփը, և այլ երկու չճանաչված պատկերներ:

Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսից Ստացված Առաջին Պատգամը

Ստացված երեքշաբթի 9 նոյեմբերի, 2010թ, առավոտյան ժ 3.00

Տես, ժամանակը մոտ է աշխարհին աելու, որ արդարադատությունը կիջնի բոլոր նրանց վրա, ովքեր մերժում են Ինձ: Իմ գթասրտությունը սահման չունի բոլոր նրանց համար, ովքեր հետևում են խաչի վրա Իմ տառապանքի ճշմարտությանը:

Ուրախություն Իմ բոլոր այն հետևորդներին, ովքեր մերժում են այն գայթակղությունները, որոնց դիմակայում են ամեն օր: Մյուսները, ովքեր իրենց մեջքն են դարձրել Իմ ուսուցումների հանդեպ, կույր են Իմ այն խոստումների հանդեպ, որոնք Ես տվեցի, երբ մահացա խաչի վրա նրանց մեղքերի համար:

Ես խորը ցավի մեջ եմ և լքված եմ զգում այն հրաժարումից, որ ստանում եմ Իմ սիրելի մեղավորների կողմից, որոնց համար տվեցի Իմ երկրային կյանքը:

Հիմա երկիրը խավարի մեջ է: Նրանք, Իմ հետևորդները մեծապես տառապում են Ինձ հետ, երբ ականատես են լինում մեղավորների աշխարհին, ովքեր ոչ միայն շրջել են իրենց մեջքն Աստծո՝ Իմ Հավիտենական Հոր հանդեպ, այլև Իմ հանդեպ, որ տառապեցի մեծ զոհաբերությամբ՝ փրկելու համար նրանց հավիտենական դատապարտումից:

Ես հուսահատ եմ և հիասթափության ու վշտի մեծ արցունքներ եմ հեղում այն բանի համար, թե ինչպես եմ մերժվում երկրորդ անգամ: Ես կոչ եմ անում Իմ հետևորդներին համախմբվել աշխարհում այս դժբախտության ժամին: Նրանք պետք է մի կողմ դնեն աղոթելու հանդեպ ունեցած իրենց անտարբերությունը և միանան Ինձ՝ օգնելու համար նրանց, ում հոգիները գողացված են Չարի կողմից::

Դեռևս ժամանակ կա մեղավորների ապաշխարության համար: Հեշտ ճանապարհ չկա: Այն պետք է լինի սրտից: Հավատացողներ, մի վախեցեք բարձրացնել ձեր ձայները միասնաբար՝ հայտարարելու համար այն սերը, որ Ես ունեմ բոլորի հանդեպ:

Քրիստոնյաներ, մուսուլմաններ, հինդուսներ, հրեաներ և մարդկության անկում ապրած մտքի հետևանքով առաջացած բոլոր հավատների ներկայացուցիչներ, Ես ձեզ բոլորիդ եմ կոչ անում, մի վերջին անգամ, որ բացեք ձեր աչքերը Աստծո ճշմարիտ խոսքի հանդեպ: Այն Աստծո, ով ուղարկեց ձեզ խոսքը մարգարեների միջոցով: Ճշմարտությունը գրվել և վավերացվել էր Սուրբ Գրքի խոսքում, որը ոչ մի մարդ չի կարող ուղղել, փոխել կամ փորձել շրջել իր սեփական մեկնաբանությամբ: Միայն մեկ Աստված կա: Ուստի ցած

դրեք ձեր զենքերը:, բացեք ձեր աչքերը և հետևեք Ինձ դեպի Հավիտենական Կյանք:

Ես ձեզ բոլորիդ այնքան շատ եմ սիրում, որ կյանքս տվեցի ձեզ համար: Մի՞թե մոռացել եք սա: Իմ **Աստվածային Գթասրտության** միջոցով Ես ձեզ բոլորիդ աղերսում եմ մի վերջին անգամ, որ ջրջվեք դեպի Ինձ: Իմ գթասրտությամբ Ես ետ եմ գալիս երկիր, որ փորձեմ և օգնեմ ձեզ նայել ձեր սրտերի մեջ և փնտրել ճշմարությունը: Թույլ մի տվեք Խաբեբային ոչնչացնել ձեզ: Փնտրեք ճշմարտությունը: Սերը՝ մաքուր սերը, ճանապարհն է դեպի Իմ Հոր Թագավորություն:

Խնդրում եմ, խնդրում եմ, հիշեք Իմ **Աստվածային Գթասրտությունը**: Ես սիրում եմ ձեզնից յուրաքանչյուրին և ամեն մեկիդ: Աղոթեք թողության համար հիմա: Վեր պահեք ձեր ձեռքերը և թույլ տվեք Ինձ առաջնորդել ձեզ դեպի Իմ Հոր Թագավորություն: Ես վերադառնում եմ երկիր ինչպես կանխասացվել է: Ժամանակն այնքան արագորեն է մոտենում, որ շատերը նախապատրաստված չեն լինի: Այնքան շատերը շոկի մեջ կլինեն և անգիտակից, որ չեն հավատա, թե դա տեղի է ունենում: Հիմա արդեն շատ ժամանակ չկա, որ Իմ մարգարեներն օգնեն մարդկությանը նախապատրաստվելու այս մեծ իրադարձությանը:

Հավատացողներ, Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ ուշ դարձնել Իմ նախազգուշացմանը: Տարածեք ճշմարտությունը: Կոչ արեք մարդկանց, որ խնդրեն Իմ գթասրտությունը: Ես ամեն ինչ կանեմ փրկելու համար յուրաքանչյուր հոգու, ով ճշմարիտ կապաշխարի նույնիսկ իր վերջին շնչում:

Ես չեմ կարող և չեմ միջամտի նրանց ազատ կամքին: Ես խնդրում եմ ձեզ լսել և ուշադրություն դարձնել Իմ խոսքին: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Ես խնդրում եմ ձեզ աղոթել դարձի համար նախքան **վերջին Ժամանակները**, որոնք արդեն վրա են հասնում: Ես ոչ մի ցանկություն չունեմ վախեցնելու Իմ հետևորդներին, բայց Ես հիմա ձեզ բոլորիդ խնդրում եմ փրկել հոգիներ: Դուք պետք է հիշեցնեք յուրաքանչյուրին, իրենց միտքը աշխարհիկ հետապնդումներից ազատելու հրատապության մասին: Դրա փոխարեն փնտրեք սուրբ խոնարհության արժանիքները, զուրկ եսասիրությունից և կռապաշտությունից:

Հասարակ մարդիկ պետք է բացեն ճանապարհը՝ տարածելու համար Իմ Երկրորդ Գալուստի մասին ճշմարտությունը:

Արագորեն ծավալվող հոգևոր խավարի պատճառով, որը տարածվում է **աթեիզմի և սատանայական պաշտամունքների ներթափանցմամբ** այսօրվա տխրահռչակ և անշնորհական աշխարհ, պարզ հոգիներն են, ճշմարիտ հավատացողները, ովքեր պետք է կատարեն այս առաջադրանքը:

Աղոթեք հիմա մարդկության փրկության համար մինչ աշխարհը հիմա գնում է դեպի այն **Մեծ Դժբախությունը**, որը կանխասացվել է Սուրբ Գրքում: Մարդկության սեփական ազատ կամքից կախված կլինի, արդյո՞ք նրանք նախապարտաստված կլինեն իրենց մեղքերի համար թողություն խնդրելու, թե ոչ: Նրանք երբեք չպետք է վախենան: Իմ սերը ամենաներող է:

Ձեր Փրկիչ Հիսուս Քրիստոս

Մարդկությունը կանգնած է Վերջնական Մաքրմանը Հանդիման

Ստացված հինգշաբթի 1նոյեմբերի 2010թ, առավոտյան ժ. 12.20

Այո, Իմ սիրելի աղջիկ, այդ Ես եմ: Ես և դու կաշխատենք կողք-կողքի նախապատրաստելու համար աշխարհին դիմակայել մարդկությանը սպասվող ժամանակների համար, մինչ երկիրը կկանգնի վերջնական մաքրագործման առջև:

Կարևոր է, որ այդ մաքրագործումը տեղի ունենա, քանի որ առանց դրա չի կարող լինել հավիտենական կյանք Իմ զավակների համար: Իմ բոլոր զավակները կկանգնեն դժվարությունների առջև, հատկապես Իմ հետևորդները, քանի որ սա այն մարտի մի մասն է, որը պետք է մղվի հոգիներ շահելու համար:

Հանգստացիր: Թող քո սիրտը զգա Իմ սերը, աղջիկս: Ընդունիր, դա մի ընծա է Իմ կողմից: Դու կզարմանաս, բայց Ես քո ընտանիքն եմ: Դու տանն ես Ինձ հետ, Իմ Թագավորությունում: Հիմա դու աշխատանք ունես անելու: Բռնիր Իմ ձեռքը և Ես կտանեմ քո միտքը, որ առաջնորդեմ քեզ ետ բերելու Իմ զավակներին դեպի Իմ Սուրբ Սիրտը: Հանգստացիր հիմա զավակս:

Ձեր Սիրող Հիսուս Քրիստոս: Ձեր Փրկիչ

Երկրորդ Պատգամը Կույս Մարիամից

Ստացված հինգշաբթի 11 նոյեմբերի 2010թ, առավոտյան ժ 12.20

Դու, Աստծո Իմ ուժեղ զավակ, հատուկ ես: Ես միշտ կաշխատեմ քեզ հետ, քանի որ դու տեսել ես կյանքի երկու կողմերն այստեղ՝ երկրի վրա: Դու, զավակս, պետք է հասկանաս, թե ինչի մասին է Աստծո գործը: Ես օրհնում եմ քեզ սիրելիս և շնորհակալություն եմ հայտնում:

Այո, Իմ քաղցր զավակ, քեզ տրվել են քո աշխատանքի համար անհրաժեշտ շնորհները: Այն պահին, երբ Սուրբ Հոգին մտնի քո հոգու մեջ, դու իսկապես պատրաստ կլինես աշխատելու:

Իմ անսահման սերը քո հանդեպ օր օրի քեզ ավելի կուժեղացնի: Խնդրում եմ մի անհանգստացիր, քանի որ դա բացասական հույզ է և քեզ միայն ետ կպահի: Ամեն օր աղոթիր Ինձ՝ քո Հավիտենական Մորը: Ես երբեք չեմ թողնի քեզ կամ չեմ լքի քո աշխատանքում: Քեզ, Իմ քաղցր զավակ, տրվել է մի շատ յուրահատուկ ընծա, և հիմա դու պետք է օգտագործես այն այնպես, ինչպես որ գիտես: Այո, զավակս, Ես հասկանում եմ, որ սա քեզ համար չափազանց վախեցնող է այս պահին: Միշտ վստահ եղիր, Ես քեզ հետ եմ քո ճամփորդության ամեն քայլափոխի: Խաղաղություն քեզ: Ես միշտ կբնակվեմ քո սրտի մեջ: Ես օրհնում եմ քեզ զավակս և շնորհակալ եմ, որ պատասխանեցիր:

Մարիամ, Խաղաղության և Հույսի Մայր

Մեղքերը Կոտրում են Իմ Սուրբ Սիրտը

Ստացված ուրբաթ 12 նոյեմբերի, 2010թ, առավոտյան ժ 3

Գրիր սա, աղջիկս: Ժամերը անցնում են: Մի անտեսիր Իմ խնդրանքը՝ հրապարակել Իմ Նախազգուշացումը մարդկությանը: Հիմա կարիք կա ապաշխարության: Իմ զավակները պետք է լսեն Իմ Նախազգուշացումը հիմա: Աղջիկս, հաղորդակցվիր քրիստոնյա խմբերի հետ, առաջին հերթին՝ հաղորդելու համար Իմ աղերսները:

Ուժեղ եղիր: Ես ընտրել եմ քեզ այս աշխատանքի համար, որ ազատագրման Իմ աղերսները արագորեն լսվեն: Գրիր այս գիրքը և տարածիր Իմ պատգամները օգտագործելով հաղորդակցության ժամանակակից միջոցները, ինչպես ինտերնետը և մասսայական լրատվությունը: Մինչ Իմ խնդրանքը անես, Ես կբռնեմ քո ձեռքը, որպեսզի կարողանաս հասկանալ պատգամը:

Դու ավելի ուժեղ ես, քան կարծում ես: Աղոթիր Ինձ ավելի շատ ամեն օր Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքը: Մի վախեցիր: Ինչու՞ Ես այդքան

վախեցած: Հավիտենական կյանքը, երբ Երկինքն ու Երկիրը միանան որպես մեկ, պետք է ողջունել: Դա այն է ինչին մարդը ձգտել է ժամանակի սկզբից ի վեր: Մի հիմարացիր այն գրավչությունից, ինչ երկիրն է առաջարկում: Նրանց կարևորությունը խամրում է, երբ համեմատում են Իմ Հոր Թագավորության ճոխության հետ: Քեզ օգնություն կուղարկվի հենց որ քո պլանը սկսի իրականանալ:

Վերջին մի քանի օրերը հոգնեցուցիչ էին քեզ համար, սակայն չնայած դրան, դու ընդունեցիր քո սրտի մեջ այն, ինչ Ես քեզնից խնդրում եմ: Դժվար է և գուցե մի քիչ վախեցնող քեզ համար այս ամենն ընդունելը, բայց կարևոր է որ դու վստահում ես Ինձ:

Պահիր Ինձ քո սրտի մեջ և հենվիր Ինձ վրա: Հանձնիր քո բոլոր կասկածները, և քո առաջադրանքն ավելի կհեշտանա: Դու պետք է մարդկանց հիշեցնես խոստումների մասին և ասես Իմ գրավոր խոսքը: Օգտվիր Սուրբ Գրքից, որ հասկանաս: Երբեք մի վախեցիր հիշեցնել մարդկանց, թե ինչպես են նրանց մեղքերը կոտրում Իմ Սուրբ Սիրտը և խոցում Իմ Հավիտենական Հոր հոգին:

Մենք, Իմ Մայրը, և բոլոր սրբերը, կբռնենք քո ձեռքը և քեզ զորություն կտանք: Քեզ պրակտիկ առաջանորդություն կտրվի, և դռներ կբացվեն օգնելու համար քեզ քո աշխատանքում:

Զգուշացիր նրանցից, ովքեր խոչընդոտներ կստեղծեն ուշացնելու համար քո հաղորդակցությունը: Աղոթիր նրանց համար և առաջ գնա: Ես գիտեմ որ հոգնած ես, բայց Իմ խնդրանքին պետք է արագ պատասխանել:

Հիմա ժամանակն է հանգստանալու զավակս: Դու լավ ես արձագանքում՝ հավառվ և արիությամբ: Երբեք տեղի չտաս:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Այս Գիրքը Կյանքեր Կփոխի և Հոգիներ Կփրկի

Ստացված ուրբաթ 12 նոյեմբերի 2010թ, ցերեկվա ժ 3.00

Առաջ գնա: Արա այն, ինչ պետք է արվի, որպեսզի մարդիկ տեսնեն և լսեն Իմ աստվածային պատգամները:

Ես վստահում եմ քեզ աղջիկս, օգտագործիր բոլոր միջոցները, որոնք կապահովեն որ մարդիկ կարդան այս պատգամները: Քեզ պետք է քո ողջ էներգիան այս գիրքը գրելու համար: Այս գիրքը կյանքեր կփոխի, հոգիներ կփրկի ինչպես կանխասացվել է: Այս գիրքը կանխասացվածն է: Գրողը դու ես: Ես եմ Հեղինակը:

Մի զարմացիր կամ հուզվիր, քանի որ սա բավականին սրբազան առաջադրանք է, և դու ընտրվել ես այն կատարելու համար Ինձ հետ: Քեզնից երեք ամիս կպահանջվի: Ես ցանկանում եմ, որ այն տպագրվի ողջ աշխարհով մեկ: Այն պետք է լինի մեծ, հզոր և փնտրվի միլիոնավորների կողմից՝ ճիշտ ինչպես Աստվածաշունչը:

Աղջիկս, դու կարող ես հրատարակել այսպես.<<Զրույց գաղտնի մարգարեի հետ>>: Լավ կլինի այդպես անել: Ինչու՞ ես վախենում, զավակս: Քեզ առաջնորդություն է տրվում Երկնքից: Դու պետք է ուժեղ մնաս: Վստահիր Ինձ: Հանձնվիր: Ես կբռնեմ քո ձեռքը քո ճանապարհի ամեն քայլի ժամանակ: Ես ավելի ուշ կխոսեմ քեզ հետ:

ՁԵր սիրող Փրկի Հիսուս Քրիստոս

Դժոխքի մասին նախազգուշացումը եւ դրախտի խոստումը

Ստացված Շաբաթ 13 Նոյեմբեր 2010թ, առավոտյան ժ 3.00

Իմ սիրելի աղջիկ, դու անցար մի սարսափելի հետապնդման միջով, որը Ես թույլ տվեցի, որպեսզի ազատեմ քո հոգին Դժոխքի տառապանքներից: Դու հիմա ազատ ես, և քո ոգին քեզ թույլ կտա տարածել Իմ խոսքը, որպեսզի մարդկությունը կարողանա ազատվել այն տառապանքից, որը սպասում է նրանց, եթե այնքան հիմար լինեն տեղի տալ Չարին:
Դու, աղջիկս, ճիշտ ուղղությամբ ես ուղարկվել սկզբից ի վեր: Ես քեզ անընդհատ ավելի ուժեղ եմ դարձնում սոսկ մի քանի օրվա ընթացքում: Ի՞նչ ես կարծում, ինչիսին կլինես մեկ շաբաթից, մեկ կամ երկու տարուց: Մի ռազմիկ, առնվազն, քաջ: Դու կաշխատես Ինձ հետ, որ մաքրես Իմ սիրելի զավակների հոգիները, որոնց հանդեպ Ես տածում եմ խորը և սիրող կարեկցանք: Սերը պտտվում է Իմ երակների միջով ինչպես մի գետ: Իմ կարեկցանքը երբեք չի նվազում չնայած այն բանին, որ նրանք շրջվում են մյուս կողմ:

Ես կփրկեմ նրանց դժոխքի տանջանքներից
Ասա նրանց, աղջիկս, որ Ես կփրկեմ նրանց դժոխքի տանջանքներից: Ինձ պետք է, որ նրանք շրջվեն դեպի Ինձ իրենց անուրախ խառը վիճակում: Միայն մեկ ճանապարհ կա դեպի սեր և խաղաղություն: Դա կլինի Իմ նոր դրախտի

մեջ, երբ Երկինքն ու Երկիրը կդանան մեկ: Մի՞թե նրանք սա չգիտեն: Նրանք երբեք չե՞ն լսել հին ժամանակների Իմ խոստումը: Հավիտենական կյանքի խոստումը, որտեղ նրանք, ողջ մարդկությունը, ովքեր կշրջվեն դեպի Ինձ, մարմնով, հոգով և մտքով վեր կբարձրացվեն նոր Երկիր և Երկինք, երբ նրանք մեկ անգամ ևս կհամախմբվեն որպես Իմ Հոր զավակներին այդքան վաղուց խոստացված Դրախտը:
Հավատացեք, խնդրում եմ ձեզ: Մտածեք, եթե երբևէ ձեզ չհայտնվեր Սուրբ Գրքի մասին: Հետո ձեզ տվեք այս պարզ հարցը: Եթե ձեր սրտերի մեջ սեր եք զգում, ի՞նչ եք կարծում որտեղից է այն գալիս: Այդ սերն է, որ ձեզ ստիպում է դառնալ քնքուշ, խոնարհ, ծարավի և ամեն եսասիրությունից ազատ: Եթե այդպես է, ուրեմն դա այն սերն է, որը Ես խոստանում եմ Իմ բոլոր զավակներին, ովքեր կշրջվեն դեպի Ինձ:

Ինչպես են աշխարհի նկրտումները ձեզ թողնում դատարկ
Ես գիտեմ, սիրելի զավակներ, որ դժվար է հավատալ սրանից տարբեր այլ աշխարհի, որ ապրում եք: Հիշեք, որ այս աշխարհը ստեղծվել է Աստծո՝ Հավիտենական Հոր կողմից: Հետո այն կեղտոտվեց Խաբեբայի գործերից: Նա, Սատանան, չափազանց խորամանկ է: Դուք, զավակներս, պետք է իմանաք, որ աշխարհիկ նկրտումները, որոնք դուք զգում եք, որ հնարավոր չէ հագեցնել, չեն բավարարում ձեզ: Դուք մի դատարկություն եք զգում , որը չեք կարող բացատրել կամ հասկանալ, այնպես չէ՞: Եվ հետո դուք ձգտում եք ավելի ու ավելի շատի: Բայց դուք դեռևս բավարարված չեք, երբ զում եք, որ պետք է բավարարված լինեիք: Ինչու՞ է այդպես: Նայե՞լ եք ձեր սրտի մեջ և հարցրել, թե ինչու: Ինչու՞ Պատասխանը շատ պարզ է:
Աստված ստեղծեց մարդկությունը: Մարդկությունը գայթակղվեց Սատանայի կողմից: Սատանան գոյություն ունի այս գեղեցիկ աշխարհում, որն Իմ Հավիտենական Հայրը ստեղծեց մաքուր սիրով: Տխուր է, բայց նա, Սատանան, գոյություն կունենա մինչև Իմ Երկրորդ Գալուստը: Այդ ժամանակ նա կերևա այն զուտ ստերի և խաբեության համար, որ ի ցույց է դրել Իմ զավակների մեջ: Այդ ժամանակ Իմ զավակներից շատերի համար չափազանց ուշ կլինի, ներառյալ նրանց, ովքեր վստահ չեն կամ տատնվում են հավատալ Իմ Հոր Թագավորության աստվածային գերագույն արարչությանը:

Մի մերժեք ինձ
Լսեք,. Ես, Հիսուս Քրիստոսը, Փրկիչը, որ ուղարկվեցի ձեզ բոլորիդ մի երկրորդ հնարավորություն տալու մտնել Իմ Հոր Արքայություն, լսեք հիմա Իմ խոստումը: Լսեք հիմա Իմ ձայնին, որ աստվածային շնորհով Իմ տեսանողների և մարգարեների միջոցով ուղարկված է ձեզ՝ այսօրվա աշխարհին և հասկացեք, որ Իմ բոլոր զավակները հավասար են Իմ Հոր Աչքում:
Նրանք, ովքեր հետևում են Նրան, օրհնյալ են, բայց տառապանք են կրում այն հոգիների համար, ովքեր չեն հավատում և ովքեր մերժում են լսել: Աստված

ստեղծեց աշխարհը: Այն չհայտնվեց ոչ մի տեղից: Մարդը չի հայտնագործել և չէր կարող հայտնագործել այսպիսի մի հրաշք, որը գիտությունը երբեք ի վիճակի չի լինի բացատրել: Աստվածային գերբնականը երբեք ճշմարտապես չի հասկացվի, մինչև Աստծո բոլոր զավակները մտքով, մարմնով և հոգով չխոնարհվեն այն մաքուր սիրուն, որը Ես առաջարկում եմ:

Սատանան իրական է

Մարդկությունը թույլ.է: Նույնիսկ հետևորդներից ամենասրբերն են դառնում Չարի մշտական գայթակղությունների զոհը: Խնդիրն այն է, որ նրանք, ովքեր հաճույք են փնտրում, չեն հավատում, որ նա իրական է: Մյուսները գիտեն, որ նա իրական է և գոյություն ունի: Սրանք նրանք են, ովքեր ամենից շատ են կոտրում Իմ սիրտը:

Վերքերը մեկ անգամ ևս բացվում են եւ թարախակալվում

Ես տառապում եմ այն աստիճան, որ Իմ սարսափելի խաչելության ժամանակ Ինձ հասցված վերքերը, որին Ես ենթարկվեցի, մեկ անգամ ևս բացվում են և թարախակալվում, թողնելով Ինձ մարմնի, հոգու և աստվածայնության առավելագույն չարչարանքի մեջ: Չնայած դրան, Ես երբեք չեմ դադարի ձեզ բոլորիդ սիրել:

Ես կանչում եմ Երկնքից և Իմ Հավիտենական Հոր Անունից, ով ձեզանից յուրաքանչյուրին ստեղծեց մաքուր սիրուց, որ ամուր կանգնեք: Մերժեք Սատանային: Հավատացեք, որ նա գյություն ունի: Ընդունեք, որ նա գոյություն ունի: Բացեք ձեր աչքերը: Մի՞թե չեք կարողանում տեսնել այն ավերածությունը, որը նա ստեղծում է ձեր կյանքում: Կու՞յր եք:

Պատգամ հարուստներին

Հարուստներին Ես ասում եմ. Կանգ առեք: Մտածեք և խնդրեք Աստծուն գոնե մի պահ: Ձեզ համար հաճելի՞ է ձեր պատվիրաններն ապրելու դերը: Դա ճի՞շտ է թվում: Դուք մերժե՞լ եք Ինձ երկրային հարստությունների գնով: Հենց այդ ծայրահեղություններն ու հաճույքները ձեր սիրտը դատարկ կթողնեն: Դուք կիմանաք ձեր սեփական սրտի մեջ, որ դա ճիշտ չի թվում: Սակայն դուք դեռևս կշարունակեք ավելի շատ ծարավի լինել Խաբեբայի կողմից ձեր հոգու դիմաց տրված դատարկ, բայց գրավիչ խոստումներին:

Պատգամ նրանց, ովքեր հետևում են լուսավորվածներին (***the Illuminati***)

Ես աղերսում եմ ձեզ բոլորիդ, հատկապես Իմ զավակներին, ում ներգրավել են լուսավորվածների և այլ նմանատիպ չար խմբերի մեջ: Քանի որ այդտեղ եք, դուք դատապարտված եք հավիտենական նզովքի: Մի՞թե չեք հասկանում, որ ձեր հոգու փոխարեն ձեզ սուտ են խոստացել: Մի նենգ ու սարսափելի սուտ: Դուք երբեք չեք ստանա դժոխքի խորքերից ելած այդ չար պատգամատարի

կողմից խոստացված ընծաները: Որպես խաչի վրա ձեր Փրկիչ, Ես իմ կյանքը տվեցի ձեզ փրկելու համար: Խնդրում եմ, թույլ մի տվեք, որ Ես կորցնեմ ձեզ հիմա: Ես սիրում եմ ձեզ զավակներս: Ես ողբում եմ, մի վերջին անգամ աղերսում եմ ձեզ չմերժել Ինձ հանուն Խաբեբայի:

Ես կներեմ բոլոր նրանց, ովքեր կխոստովանեն (իրենց մեղքերը)
Ես չեմ կարող միջամտել ձեր ազատ կամքին, քանի որ սա այն ընծաներից մեկն է, որ տրվել է ձեզ, երբ դուք ծնվել եք Աստծո լույսի մեջ: Ես կգամ, ինչպես Սուրբ Գրքերն են նախապես ասել, շատ շուտով, ավելի շուտ, քան կարող եք պատկերացնել: Աշխարհը կընկղմվի խավարի և հուսահատության մեջ: Սակայն Ես կներեմ Իմ բոլոր զավակներին և նրանցից ամեն մեկին, երբ խոստովանության պահին, անմիջապես նրանց բացահայտվեն իրենց մեղքերը, անկախ նրանից, թե որքան ծանր են այդ մեղքերը: Նրանք մարմնով և հոգով կմտնեն Դրախտ, երբ Երկինքն ու Երկիրը կդառնան մեկ, ուր դուք բոլորդ կապրեք ձեր ընտանիքի հետ հավիտյան:

Խոստումներ, որ Դրախտն է առաջարկում
Ոչ մի հիվանդություն, մարմնի քայքայում, ոչ մի մեղք, միայն սեր. Սա է դրախտի Իմ խոստումը: Յուրաքանչյուրը կապրի ներդաշնակության, ուրախություն եւ սիրո մեջ:

Դժոխքի իրական լինելը
Մի մերժեք այս կյանքը հանուն այն կյանքի, որ խոստացել է Սատանան: Նա խաբում է ձեզ: Եթե հետևեք այդ ճանապարհին, որտեղ Աստված կամ Ես՝ Հիսուս Քրիստոսը՝ ձեր Փրկիչը մաս չենք կազմում, ուրեմն դուք հավիտենական դատապարտության ճանապարհին եք: Դուք սարսափից կճչաք, երբ հասկանաք սխալը: Այդ ժամանակ գթասրտություն կաղերսեք: Դուք կպոկեք ձեր երեսը, կքաշեք ձեր մազերը: Բայց քանի որ դուք ունեք ազատ կամք՝ Իմ Հոր կողմից տրված մի ընծա, այն չի կարող վերցվել ձեզնից: Երբ հետևեք այդ կեղծ ճանապարհին, անեծքի կդատապարտվեք և կայրվեք դժոխքում ընդմիշտ: Այն շատ իրական է: Ամենամեծ դատապարտումն այն է, երբ վերջապես հասկանում են, որ գոյություն ունի Աստված: Որ Ես՝ ձեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը, իսկապես գոյություն ունեմ: Եվ այդ էտապում արդեն ոչ մի ճանապարհ չի լինի, որ փրկեք ինքներդ ձեզ:

Ամենամեծ դատապարտությունն այն է, երբ իմանաք, որ երբեք չեք տեսնելու Աստծո Դեմքը
Ձեր ընտանիքը կնայի ձեզ մյուս կողմից: Երբ դա կատարվի, և դուք հասկանաք սարսափելի ճշմարտությունը, արդեն չափազանց ուշ կլինի: Հիշեք այս խոսքերը: Ամենամեծ դատապարտությունն այն է, երբ կիմանաք, որ երբեք չեք տեսնելու Աստծո դեմքը: Դա կլինի ամենամեծ տառապանքը և այն, որն

ընդմիշտ կմնա ձեզ հետ դժոխքի կրակների մեջ, ուր ցավը մշտական է և չթուլացող: Դուք, ձեզ խոստացված Դրախտը վայելելու փոխարեն, Խաբեբայի ստերի միջոցով, կավարտեք Դժոխքի սարսափազդու միջանցքներում: Դա շատ իրական է և ներկայացնում է հավիտենական տառապանքը:
Խնդրում եմ, դուք բոլորդ, որ չեք հավատում, Ես հաղորդակցվում եմ մարդկության հետ: Ես խնդրում եմ, որ աղոթեք Իմ Սուրբ Սրտին: Աղոթեք Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքն ամեն օր (ցերեկվա) ժամը 3-ին: Ես կպատասխանեմ ձեր խնդրանքին մի սիրով, որը դուք անմիջապես կզգաք: Բռնեք Իմ ձեռքը, զավակներս: Բաց մի թողեք: Ես ձեզ այնքան եմ սիրում, որ Իմ կյանքը տվեցի ձեզանից ամեն մեկի և յուրաքանչյուրիդ համար, որպեսզի կարողանաք փրկվել:
Այս անգամ Ես գալիս եմ դատելու: Որքան էլ Ես ձեզ շատ եմ սիրում, Ես չեմ կարող միջամտել ազատ կամքի ընծային, որը հեղվել է ձեզ վրա Իմ սիրելի Հոր կողմից: Ես հույս ունեմ, որ իմ ժամանակակից տեսանողների և մարգարեների միջոցով դուք վերջապես կլսեք: Ճշմարտությունը ճանապարհն է՝ հիշեցնելու հավիտենական փրկությունը և նոր սկիզբը, երբ Դրախտը կվերադառնա Երկիր:

Սատանայի ստերը
Ստերը, անկախ նրանից թե որքան հանգստացնող են, պարզապես ստեր են: Ստեր, որոնք նախատեսված են գողանալու համար սիրելի հոգիներ, որոնք չեն կարող ազատվել Իմ Հոր՝ Երկրի Արարչի և Ստեղծողի կողմից: Ձեր աստվածային Փրկիչ Հիսուս Քրիստոս

Վերջին Ժամանակների Նշանը – Բայց Փառքը Կվերադառնա Երկիր

Ստացված կիրակի 14 նոյեմբերի, 2010թ երեկոյան ժ11

Իմ սիրելի աղջիկ, քեզ մեղավոր մի զգա այն կասկածների համար, որոնք այսօր զգացիր: Դա բնական է: Հոգևոր հարցերի քո հասկացողությունն անքան ուժեղ չէ, որքան պետք է լինի, բայց դա կարևոր չէ:

Ես կառաջնորդեմ քեզ և ժամանակի ընթացքում դու կհասկանաս, քո առաքելության նպատակը: Ինձ պետք է որ դու ուժեղ մնաս քո աշխատանքում և Իմ հանդեպ քո հնազանդության մեջ: Սա դժվար առաջադրանք է և հոգեպես

սպառիչ քեզ համար: Ես քեզ մոտ եմ ուղարկում մի հոգևոր առաջնորդի, որ օգնի քեզ գլուխ հանել այն հսկայական առաջադրանքից, որը պետք է կատարվի: Սա է այն առաջադրանքը. Որ առանց այս աշխատանքի ավելի շատ հոգիներ կորստյան կմատնվեն Չարի կողմից: Աղջիկս, դու նվիրվել էիր այս առաջադրանքին, նախքան Ես քեզ կկանչեի սրա համար:

Ես ուղղություն եմ տալիս քո հոգևոր առաջնորդին: Նա կճանաչի ճշմարտությունը, երբ դու խոսես: Մինչև այժմ վերջին երկու օրվա ընթացքում դու տեսել ես մարդկության մեղքերից միայն մի քանիսը այն ձևով, որը քեզ համար մինչ այժմ հնարավոր չէր եղել տեսնել: Տեսնու՞մ ես տարբերությունը: Քեզ տարօրինակ չե՞ս զգում, երբ նայում ես Իմ զավակներին: Դու նրանց այլ լույսի տակ տեսար, այնպես չէ՞ Դա է Սուրբ Հոգու զորությունը, որով Ես քեզ օրհնել եմ:

Այն սերը, որ դու զգացիր Իմ զավակների հանդեպ, և քահանային, որ այսօր տեսար Պատարագի ժամանակ, նույնպես մի ընծա է, որը Ես քեզ տվեցի Սուրբ Հոգու զորությամբ: Դու հիմա կտեսնես, կզգաս և կլսես մարդկության մեղքերը այն աստիճանի, որ կզգաս այն ցավը, որը Ես եմ զգում: Դու նաև կտեսնես այն սերը, որ Ես ունեմ Իմ զավակների հանդեպ քո աչքերով, որոնք արտացոլում են Իմ սիրտը:

Մի վախեցիր այս ընծաներից, զավակս,: Մի մտածիր, որ չես կարողանա կատարել այս առաջադրանքը, որովհետև քեզ զորություն կտրվի Իմ շնորհների միջոցով, որոնք քեզ այնքան կհզորացնեն, որ երբեք ետ չես նայի: Ոչ էլ կցանկանաս ետ նայել:

Հիմա դու թույլ ես զգում: Սա Իմ Աստվածային ուժի զգացողությունն է, որը կտրելով ներս է մտնում քո մարմնի մեջ: Ջերմությունը այն սերն է, որը Ես զգում եմ քո հանդեպ: Մի լացիր, զավակս, Մինչ այժմ դու չափազանց ուժեղ ես եղել և այնքան ընդունող, չնայած ընդամենը մի քանի օր է, ինչ Ես խոսում եմ քեզ հետ: Ոչ, զավակս, դու չես երևակայում սա: Դու շարունակում ես քննել ինքդ քեզ և քեզ շրջապատողներին:

<u>Նրանց, ովքեր վաճառում են իրենց հոգիները Սատանային</u>
Հիմա գրիր սա. Աշխարհը հևում է խավարի և Չարի կողմից նյութվող չարիքի ծանրությունից, որ շարունակում է ցածրացնել և լռեցնել Իմ սիրելի զավակներին: Նրանք այնպես են թակարդն ընկել, որ նրանցից շատերը կենդանիների նման կծկվում եմ մարդկանցից: Մոլուցքով, ագահությամբ և սնափառությամբ սնված որքան խեղճ հոգիներ են այդպիսի խղճալի տեսքով երևում նրանց, ովքեր հավատ ունեն: Նրանք, իրենց սնափառության մեջ, հավատացած են, որ իսկական զորություն ունեն: Սատանայի կողմից իրենց

խոստացված զորությունը: Այս զավակներից շատերն ընտրել են ծախել իրենց հոգիները և հպարտորեն պարծենում են այդ փաստով:

Իմ զավակներից ավելի շատերն են հրապուրվում նրա խոստումների փայլով ու գանձերով, որ ողջ աշխարհը տեսնի: Ոչ, նրանք չեն ամաչում պարծենալ այն մասին որ իրենց նրան (սատանային) են պատկանում: Նրա տված խոստումները սոսկ ստեր չեն, այդ խոստումները տրվել են զուտ մարդկության հանդեպ տածած ատելությունից: Սատանան ատում է մարդկությանը:

Նա ստում է Իմ զավակներին և ասում նրանց, որ ինքը կարող է տալ նրանց ամեն ինչ, տխուր է, բայդ դա սուտ է: նրանք, ովքեր հետևում են նրան և նրա դատարկ խոստումներին, չեն փրկվի և չեն կարող փրկվել:

Աղոթիր, աղոթիր, աղոթիր Իմ զավակների համար, աղջիկս: Գիտեմ, որ հոգնած ես, բայց ուշադրություն դարձրու սրան: Այն հավատացյալները ովքեր գաղջ են և ուղղակիորեն չեն դաշնակցում Չարի հետ, նրանք նույնպես պետք է զգուշանան: Նրանք, ներառյալ Իմ հետևորդները և Իմ նվիրյալ ծառաներից ոմանք, եպիսկոպոսներ և կարդինալներ, ծաղրում են Իմ զավակների հավատը: Նրանց հոգևորականությունը կորել է որոշ մասերում ագահության տակ թաքնված, ուր ոսկին ու հարստությունը դիմակավորում են այն Աստվածային Ընծաները, որոնք տրվել են նրանց որպես Աստծո աշակերտներ:

Եկեղեցին կորցրել է իր ճանապարհը և ընկղմվել խավարի մեջ: Սա, զավակս, կանխասացվել է և Վերջին Ժամանակների նշան է: Երբ վերջին Պապը կհեռանա և աշխարհը կընկղմվի Կեղծ Մարգարեի սխալ ուղղության ազդեցության տակ:

Հայտնություններ, թե ինչ կնախորդի Իմ Երկրորդ Գալուստին, կտրվեն քեզ, զավակս, այնպես որ քո ձայնը լսվի և որպեսզի հոգիները նախապատրաստվեն նախքան Մեծ Նախազգուշացումը: Մի անհանգստացիր: Կյանքը կշարունակվի: Փառքը կվերադառնա երկիր: Իմ զավակները կազատվեն Չարի ճանկերից, որը կոչնչացվի: Կարևոր է, որ նա, իր խաբեության միջոցով Իմ զավակներին իր հետ Դժոխքի խորքերը չտանի:

Իմ խոսքը պետք է ուժեղ լինի: Իմ զավակները պետք է լսեն: Մաքուր սիրուց ելնելով է, որ Ես տալիս եմ նրանց այս Նախազգուշացումը: Քանի որ Ես գալիս եմ որպես դատավոր, այլ ոչ թե փրկիչ: Իմ Սիրելի Մոր և ողջ աշխարհում Իմ հետևորդների աղոթքների միջոցով է, որ անցյալում Դատասանի օրը հետաձգվել է: Այս անգամ դա չի լինի:

Ոչ մեկը չի իմանա Երկրորդ Գալուստի օրը
Քեզ չի ասվի այդ օրը, ոչ էլ Իմ զավակներին: Այն չի կարող բացահայտվել Ահա թե ինչու կարևոր է, որ Իմ զավակները նախապատրաստված լինեն: նրանք, ովքեր նախապատրաստված չեն լինի, չեն կարող ասել, որ իրենց չի տրվել ճշմարտությունը: Երբ Նախազգուշացումը տեղի ունենա, նրանք կհասկանան ճշմարտությունը: Այո, եթե նրանք խոստովանեն և ընդունեն իրենց մեղքերը, նրանք կստանան Իմ Օրհնությունը; Եթե ոչ, ապա կնետվեն Դժոխք: Իմ Գթասրտությունը սպառված կլինի նրանց համար:

Գնա հիմա, զավակս: Պատրաստիր խոսքը, որը աշխարհը պետք է լսի: Ասա Իմ զավակներին, հավատացողներին, որ չվախենան: Ասա նրանց որ աղոթեն չհավատացողների համար: Հետո ասա չհավատացողներին, որ ետ շրջվեն դեպի Ինձ: Արա ամեն հնարավոր բան, որ բացեն իրենց սրտերը:

Ձեր Փրկիչ Հիսուս Քրիստոս ով գալիս է դատելու կենդանիներին և մեռածներին

Երկրորդ Գալուստը

Ստացված երկուշաբթի 15 նոյեմբերի 2010թ, առավոտյան ժ 3.00

Շնորհակալ եմ աղջիկս, Իմ ճշմարտության մեջ հարատևելու և հասկանալու համար, որ Ես իսկապես հաղորդակցվում եմ քեզ հետ: Դու կզգաս Իմ հոգին քո մարմնի մեջ, երբ ես գամ քեզ բացահայտելու Իմ Աստվածային Պատգամը՝ անհրաժեշտ մարդկությանը, որ հասկանա այս ժամանակներում: Ես բերում եմ մաքուր սիրո և կարեկցանքի պատգամ Իմ Հոր զավակներին: Այս պատգամները նրա համար են, որ բացատրեն Աստծո բոլոր հետևորդներին առաջինը՝ հիմա ծնկի գալու կարիքը, և **Հովհաննու Գրքի ճշմարտությունը:**

Իմ **Երկրորդ Գալուստի** ժամանակը եկել է, որի նշաններն արդեն բացահայտվում են նրանց, ովքեր գիտեն անքան վաղուց կանխասացված մարգարեությունները: Նայիր, ի՞նչ ես տեսնում հիմա: Մարդը չի հասկանում այն սարսափելի անկումը, որին վտանգված է ինքը: Չարերը ստում են, պաշտպանվում և ընդունվում ոչինչ չկասկածող կառավարությունների կողմից, թաքնվում փրկության դիմակի տակ առանց նկատվելու:

Լսեք Ինձ հիմա, զավակներս, **Հակաքրիստոսը պատրաստ է դուրս գալու: Զգուշացեք,** բացեք ձեր աչքերն ու սիրտը ճշմարտության հանեպ, այլապես կոչնչանաք: Մի վախեցեք Իմ սիրելի հետևորդներ, քանի որ դուք կառաջնորդեք

Իմ հոտը դեպի Իմ Հավիտենական Հոր Սուրբ Պաշտամունք: Կյանքի սնունդը լի կլինի հատավացողների համար առջևում սպասվող խավար օրերի ընթացքում: Մնացեք միասին, սիրեք մեկդ մյուսին: Տվեք մեկդ մյուսին ուժ, որ կարողանաք միավորել բոլոր ռասաները, հավատամքներն ու հավատացողներին ամենուրեք դեպի Իմ Հոր Թագավորություն:

> Ձեր գործը կլինի ցուցադրել Աստծո սերը, բարությունը, սերը, հույսը և Հավիտենական Կյանքի ճշմարտությունը, որը սպասում է ողջ մարդկությանը: **Միասին աղոթելու, հպարտության և երկչոտության ձեր արտաքին պատը քանդելու միջոցով** դուք կդառնաք հզոր ուժ: Միասին դուք ուժեղ կլինեք; Իմ՝ ձեր Աստվածային Փրկչի հանդեպ ունեցած ձեր հավատը կօգնի դարձի բերելու չհավատացողներին: Այդ մարդկանց, որոնցից շատերը ոչ իրենց մեղքով անտեղյակ են Իմ սիրուն: Նրանք սեր կզգան մեկը մյուսի հանդեպ, բայց չեն հասկանա, թե որտեղից է դա գալիս: Առաջնորդեք նրանց, Աստծո Իմ զավակներ, դեպի լույսը:

Ես Հացն եմ և Ես Լույսն եմ: Իմ լույսը ձեզ բոլորիդ ապահով կպահի: Բայց Ես կոչ եմ անում ձեզ առատաձեռն լինել սրտով և հոգով և մտածել այն խեղճ հոգիների մասին, ովքեր առաջնորդության կարիք ունեն: Դուք դա պետք է անեք օրինակի միջոցով և ցույց տաք այդ հոգիներին, թե ինչպես ավելի մոտ դառնան Ինձ: Նրանց պետք է քնքշորեն փայփայել, բայց հաստատուն ձևով տանել: Կարևոր է նրանց արթնացնել անգիտության իրենց թմիրից նախքան չափազանց ուշ կլինի:

Զավակներս, մի՞թե չեք հասկանում Իմ Հոր Գրքի միջի ուսուցումները: Գիրքը, որը բացահայտում է Իմ երկիր ետ գալու նշանը, պետք է ուսումնասիրվի և ճշմարտությունը ընդունվի: Աստված, Իմ Հավիտենական Հայրը, չի ստում Իր մարգարեների միջոցով: Նա չի հակասում: Հիմա ձեզ ցույց են տրվում կանխասացված երկնային նշաները, և դուք պետք է նախապատրաստվեք հիմա:

Դուք և ձեր ընտանիքները Ինձ հետ վեր կբարձրացվեք մի աչք թարթելու ընթացքում

Խնդրում եմ, խնդրում եմ, աղոթել առաջնորդության համար: Հավատացողներ, հիմա պատրաստ եղեք կռվել Իմ անվամբ և կանգնել Հակաքրիստոսի դեմ: Մարդիկ կժպտան ձեզ, երբ նրանց հիշեցնեք Հովհաննու Գրքի մարգարեությունների մասին: Ձեզ կմեղադրեն և զարմանքով կհանդիմանեն՝ ձեր ունեցած հայացքների և մտահոգությունների համար: Արհամարհեք դա, քանի որ հիմա դուք պարտականություն ունեք Իմ հանդեպ: Աղոթեք, աղոթեք և զգուշությամբ բերեք չհավատացողներին, որ ընդունեն ուսուցումները: Մի վախեցեք: Ձեզանից շատերին, ովքեր վախենում են իրենց և իրենց

ընտանիքների ապագայի համար, Ես կասեմ հետևյալը. Երբ ժամանակը գա, դուք և ձեր ընտանիքները վեր կբարձրացվեք Ինձ հետ, մի աչք թարթելու ընթացքում, դեպի Երկինք: Հետո դուք կստանաք Հավիտենական կյանքի ընծան, երբ Երկինքն ու Երկիրը դառնան մեկ: Սա այն է, ինչ ի նկատի ունեն ասելով Նոր Դրախտ: Այն կլինի մեծ փառքի, սիրո և կատարելության մի ժամանակ Իմ բոլոր հետևորդների համար:

Ուժեղ մնացեք: Դուք պետք է դիմանաք տառապանքի մի կարճ ժամանակահատվածի: Բայց ձեր հավատը ձեզ ուժեղ կպահի: Հիշեք, որ Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Սիրեք Ինձ ի պատասխան և օգնեք Ինձ փրկել որքան հնարավոր է շատ հոգիների:

Դուք Իմ հզոր բանակն եք, և հիմա ժամանակն է նախապատրաստվելու մարտի համար: Ես ձեզ բոլորիդ կառաջնորդեմ դեպի Իմ Հոր Թագավորություն:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Գլոբալ իշխանություն, Հակաքրիստոսը եւ Գազանի Նշանը

Ստացված Երկուշաբթի 15 Նոյեմբեր 2010 թ, առավոտյան ժ11

Հիմա դու հասկանում ես ճշմարտությունը և ընդունում ես Իմ պատգամը այնպես, ինչպես որ կա: Գրիր սա աղջիկս: Բոլորի համար ակնհայտ է դառնում այն արագությունը որով այժմ կատարվում են մարգարեությունները: Նայեք այն փոփոխությանը, որը կկատարվի Իմ Եկեղեցու հետ, որպես առաջին նշանը: Այդ ժամանակ Խաբեբան կմոլորեցնի Իմ աշակերտներին: Երկրորդ նշանը կլինի այն, որ ձեզանից շատերն արդեն վերահսկողություն չեն ունենա իրենց սեփական երկրի նկատմամբ: Սա ներառում է նյութական և զինված ուժերի վերահսկողությունը: Զավակներս, երկրների առաջնորդները և բոլոր նրանք ովքեր պատասխանատու են իրենց ժողովրդի համար հոգ տանելու, կկորցնեն ողջ վերահսկողությունը: Նրանք կլինեն ինչպես նավակներ առանց ղեկի: Անօգուտ կլինի այդ նավը վարել, և նրանք կկործանվեն: Զավակներս, հիմա դուք պետք է շատ աղոթեք՝ թուլացնելու համար այն բռնությունը, որը մարդկանց այդ չար խմբերը կգործադրեն ձեզ վրա: Նրանք Աստծո Թագավորությունից չեն, և նրանց արտաքին խաբուսիկ տեսքից դուք չեք հասկանա, որ դա մի հզոր ուժ է, որը զգուշանում է բացահատվելուց: Դուք զավակներս, ավելի խելացի չեք լինի: Դուք կմտածեք, թե ապրում եք դժվար ժամանակներում, բայց այդ ճակատը նախագծվել է, որ ստիպված լինեք այդպես մտածել: Բարձրացեք հիմա, զավակներս:

Գազանի Նշանը

Մի ընդունեք Նշանը: Եթե ձեզանից ավելի շատերը չընդունեն , այդ դեպքում թվով ավելի ուժեղ կլինեք: Այս Նշանը, Գազանի նշանը, կլինի ձեր անկումը: Դա այն չէ, ինչ թվում է: Համաձայնվելով, դուք ավելի ու ավելի կհեռանաք: Զգուշացեք Խաբեբայի այն Ծրագրից, որը կհեռացնի Իմ Հավիտենական Հոր բոլոր նշանները և Սուրբ Գրքերի ուսուցումները ձեր կյանքից: Դուք դա կտեսնեք դպրոցներում, քոլեջներում, հիվանդանոցներում և ձեր երկրների սահմանադրություններում: Ամենամեծ պղծությունը, որն առաջ է բերում խորը ցավ Ինձ մոտ, Սուրբ Գրքերի ուսուցումների ոչնչացումն է նրանց համար, ովքեր պաշտամունք են տածում Իմ՝ ձեր Աստվածային Փրկչի հանդեպ: Շատ շուտով կտեսնեք, որ Իմ խոսքը և ճշմարտության ուսուցումը կոչնչացվեն և կպատժվեն:

Դուք, Իմ սիրելի զավակներ, մեծապես կտառապեք հանուն Ինձ: Այդ չար ուժերը պատասխանատու են դրա համար: Նրանց առաջնորդում է Սատանան: Նրանք կլինեն ամենուր, հատկապես այն ղեկավար պաշտոնյաների մեջ, ումից կախված է ձեր գոյությունը: Զավակներս, չվախենաք ձեզ համար: Ավելի շուտ վախեցեք այդ խեղճ մոլորված հոգիների համար, այնքան թունավորված են նրանք Խաբեբայի կողմից, որ նրանց համար դժվար է դուրս պրծնել: Ահա թե ինչպես են նրանք բռնված: Այդ մարդկանց պետք չէ վստահել: Զգույշ եղեք նրանց հետ հաղորդակցվելիս: Նրանք կպահեն ձեզ թունավոր կապանքի մեջ, որովհետև ամեն ինչի վրա վերահսկողություն կունենան: Ձեզ համար դժվար կլինի կռվել նրանց հետ, որովհետև նրանք կվերահսկեն նույնիսկ ձեր բանկը, ձեր սեփականությունը, ձեր հարկերը և սնունդը, որի կարքն ունեք գոյատևելու համար:

Բայս սա երկար չի տևի, քանի որ նրանց օրերը հաշված են: Եթե նրանք իրենց ստրկությամբ կենթարկվեն չարին, ապա կմխրճվեն սարսափի մի այնպիսի անդունդի մեջ, որ նրանց ճակատագիրը նկարագրելը կլիներ այնքան ահարկու և սարսափելի, որ մարդ քարի պես կընկներ կմեռներ, եթե նույնիսկ մի պահ տեսներ այն տառապանքը, որը նրանք կրելու են:

Մարտը մոտ է սկսվելուն և իրականանալուն, երբ Իմ Հավիտենական Հոր ձեռքն արագորեն կիջնի նրանց մեղքերը պատժելու համար, որին շուտով երկրի վրա ականատես կլինեն: Այն մեղքերի, որոնց համար Ես մահացա: Ոչ մի մարդ Աստծո զավակը չէ, եթե նա հարում է կամ մտնում է այդ ավերող, բայց կանոնավոր բանակի մեջ: Այդ չար բանակը, լցված Դժոխքի փոսերի միջից դուրս եկած չարքերով, կատարում են այնպիսի մեծ ուժգնության չար գործեր, որ անմեղ մարդիկ չեն կարող նույնիսկ պատկերացնել:

Ես ցանկություն չունեմ վախեցնելու Իմզավակներին, բայց ժամանակի ընթացքում ճշմարտությունը կերևա այնպես, ինչպես է: Վեր կացեք հիմա, զավակներս: Կռվեք չարի ուժերի դեմ նախքան նրանք կոչնչացնեն ձեզ: Զզգուշացեք ցանկացած տեսքի, ձևի, չափսի, կոդի տեսքով Գլոբալ

կառավարումից: Ուշադրությամբ հետևեք ձեր առաջնորդներին և նրանց, ովքեր վերահսկում են փող ստանալու ձեր ամենօրյա հնարվորությունները, որով կսնվեք և կպահպանեք ձեր կյանքը: Հիմա դուք պետք է ուտելիք պահեստավորեք:
Այս պատգամը ձեզ չտրվեց այն ձևով, որն արտացոլում է Իմ ուսուցումները: Բայց լսեք Ինձ հիմա: Այս մարգարեությունները կանխասացվել են: Իմ զավակները պետք է ուշադրությամբ լսեն: Խավարի ոգին աճում է, իսկ դուք, Իմ հետևորդներ, պետք է ուժեղ մնաք: Կենդանի պահեք ձեր հավատն Իմ հանդեպ աղոթքի միջոցով: Իմ բոլոր հետևորդները պետք է ամեն օր ասեն **Աստվածային Գթասրտության** աղոթքը: Այն կհզորացնի հոգիները և կօգնի նրանց շնորհ գտնել մահվան պահին:
Զավակներս, խնդրում եմ, թող Իմ պատգամը չվախեցնի ձեզ: Հիմա Իմ հետևորդները պարտականություն ունեն Իմ հանդեպ: Թույլ տվեք Ինձ ասել սա: Հիշեք, որ դուք կլցվեք Իմ Սուրբ Հոգով հենց որ ընդունեք Իմ խոսքը: Մի վախեցեք, որովհետև դուք ընտվել եք: Դուք, Իմ հետևորդների բանակ, պարտության կտանեք Չարին: Դա անելու համար դուք պետք է աղոթեք:
Ես գալիս եմ մաքուր սիրո պատգամով: Միթե չեք հասկանում, որ կզգաք Դրախտը, երբ Երկինքն ու Երկիրը միանան որպես մեկ: Վախենալու կարիք չկա, Իմ հետևորդներ, քանի որ դուք վեր կբարձրացվեք մարմնով, հոգով և մտքով Աստվածային Հիերարխիայի (ստորակարգություն) ոլորտներ: Դուք կտեսնեք ձեր սիրելիներին: Այն սիրելիներին, ովքեր գտել են Իմ Հավիտենական Հոր բարեհաճությունը:
Արեք այնպես, ինչպես Ես ասում եմ: Աղոթեք, խոսեք Ինձ հետ, սիրեք Ինձ, վստահեք Ինձ: Ի պատասխան Ես ձեզ զորություն կտամ: Աղոթեք պաշտպանության համար **Ամենասուրբ Վարդարանի** աղոթքն ասելու միջոցով, որը ձեզ է տրվել օրհնություններով Իմ սիրելի Մոր կողմից: Այս աղոթքը պետք է ասել, որ պաշտպանեք ձեզ չարից: Մյուս կողմից, դուք պետք է պաշտպանություն խնդրեք նրանց համար, ում հետ դուք շփվում եք, որպեսզի նրանք չկարողանան թունավորել ձեզ կամ թուլացնել այն հավատը, որը դուք ունեք ձեր սրտերի մեջ Իմ հանդեպ:
Աղոթեք Իմ տեսանողների և մարգարեների համար, որպեսզի նրանք պաշտպանված լինեն: Աղոթեք Իմ սիրելի նվիրյալ ծառաների համար, այն սուրբ նվիրված ծառաների, ում Ես դրել եմ, որ ձեզ ուղղություն տան: Նրանք, ճիշտ ինչպես Իմ հետևորդները, տառապանքներ են կրում Չարի կողմից: Նա երբեք չի դադարի փորձել կուրացնելու ձեզ ճշմարտությունից և կօգտագործի ամեն մի դիվական տակտիկա ձեզ համոզելու, որ ձեր հավատը կեղծ է:Լսեք Ինձ: Նա, Խաբեբան, կօգտագործի լոգիկան և բանականությունը, ծածկված նուրբ ձևով, որ համոզի ձեզ, թե հույս է բերում ձեր կյանքի մեջ: Նա Հակաքրիստոսի միջոցով կպայքարի հավաստիացնել ձեզ, որ Ընտրյալն է:

Հակաքրիստոսը
Իմ հետևորդներից շատերը կընկնեն այդ խաբեության ծուղակի մեջ: Զգույշ եղեք: Նա կերևա որպես սիրո, խաղաղության և աշխարհում ներդաշնակության պատգամատար: Մարդիկ ծնկի կգան և կպաշտեն նրան: Նա ձեզ ցույց կտա իր ուժը, իսկ դուք կհավատաք, թե այն Աստվածային ակունքից է: Բայց դա այնդպես չէ: Նա կսովորեցնի ձեզ այնպիսի ձևով, որը ձեզ երբեմն տարօրինակ կթվա: Շճմարիտ հավատացողները կիմանան, որ նա լույսը չէ: Նրա պարծենկոտ, փքուն վարքի ետևում թաքնված կլինի չարը: Նա նեցուկ կկանգնի և կձևացնի, թե իսկապես կարեկցանք և սեր է ցույց տալիս բոլորի հանդեպ: Այս ֆասադի ետևում նա ատելությամբ է լցված ձեր բոլորիդ հանդեպ, սիրելի զավակներս: Նա ծիծաղում է փակ դռների ետևում: Զավակներս, նա ձեզ սոսկալի խառնաշփոթության մեջ կթողնի: Նա հզոր, ինքնավստահ, հումորով լի, հոգատար, սիրող կերևա, և նրան կնայեն որպես մի փրկչի: Նրա գեղեցիկ դեմքը բոլորին դուր կգա, բայց նա շուտով կփոխվի: Նա ավերածություն կտարածի աշխարհում և շատերին կսպանի: Տեռորի նրա գործողությունները բոլորի համար պարզ կերևան: Նա կոչնչացնի ձեր անկախությունը և կնշանավորվի Նշանը՝ Գազանի Նշանը բերելով: Դուք, զավակներս, պետք է ուժեղ լինեք: Չընդունեք Նշանը, որովհետև եթե ընդունեք, կընկնեք նրա չար հիպնոտիկ ազդեցության տակ:
Շատերը կմեռնեն Իմ հանդեպ ունեցած իրենց հավատի համար: Ոչ, մի վախեցեք, որովհետև, եթե դուք տառապեք Ինձ համար, Իմ մեջ, Ինձ հետ դուք կընտրվեք: Աղոթեք, աղոթեք, որ չենթարկվեք նրա տեռորի իշխանությանը: Կանգնեք, պայքարեք Ինձ համար:
Թույլ չտաք, որ հակաքրիստոսը, իր ողջ համոզիչ հմայքով հանդերձ, հաղթի ձեր հոգիներին: Թույլ տվեք Ինձ պահելու ձեզ Իմ բազուկների մեջ, օրօրելու ձեզ հիմա Իմ Աստվածային Շնորհով՝ ձեզ տալու համար այն զորությունը, որ պայքարեք ճշմարտության համար: Իմ սերը ձեր հանդեպ երբեք չի մեռնի: Դուք երբեք չպետք է ընտրեք այդ ճանապարհը, այլապես կորած կլինեք Ինձ համար: Դժվար կլինի, բայց Իմ զավակներին օգնություն կտրվի շատ ու շատ տարբեր ձևերով, օգնելու թեթևացնել ձեր տառապանքները: Գնացեք հիմա և աղոթեք Իմ **Աստվածային Գթասրտության** համար և նախապատրաստվեք վերջին մարտի համար:
Հիսուս Քրիստոս Թագավոր Իմ ժողովրդի
Փրկիչ եւ Արդար Դատավոր

Նախազգուշացում հոգեւորականությանը

Ստացված Երեքշաբթի 16 Նոյեմբեր 2010թ, առավոտյան ժ 9.55

Աղջիկս, երեկ դու մերժվեցիր, երբ մարդիկ փորձեցին կասկածներ դնել քո

մտքի մեջ: Դու տառապեցիր դրա համար: Մի հուսաատվիր, Իմ խոսքը կլսվի: Դու կհանդիպես արգելքների, որոնք քեզ կստիպեն հիասթափություն զգալ այս աշխատանքի հանդեպ:
Աղջիկս, Ես առաջնորդում եմ քեզ: Դու պետք է հիշես սա և երբեք չմոռանաս Իմ խոստումը: Ես, ինչպես դու խնդրել էիր Ինձ, թույլ տվեցի քեզ հանգիստ քնել անցած գիշեր: Դու հիմա ավելի ուժեղ ես: Չե՞ս զգում դա:
Զգույշ եղիր, թե ում հետ ես շփվում: Իմ հետևորդները, կամ նրանք ովքեր կարծում ես թե Իմ հետևորդներն են, միշտ չէ որ այնպիսին են, ինչպես թվում է: Դու պետք է անես այն, ինչ քո սիրտն է քեզ ասում:
Աշխարհը կթվա այնպիսին, ինչպիսին միշտ եղել է: Բայց փոփոխություն կա, և դա տեղի է ունենում հիմա: Այդ փոփոխությունը տանում է մարդկությանը դեպի մի խավար, որը կպարուրի նրանց, և կծածկի Իմ հանդեպ նրանց ունեցած սերը:
Ինչու՞ պետք է Իմ զավակները շարունակեն քննել ճշմարտությունը: Նրանք չեն հետևում Իմ ուսուցումներին,սակայն նրանց տրվել է այդ ընծան Իմ առաքյալների կողմից, ովքեր Իմ հանդեպ ունեցած սիրով և Սուրբ Հոգու զորությամբ աշխարհին տվեցին մի շատ յուրահատուկ նվեր: Ճշմարտության ընծան ուսուցանվեց և տարածվեց Իմ ողջ զավակներին աշխարհով մեկ: Դարեր շարունակ շատերն են հետևել այդ առաջնորդությանը:
Մյուսներն, իմանալով հանդերձ ճշմարտությունը, որոշեցին շրջել այն՝ հարմարեցնելու համար իրենց սեփական կարիքներին, ցանկություններին, փառքին և իշանության ծարավին: Այդ ժամանակ Իմ հետևորդները չկարողացան զանազանել Աստծո խոսքի ճշմարտությունը և նրանց կողմից տարածված կեղծիքը, ովքեր սխալ էին առաջնորդվել: Այսպես է Խաբեբան աշխատում: Նա առաջ է բերում խառնաշփոթություն, հուսահատություն և հուսահատության զգացողություն և նա դա անում է խաչի վրա Իմ մահից ի վեր:
Բայց լսեք Ինձ հիմա: Նա չի հաղթի աղջիկս: Երկնային առաջնորդության ուժերը մեկ անգամ ևս Իմ զավակների մեջ կներարկեն իրենց հավատքը Իմ մարգարեների ուսուցումների միջոցով:
Խնդրիր Իմ զավակներին զգոն լինել այն փոփոխությունների հանդեպ, որոնք նրանք տեսնում են աշխարհում: Խնդրիր նրանց բացել իրենց սրտերը, աչքերն ու միտքը՝ տեսնելու համար Սատանայի կողմից տարածված ստերը: Նրանից դուրս է գալիս խոստումների մի ցանց՝ պատրաստված հրապուրելու Իմ զավակներին արտաքին հրաշքների հանդեպ: Այդ հրաշքներն ու կեղծ փառքը դատարկ են:
Նրանք չեն արտացոլվում սիրուց, ոչ էլ առաջարկում են իրական հանգիստ, երբ բացահայտվում է դրանց դատարկությունը
Չարի ուժերը հիմա ավելի են հզորանում, զավակս:Դրանք նախագծված են Սատանային կողմից, նրա չար հետևորդների բանակի միջոցով: Այդ հետևորդները, ագահության և եսասիրության միջոցով հետևում են հնազանդ երկրպագությամբ և կտարվեն դեպի նրա մարմնական դրախտը: Նրա

խոստացած դրախտը ոչ այլ ինչ է, քան սև խավար, և երբ Իմ զավակները հասկանան դա, նրանց ազատագրման ժամանակն արդեն անցած կլինի:

Աղոթք փրկության համար

Իմ բոլոր երեխաները պետք է, թեկուզ հանուն իրենց սեփական ընտանիքի հանդեպ սիրո, արթուն մնան այդ չարիքի հանդեպ, եթե ցանկանում են փրկել մեկը մյուսին: Իմ սերը կօգնի նրանց ուղղություն տալու, եթե նրանք շրջվեն դեպի Ինձ հիմա: Նրանք երբեք չպետք է վախենան շրջվել և ասել.
<<Ո՜հ, Տեր իմ, առաջնորդիր ինձ դեպի Քո Թագավորություն և պաշտպանիր ինձ այն խավարից, որը ողողել է հոգիս: Լսիր ինձ հիմա, ո՜հ Սուրբ Միրտ, և Քո բարեգթությամբ թույլ տուր, որ Քո սիրո լույսը և պաշտպանությունը փայլեն>>:
Իմ այն զավակները, ովքեր կասեն այս աղոքը, կլսվեն:: Նրանց աղերսներին փրկության համար, քանի որ դրանք նրանց սիրելիների համար են, պատասխան կտրվի: Ես Իմ Օրհնյալ Մոր կողմից առաջնորդվող Իմ տեսանողների միջոցով փութաջանորեն փորձում եմ նախազգուշացումներ ուղարկել աշխարհին: Շատ ու շատ անգամ, Իմ տեսանողներին, որոնց սկզբում մերժել են, վերջապես ընդունել են: Այս անգամ նրանց բավարար ժամանակ չի տրամադրվի, որ իրենց պատգամները լսվեն բավարար չափով Իմ ժողովրդի կողմից:

Զգուշացեք կեղծ մարգարեներից

Բայց ես պետք է նախազգուշացնեմ Իմ զավակներին, որ զգուշանան կեղծ մարգարեներից: Շատ ճշմարիտ տեսանողներ են սխալվել: Ճշմարիտ տեսանողներին կտրվեն շնորհներ, որոնք կտարածեն Իմ ճշմարտությունն այնպես, որ դրանք կուղեկցվեն գերբնական երևույթներով և հրաշքներով, որոնք հնարավոր չի լինի ժխտել:
Իմ սիրտը կոտրվում է, երբ տեսնում եմ, թե ինչպես են նրանցից շատերը մերժվում Իմ ամենանվիրյալ աշակերտների կողմից: Այդ աշակերտները, որոնց Ես ուղարկել եմ Իմ զավակներին ուսուցանելու նպատակով, չեն կատարում իրենց առաջադրանքը: Հիմա նրանք պետք է շրջվեն դեպի Ինձ առաջնորդություն ստանալու համար և աղոթեն այն շնորհների համար, որոնք անհրաժեշտ են Իմ ժողովրդին առաջնորդելու համար:
Իմ նվիրյալ ծառաները հատուկ են, և նրանք, ովքեր ստացել են Խորհուրդները, պետք է լսեն Իմ աղերսը; Դուք հիմա պարտականություն ունեք Իմ հանդեպ նորոգելու Ինձ տրված ձեր երդումները: Հավատացեք և հետևեք Իմ սուրբ պատգամին: Ուժեղ եղեք, քանի որ հիմ ա դուք բոլորդ կանչվում եք, որ վկայություն տաք Հայտնության Գրքի մեջ գրված ճշմարտության համար և ընդունեք, որ ժամանակը եկել է: Նախապատրաստվեք հիմա Մեծ Իրադարձության համար: Մի մերժեք Ինձ, ոչ էլ շրջեք ձեր մեջքը դեպի Ինձ:

Քարոզեք հզորությամբ և համոզմունքով: Մի ընկղմեք Իմ ուսուցումները և ասեք Իմ հետևորդներին, թե ամեն ինչ լավ կլինի: Սա չէ այն պատգամը, որի համար կանչվել եք: Ձեր պարտականությունը Իմ՝ ձեր Փրկչի հանդեպ, ձեր հոտին ճշմարտության մասին տեղեկացնելն է:
Իմ զավակներին չպետք է ասվի, որ նրանք բոլորը կփրկվեն: Սա ճշմարտություն չէ: Քանի որ միայն նրանք, ովքեր փնտրում են Իմ ներողամտությունը և խոնարհվում են Ինձ ու Իմ ուսուցումներին, նրանք կփրկվեն:
Ինչու՞ չեք հետևում Սուրբ Գրքերի ուսուցումներին: Ինչու՞ եք պատճառաբանություններ օգտագործում: Ինչու՞ եք սխալ ուղղություն տալիս և համոզում Իմ զավակներին, որ Աստված բոլորին կների: Իմ Հավիտենական Հայրը կների միայն նրանց, ովքեր հավատում են Ինձ և ովքեր կապաշխարեն:
Մի՞թե խաչի վրա Իմ մահը ձեզ ոչինչ չասեց: Ես մեռա, որ փրկեմ մարդկությանը Սատանայի խելացնորությունից: Սակայն դուք, սխալ թողտվությունների միջոցով, Իմ զավակներին սուտ եք սովորեցնում: Դուք զոհ եք դարձել մարդկության ճնշումին, քողարկոլու այն Սուրբ վարդապետությունը, որի համար կանչվել եք քարոզելու:
Մի՞թե ամոթ չունեք: Այնքան եք համակված աշխարհիկ հմայքներով, որը երկիրն է առաջարկում, որ հետևում եք համատարած թողտվությամբ ձեզ թելադրված այն կեղծ դոգմային, որը Սատանան է տարածել Իմ զավակների մեջ: Այդ խեղճ սխալ ուղղորդված զավակները ուղղության կարիք ունեն: Նրանք նույնպես պետք է հասկանան մարդկային մեկնաբանության և Իմ կողմից կողմից տրված աստվածային խոստումի միջև գոյություն ունեցող տարբերությունը:
Ինչու՞ չպետք է Իմ զավակները հավատան աստվածային միջամտությանը: Ինչու՞ եք դուք դա քողարկում, երբ այն ներկայացվում է ձեզ: Իմ քահանաներ, լսեք Իմ աղերսը:Աղոթեք, որ ճշմարտության Իմ պատգամը լսվի:

Ուղերձ Եպիսկոպոսներին

Իմ Եպիսկոպոսներին Ես ասում եմ հետևյալը. Թողեք ձեր շքեղ զգեստները: Շրջվեք այն հարստություններից, որոնց պատվել եք: Փնտրեք այն ճշմարտությունը, որը պահանջվում է ձեզնից: Հնազանդվեք հիմա Իմ խոսքին, կամ էլ կանգնեք հետևանքների առջև: Դուք պարտ ունեք Իմ և Իմ Հավիտենական Հոր հանդեպ: Որքան կույր եք դուք դարձել: Հիմա նշաններ են տրվում տեսանողների միջոցով երկնքում, իսկ դուք չեք կարողացել հասկանալ դրանք: Դրա փոխարեն դուք նստել եք ձեր ամրոցներում և քմծիծաղ եք տալիս: Սրա համար ձեր մեղքերը չեն ներվի:
Ինձ նվիրաբերված աշակերտների մեղքերը, նրանց, ովքեր ընտրել են Իմ ուղին, մեծապես վիրավորում են Ինձ: Բացեք ձեր աչքերը, սրտերը և ետ դարձեք դեպի Իմ Սուրբ Գրքի միջի ուսուցումները:

Պատգամ կարդինալներին

Իմ կարդինալներին Ես ասում եմ հետևյալը. Ինչպիսի բարձունքների եք հասել, որ մոռացել եք Իմ ուսուցումների խորհուրդները՝ առաջնորդելու համար Իմ հոտը: Ցած իջեք հիմա և հետևեք Իմ առաջնորդությանը: Մի շեղվեք այն կեղծիքներով, որոնք բռնել են մարդկությանը: Դուք նույնպես մի մերժեք Ինձ: Ես ձեզ բոլորիդ խնդրում եմ աղոթել Իմ սիրելի քաջ Պապի համար, վերջին ճշմարիտ Պապի: Դուք, Իմ աշակերտներ, շեղվում եք խաբեբայի կողմից: Նա իրեն հայտնի է դարձրել ցանկացած եկեղեցու միջանքներում, և նրա չար ուղիները հիմա երևում են: Ձեզանից նրանք, ովքեր աչքեր ունեն, ուշադիր նայեք ձեր առջև և ձեր ետևը: Նա կխլի ձեր հոգին, եթե տեղի տաք նրա խաբությանը:
Խնդրում եմ աղոթեք հիմա ձեր բոլորի համար: Խնդրեք Իմ առաջնորդությունը: Ներողություն հայցեք և թույլ տվեք Ինձ նորից առաջնորդել ձեզ:
Ձեզանից նրանք, ովքեր կասկածի տակ կդնեն այդ հրահանգը, լսեք հիմա. Ինչու՞ չպետք է Ես հաղորդակցվեմ ձեզ հետ այս ձևով: Ես ձեզ բոլորիդ սովորեցրել եմ առաքյալների միջոցով, ովքեր Սուրբ Հոգու առաջնորդությամբ աշխարհին տվեցին Իմ պատգամը, որն ապրել է այդ ժամանակից ի վեր: Հիմա ժամանակը մոտ է: Ձեր ողջ կյանքի ընթացքում դուք աղոթել եք առաջնորդության համար: Այս անգամ հիմա, Ես պարտադրում եմ ձեզ, որ լսեք Իմ աղերսը:
Ձեր աստվածային Փրկիչ Հիսուս Քրիստոս

Մի կողմ նետեք բոլոր կասկածները

Ստացված երեքշաբթի 16 նոյեմբերի 2010թ, երեկոյան ժ 11

Գրիր սա աղջիկս: Քո միտքը սողոսկող կասկածենրը սպասելի են: Այո, դու փորձության ես ենթարկվում, որ շրջես գլուխդ, բայց նա, Խաբեբան, երբեք քեզ չի խլի Ինձնից: Իմ սիրելի աղջիկ, դու ավելի ուժեղ ես, քան կարծում ես, որովհետև շատ քիչ ընտրյալ հոգիներ կկարողանային գլուխ հանել այս սուրբ խնդրանքից այնպես, ինչպես դու: Խիզախություն է պահանջվում գործել այն ձևով ինչ ձևով Ես հաղորդակցվում եմ քեզ հետ: Դու չփախար, կծկվելով վախից: Դու սկզբից ևեթ ճիշտ գիտեիր, որ սա աստվածային հաղորդակցություն է ամենաբարձր և ամենասուրբ Հիրերարխիայից:

Շուտով դու լրացուցիչ լուսավորում կզգաս, որը մի կողմ կնետի քո բոլոր կասկածները: Երբ սա տեղի ունենա, քո միտքը ավելի շատ կբացվի՝ ստանալու

համար այս յուրահատուկ շնորհները, որոնք պետք է հեղվեն՝ քեզ լցնելու համար այն խիզախությամբ և վճռականությամբ, որոնք անհրաժեշտ են օգնելու այս մարգարեությունը բերելուն:

Այո, աղջիկս, շատ սարսափած ես, բայց դու այն ընտրյալն ես, ով պետք է ավարտի Հովհաննու Գրքի մարգարեությունները՝ նախապատրաստելու համար մարդկությանը այն մաքրագործմանը, որը շուտով կսկսվի: Հենց որ վախը, անորոշությունն ու տատանումը թողնի քեզ, սիրելի աղջիկս, դու վեր կկենաս և կավարտես այս չափազանց առանձնահատուկ առաջադրանքը, որը Ես խնդրում եմ քեզնից: Հիմա արա այնպես, ինչպես Ես ասում եմ: Դու պետք է ասես Իմ **Աստվածային Գթասրտությունը** ամեն օր ժամը երեքին, որ օգնես հոգիներ փրկել: Դու պետք է շարունակես աղոթել Վարդարանը, որը տրվել է աշխարհին Իմ ամենաթանկագին Մոր կողմից, ով պետք է աշխատի Ինձ հետ՝ նախապատրաստելու համար Իմ Երկրորդ Գալուստը այս երկիր:

Հիմա Ինձ համար շատ հոգիներ կորած են, շատ ու շատերին էլ ամեն օր Չարը խլում է Ինձնից: Նրանք չեն կարող վերցվել Ինձնից: Խնդրում եմ օգնիր Ինձ փրկելու նրանց խեղճ հոգիները: Մի կողմ նետիր բոլոր կասկածները: Հիշիր միայն քո առաջադրանքը: Օգնիր բացել նրանց աչքերը, որ կարողանան իրենք իրենց ազատագրել Իմ Հավիտենական Հոր աչքում: Եթե կարողանաս պարզապես շարունակ մտածել արդյունքի մասին, կհասկանաս, թե ինչու է սա կարևոր և ինչու է սա մի կոչ զուտ մաքուր սիրուց դրդված, որը Ես ունեմ Իմ Սրտի մեջ Իմ բոլոր զավակների հանդեպ:

Մտածիր այդ մասին այսպես: Նվիրված ծնողի սերը սահման չունի: Եթե մի զավակ շեղվում է և քայլում դատապարտության ճանապարհով, ծնողի կողմից զգացած սրտի ցավն ու ընկճվածությունը նման է մի սրի, որը խոցում է սիրտը: Իր զավակներին սիրող ցանկացած ծնող կմարտնչի նրանց համար մինչև վերջ:Նրանք երբեք տեղի չեն տա: Երբեք: Նույն կերպ է նաև Ինձ հետ: Ես կանեմ Իմ Աստվածայի Զորությամբ ամեն ինչ, առանց միջամտելու մարդու ազատ կամքին, որ իրենց սրտերը շրջեն դեպի Իմ Սուրբ Սիրտը: Դու, աղջիկս, կօգնես Ինձ անել սա:

Ես կարիք չունեմ քեզ հիշեցնելու Ինձ հնազանդվելու և ամբողջապես հանձնվելու մասին: Սա այն կանչն է, որի համար դու ընտրվել ես: Վերցրու սուրդ հիմա: Դու մի վերջին փորձով պետք է մարտնչես քո Փրկչի հետ կողք-կողքի, որ բերես Իմ բոլոր զավակների փրկությունը նախքան Դատաստանի Օրը:

ԳՆա հիմա խաղաղությամբ և սիրով ստանալու համար Այսօր Իմ Մարմինը:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ուղերձ ագնոստիկներին և աթեիստներին (թերահավատներին և չհավատացողներին)

Ստացված Հինգշաբթի 18 Նոյեմբեր 2010, երեկոյան ժ. 9

Նրանց, ովքեր պնդում են, թե չեն հավատում Ինձ, կասեմ հետևյալը: Ինքներդ ձեզ տվեք հետևյալ հարցը. Կարո՞ղ եք հիշել այն ժամանակը, թե երբ եք հավատացել: Հիշեք, երբ դեռ երեխա էիք, երբ հավատում էիք Աստծուն: Նշանակություն չունի, թե ձեր ծնողներն ինչ կրոնի հետևորդներ էին: Դուք հավատու՞մ էիք: Ի՞նչն է փոխվել: Գուցե այլոց ազդեցությու՞նը: Նրանք ձեզ ասե՞լ են, որ ձեր գոյության համար կա ռացիոնալ (բանական) պատասխան: Ժամանի սկզբից ի վեր Իմ զավակների համար դժվար է եղել ընդունել այս գոյությունից դուրս գտնվող այլ գոյություն: Սակայն նայեք աշխարհին և տեսեք Իմ Հավիտենական Հոր կողմից ստեղծված արաչության հրաշքները: Արևը, լուսինը, ծովը, գետերը, բույսերը, կենդանիները և արարչության բոլոր հրաշքները և պատասխանեք այս հարցին: Ուտեղի՞ց է այս ամենը եկել: Դուք իսկապե՞ս հավատում եք, որ դա դուրս է եկել այլ բանից, այլ ոչ թե գերագույն գոյությունից: Զգուշացեք, երբ կլսեք Նոր դար շարժման մեջ գոյություն ունեցող այսպես կոչված բախտագուշակների կողմից տարածվող ստերը: Նրանք գնում են, ինչպես իրենք են հավատացած, դեպի ճշմարտությունը և նոր դարաշրջանում իրենց խոստացված ուրախությունը: Այդ դարաշրջանը, որին նրանց համոզում են հավատալ, նոր Դրախտ է. Տիեզերքի մի մասսայաբար վերահսկվող, բայց փառահեղ ձև: Դա կեղծ ուսմունք է: Աստծո ժողովրդից շատերը, ներառյալ հավատացողները սխալմամբ շփոթում են իրենց հավատն այդ ուսմունքի հանդեպ՝ լույսի ուսմունքի հետ:
Նրանց առաջնորդում են չարքերը: Ոմանք գիտեն դա: Մյուսները՝ ոչ: Աղոթեք, որ նրանք տեսնեն ճշմարտությունը նախքան կշարունակեն իրենց անիմաստ ուղին դեպի դատարկություն:
Աթեիստներին Ես ասում եմ հետևյալը. Ես սիրում եմ ձեզ, անկախ նրանից, թե որքան եք Ինձ վիրավորում: Այն աթեիսներին, ովքեր ազդեցություն են կրում այլ հավատքներից՝ կանգ առեք և մտածեք: Մարդու կողմից ստեղծված մտածողության հետևելու իրենց փնտրտուքի մեջ, նրանք պարզապես ունեն այլ հավատք: Համոզմունք, որ մարդը ղեկավարվում է: Բայց մարդը չի ղեկավարվում: Սակայն հենց այդ մարդիկ, Իմ թանկագին զավակները, որոնց համար Ես կմարտնչեմ, խրախուսվում են հետևելու Սատանային՝ Խաբեբային, մարդկության թշնամուն: Հարցրեք աթեիստին, ով արտասովոր

ծայրահեղությունների է հասնում, ազդելու համար Աստծո ժողովրդի վրա, թե ինչու՞ է նա այդպես վարվում:
Բավական չէ պարզապես ժխտել Ինձ: Ինչու՞ են այդ մարդիկ ստում: Այդ աթեիստական խմբերից շատերի օրակարգում իմ զավակներին դեպի կեղծ վարդապետություն հրապուրելն ու գայթակղեցնելն է: Չսխալվեք, նրանց հավատը կրոնի այլ տեսակ է՝ Խաբեբայի կրոնի, ով ծիծաղում է նրանց հիմարության վրա:
Աթեիստներ լսեք Ինձ մի վերջին անգամ: Շրջվեք հիմա դեպի Սուրբ Գրքերը: Նայեք Հովհաննու Գիրքը և տեսեք այն ճշմարտությունը որը հիմա սկսվում է իրականանալ: Մի՞թե այն հիմա ձեզ իրական չի թվում, մինչ վկայություն է տալիս այն դեպքերին, որոնք բացահայտվում են շերտ առ շերտ ամեն օր ձեր աչքերի առջև:
Չե՞ք կարող տեսնել, որ Իմ խոսքը, Իմ մարգարեությունը, կանխասացված այդքան վաղուց, ճշմարտությունն է: Բացեք ձեր աչքերը և մի անգամ խոսեք Ինձ հետ այս կերպ.
<<Աստված, եթե դու ճշմարտությունն ես, բացահայտիր ինձ քո սիրո նշանը: Բաց արա իմ սիրտը, որ ուղղորդություն ստանամ: Եթե դու գոյություն ունես, թույլ տուր ինձ զգալ Քո սերը, որպեսզի կարողանամ տեսնել ճշմարտությունը: Աղոթիր ինձ համար հիմա>>:
Մինչ Ես կանչում եմ ձեզ մի վերջին անգամ, Ես կասեմ այս. Սերը մարդու կողմից չի ստեղծված: Դուք չեք կարող տեսնել այն, բայց կարող եք զգալ: Սերը գալիս է Հավիտենական Հորից: Դա մի ընծա է՝ տրված մարդկությանը: Այն խավարից չի գալիս: Այն խավարը, որը դուք զգում եք, զուրկ է սիրուց: Առանց ճշմարիտ սիրո դուք չեք կարող զգալ: Դուք չեք կարող տեսնել լույսը: Դուք ոչ մի ապագա չեք տեսնի: Ես Լույսն եմ: Ես ապագան եմ: Ես ձեզ բերում եմ փառք և սեր նույնիսկ հետո: Շրջվեք հիմա և խնդրեք Իմ օգնությունը: Արեք դա, և Ես կպատասխանեմ ձեզ և կպարուրեմ Իմ բազուկների մեջ:
Ուրախության Իմ արցունքները կփրկեն ձեզ, քանի որ դուք նորից կդառնաք Իմ սիրելի զավակը: Եկեք հիմա և միացեք Ինձ Դրախտի մեջ:
Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Սատանայական խմբերի և համաշխարհային վերահսկողության աճ

Ստացված Շաբաթ 20 Նոյեմբեր 2010թ, առավոտյան ժ. 7.20

Աղջիկս, ասա Իմ զավակներին, որ օձը պատրաստվում է ի հայտ գալ: Նրանք չպետք է իրենց թույլ տան ընկնել նրա չար թակարդի մեջ, որից այլևս վերադարձ չկա:
Նա՝ օձը, շատ կերպարանքներ ունի: Նրա հետևորդները, ուղեղները լվացված ուժի և փառքի խոստումներով, հիմա մեկը մյուսի ետևից նյութում են

աշխարհում մի շարք իրադարձությունների առաջ բերում, որի հետևանքը կլինի անասելի վիշտը, ցավը և սարսափն ամենուր:
Իմ զավակներն ավելի խելամիտ չեն լինի: Նրանք, ում ցույց է տրվել ճշմարտությունը և ովքեր առաջնորդվում են Իմ կողմից, խիզախ հոգիներ են: Նրանք հուսահատորեն փորձում են նախազգուշացնել աշխարհին այդ սարսափելի խմբերի ամսին, որոնք ցրված են բոլոր ուղղություններով, բոլորի մտքում՝ նույն նպատակը: Աղբի պես լցված յուրաքանչյուր երկրում, ներկա իշանության բոլոր մակարդակներում, նրանք գաղտնի դավեր են նյութում: Կան նաև անմեղ անդամներ, չար հասարակության մի մասը, ովքեր չեն հասկանում ճշմարտության իրականությունը: Դրա փոխարեն նրանք շրջում են, կատարում իրենց բարի գործերը, առանց հասկանալու այն գործողությունները, որոնք իրենց վերադասները գաղտնի նախապատրաստում են: Չսխալվեք, այդ վերադասները Սատանայի նվիրյալ հետևորդներն են, և ներգրավված են պաշտամունքի այնպիսի արարողությունների մեջ (ռիտուալ), որ եթե այլ մարդիկ ականատես լինեին դրանց, կսարսափեին այն լկտի սատանայական պաշտամունքից և նվիրվածությունից չարի խոստումների հանդեպ, որոնք նրանց կազմակերպությունների խորքում են:
Նրանց համար, ում զարմանալի կթվա Իմ խիզախ հոգիների խոսքերը, լսեք Ինձ հիմա: Ճշմարտությունը հասկանալ չկարողանալը և այդ խիզախ ձայներին չլսելը կոչնչացնի ձեր կյանքը, ձեր հավատը և ձեր կենսակերպը: Քանի որ մինչ այժմ այդ մարդիկ ձգտել են հասնել վերահսկողության: Նրանց գործերը ակնհայտ են շատ ու շատ երկրներում, բայց նախագծված են տեղի ունենալու այնպես, որ այն զավակները, ովքեր զբաղված են իրենց ամենօրյա գործով չհասկանան, թե ինչ է կատարվում:

Օձը դուրս կգա ՀԻՄԱ
Երբ Ես ասում եմ, որ օձը պատրաստ է դուրս ցատկել, Ես ի նկատի ունեմ հիմա: Նա և նրա հպարտ ու սոված գազաններից կազմված չար բանակը արագությամբ և վճռականորեն շարժվում են յուրաքանչյուր խավի մեջ: Նրանք կառավարում են ձեր կյանքն այնպես, որ դուք դրան տեղյակ չեք: Քանի որ նրանց առաջնորդում է Խաբեբան, նրանք խորամակ են, գեղեցիկ լեզու ունեն, ազահ են, դաժան և միայն մի նպատակ ունեն իրենց մտքում: Նրանք բանկերի, հաղորդակցության ժամանակակից միջոցների, զինուժի, կրոնական կազմակերպությունների և կառավարությունների միջոցով ցանկանում են ղեկավարել ձեզ բոլորիդ: Ուշադիր եղեք և լսեք հիմա:

Ոչ դավադրություն տեսություններ
Իմ և Իմ սիրելի զավակների նախազգուշացումները այժմ կդիտվեն որպես դավադրության տեսություններ: Սակայն դա այդպես չէ: Այս իրավիճակը, աղջիկս, հանկարծակի չէ ի հայտ եկել: Այս խումբը, Ես հիմա ի նկատի ունեմ հենց մի խմբի, դարեր ի վեր նյութել են, ծրագրել և հավաքագրել

հասարակության ամենաբարձր էշելոններից: Նրանք սպանել նրանց, ովքեր անցյալում դեմ են դուր եկել իրենց: Նրանք սպանել են առաջնորդների, ներառյալ տաղանդավոր և հայտնի մարդկանց դարեր ի վեր: Նրանք արյունակցական եղբայրներ են և խժռում են մարդկության միսը:

Սատանայական մասունքներ

Նրանք երկրպագում են այն անպարկեշտ մասունքներն ու նշանները, որոնք օձն է ցանկանում: Սա, չսխալվեք, մի հզոր և սարսափազդու խումբ է: Նրանք այնքան հզոր են, որ դժվար կլինի դուրս պրծնել նրանց ճանկերից, եթե ձեր ապրուստը, սնունդը և դրամը կախված են նրանցից:
Զավակներս, կառավարություններում, սննդի արդյունաբերության մեջ և բարեգործական կազմակերպությունների իշխանության գլուխ կանգնած շատ ու շատ մարդիկ չգիտեն, թե ինչ է տեղի ունենում, ոչ էլ կիմանան, մինչև Մեծ Դժբախությունների ավարտը, որը շուտով կսկսվի: Այդ ժամանակ նրանք կտեսնեն Գազանին դուրս եկած, ով արագ փոփոխություն կբերի, ուստի դուք բոլորդ պետք է պայքարեք ինչպես երբեք, որ թաքնվեք նրա չար ռեժիմից:
Հենց որ Գազանը և նրա հետևորդները վերահսկեն ձեր փողը, նրանք վերահսկողություն կունենան ամեն ինչի վրա, բացի մի բանից: Նրանք չեն կարող և երբեք չպետք է փորձեն գողանալ ձեր հոգիները: Սակայն սա հենց այն է, ինչը նրանք կփորձեն անել:
Դուք, ովքեր հարցականի տակ եք դնում ճշմարտության այս պատգամը, որը ձեզ է ուղարկվել ձեզ օգնելու, առաջնորդելու և ճշմարտությունը բացահայտելու համար, լսեք Ինձ հիմա: Եթե չհավատաք այս պատգամին, Ես Իմ հետևորդներից խնդրվող աղոթքների միջոցով աղոթում եմ, որ դուք տեսնեք լույսը: Ես խնդրում եմ ձեզ նայել և զգուշանալ չարի իշխանության ծարավ այդ գազանների այն նշաններից, ովքեր հրճվում են այդ պլանով և այն կեղծ փառքով, որը կստանան:
Չսխալվեք, վերահսկելով փող վաստակելու ձեր կարողությունը, ձեր փող ունենալը դեռ բավական չի լինի: Ոչ, նրանք կցանկանան շատ ու շատ ավելին: Նրանք կցանկանան վերահսկել այն, ինչ դուք ուտում եք, խմում, և որտեղ եք ապրում: Դրա համար, դուք պետք է անեք հետևյալը, ինքներդ ձեզ պաշտպանելու համար:

Գտեք ապաստարաններ

Խնդրում եմ, ապաստարաններ գտեք որպես հավատացյալների խմբեր: Ես կուղարկեմ ձեզ լույսը, որ օգնի ձեզ գոյատևել: Սկսեք աճեցնել ձեր սեփական սնունդը: Տնտեսեք ինչ սնունդ որ կարող եք, և մի կողմ դրեք: Սկսեք հիմա պլանավորել, ասես սպասում եք փոթորկի: Իմացեք, որ խավարը կիջնի այնպիսի չափով, որ գոյատևելու համար պետք է նախապատրաստված լինեք: Լսեք մարգարեներին: Մի արեք այն նույն սխալները, երբ իմ ժողովուրդը չլսեց Իմ Նոյ մարգարեին: Նրանք մեջքները շրջեցին նրա հանդեպ: Մերժեցին լսել:

Նրանք շարունակեցին իրենց ամենօրյա կյանքը, կերան ու ծիծաղեցին, ամբողջապես մոռանալով իրենց սպասվող սարսափելի ճակատագիրը: Բարձրացեք հիմա: Շրջվեք դեպի Իմ Հավիտենական Հայր Աստված՝ Ամենաբարձրյալը, ուղղություն ստանալու համար: Նախապատրաստեք ձեր ընտանիքները այն սպասվող խավարի հոսքի հանդեպ, որի մասին չեք կարող հասկանալ հիմա: Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ քաջություն ունենաք չընդունել թունավոր գազանի Նշանը: Նա, իր թունավոր բանակի միջոցով կփորձի հաստատել այն, ինչը սկզբում ինքնության հաստատման չար կնիք: Սա կտրվի ձեզ և կներկայացնի որպես էական, որպեսզի դուք փող հանեք, գնեք սնունդ, ճամփորդեք, ապրեք ձեր տներում և առևտուր անեք: Սա է առավելագույն վերահսկողությունը: Կամեցեք, և ձեր իսկական քաղաքական առաջնորդներն անուժ կլինեն:
Ես ստիպում եմ մասսայական լրատվամիջոցներին, նրանց, որոնք չեն թունավորվել այս չար խմբից, նայել և տեսնել, թե ինչ է տեղի ունենում: Բացահայտեք բոլորին, ովքեր օժանդակում են Օձին և նրա բանակին, բայց գործեք զգուշորեն:
Զավակներս, վախեցեք այդ խմբից, և իմացեք, որ նրանք իսկապես կան, և որ այն խիզախ հոգիների կողմից արված հավաստիացումները, ովքեր փորձում են բացահայտել նրանց, ճշմարտ են:
Զեզանից նրանց, ով կմտածի, թե ինչպես կարող է Աստվածային ծագում ունեցող պատգամը այսպիսի սենսացիոն “հիմարություն” դուրս հանել, նորից մտածեք: Բացեք և կարդացեք Սուրբ Գրքերը: Իմ Հոր վստահության գրքում պարունակվող բառերը ճշգրիտ են: Նրանք խոսում են դեպքերի մասին հին ժամանակներից: Նրանք ներկայացնում են ճշմարտությունը, որպեսզի առաջնորդեն ձեզ դեպի Աստված: Իմ մարգարեների խոսքերը այն ժամանակ և հիմա ներկայացնում են գալիք կյանքի ամբողջական ճշմարտությունը: Հովհաննու Գրքում պարունակվող Նախազգուշացումը, չնայած շատերն այսօր դրանք համարում են դժվար վերծանելի, հիմնված են այն իրադարձության վրա, որը հիմա տեղի կունենա:
Հայտնության Գիրքը ճշգրտորեն բացահայտում է իրադարձությունների մի շարք, որոնք գործի կդրվեն Սատանայի կողմից Վերջին Ժամանակների մոտենալուն համընթաց: Նա գիտի ճշմարտությունը, որ իր օրերը հաշված են: Բայց նա ասում է Իմ խեղճ զավակներին, ովքեր պաշտում են իրեն, որ Դրախտը, տարբեր, բայց ավելի գայթակղիչ, քան Աստծո կողմից խոստացվածը, սպասում է նրանց: Ուստի, Իմ Հավիտենական Հոր դեմ իր վերջին մարտում նա ամեն ինչ կանի, որ գողանա որքան հնարավոր է շատ հոգիների, նախքան Իմ Հոր զայրույթը կիջնի:
Նա, Սատանան, շտապում է: Փախեք հակառակ ուղղությամբ: Հոգ տարեք ձեր ընտանիքների համար և աղոթեք ինչպես երկար ժամանակ չեք աղոթել: Աղոթքը կպաշտպանի ձեզ բոլորիդ: Վերանորոգեք ձեր հավատը հիմա, և երբ խավարի երեք օրերն իջնեն երկրի վրա, նրանք, Իմ հետևորդները,

հեշտությամբ կլուսավորեն իրենց տները: Սարսափելի խավարը, որը ոչ մի մարդ չի կարող պատկերացնել, կլինի գիշերվանից էլ մութ:
Չհավատացողները և նրանք, ովքեր գովերգում են Գազանին, այդ ժամանակ կհասկանան ճշմարտությունը: Որորվհետև նրանք չեն խուսափի այն սևությունից, երբ այն իջնի:
Կանգնեք հիմա զավակներս և պայքարեք: Նախապատրաստվեք մարմնի և հոգու գոյատևման համար մինչ այդ մարդկանց չար արարքները կբացվեն ձեր աչքերի առաջ:
Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Դարձ/ապաշխարություն

Ստացված կիրակի 2 Նոյեմբերի 2010թ. առավոտյան ժ 1.30

Այսօր, աղջիկս, Ես բերում եմ հույսի և խաղաղության պատգամ Իմ բոլոր զավակներին, ովքեր զգում են, թե այս պատգամները վախ են ներկայացնում: Իմացեք, որ նույնիսկ ձեզնից նրանք, ովքեր դժվարանում են հավատալ Ինձ, Իմ Հավիտենական Հորը և Սուրբ Հոգուն, մի անհանգստացեք: Ձեզնից շատերը, Իմ սիրելի զաավակներ, ցանկանում են հավատալ, բայց ձեր բանական մտածողության և լոգիկայի պատճառով, որտեղ գնահատում եք ամեն ինչ հիմնված ռացիոնալ մտածողության վրա, ձեզ համար դժվար կլինի հավատալ գերբնականին:

Մի վախեցեք: Աղոթելով, թեկուզ օրը մեկ անգամ և խնդրելով Իմ Սուրբ Սրտին, որ Իմ սերը հեղեմ ձեզ վրա, դուք շատ շուտով այլ կերպ կզաք: Ձեզնից շատերը, ովքեր աղոտ են իրենց հավատի մեջ, նախանձում եք նրանց, ովքեր խորը հավատ ունեն: Դուք պետք է հասկանաք, որ Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Ինչպես ծնող, ձեզնից յուրաքանչյուրն ունի մի խորը և հատուկ տեղ Իմ Սրտում: Դուք երբեք չպետք է զգաք, թե արժանի չեք Իմ սիրուն:

Մի՞թե Ես ձեզ այնքան չեմ սիրում, որ կամովին կյանքս տվեցի ձեզ համար, հուսալով, որ ձեզ կտրվի երկրորդ հնարավորությունը դեպի Ինձ գալու:

Զավակներս, ձեզ միշտ մի կողմ կհրեն այն բանի համար, որ հավատ եք արտահայտում ձեր աստվածային Փրկչի հանդեպ: Երբ դա պատահի, հիշեք, որ դա մի բան է, որը մարդ պետք է տառապի այս երկրի վրա իր կյանքի ընթացքում Իմ հանդեպ իր սիրո համար: Երբեք թույլ չտաք որ Իմ՝ ձեր

Աստվածային Փրկչի հանդեպ ունեցած այդ հավատն աղտանա կամ թաքնված լինի նրանցից, ովքեր ձեզ վրա կնայեն խղճահարությամբ:

Այո, Իմ զավակներից շատերը, ազդված մարդկային բանականության և լոգիկայից, որ դիտավորյալ կերպով դրել են իրենց փակ հոգիների մեջ, կհարցաքննեն ձեր հավատքը: Ձեզ է՞լ ավելի վիրավորելու համար նրանք կամաչեն ձեր հավատից, և մինչ հրապարակայնորեն դա չեն ընդունում, նրանք զգում են մի հետաքրքրաշարժ նախանձ: Այդ նախանձը գալիս է նրանց վրա իջնող այն հաստատ համոզմունքից որ իրենց ներսում դատարկություն է: Անկախ նրանից, թե որքան նրանք կնայեն ներս, նրանք չեն կարողանում հասկանալ դրա պատճառը: Միևնույն ժամանան, դուք, որ հավատում եք, ձեզ կնվաստացնեն ականատեների ամաչեցնող աչքերը, որոնցում թույլ հավատ կլինի, կամ ընդհանրապես չի լինի

Երբեք մի վախեցեք կամ ամաչեք ձեր սեփականը դարձնել այն սերը, որն ունեք ձեր սրտերի մեջ Իմ Հավիտենական Հոր հանդեպ: Բաց ցույց տվեք ձեր հավատը: Հպարտորեն կրեք Իմ հանդեպ ձեր ուեցած սերը, որ բոլորը տեսնեն: Այդպես վարվելով դուք օրինակ եք ծառայում:

Երբեք ագրեսիվ ձևով մի փորձեք պարտադրել ձեր հավատը անհավանտերին բանական մտածողության միջոցով: Դրա փոխարեն ձեր եղբայրներին և քույրերին ցույց տվեք սեր և օժանդակություն, չնայած գիտեք, որ նրանք առաջնորդության կարիք ունեն: Երբ նրանք տեսնեն այն վճռականությունը, որով ասում եք Իմ հանդեպ ձեր ունեցած սերը՝ բացահայտ կերպով և սրտի ուրախությամբ, նրանք կսկսեն զարմանալ:

Առաջնորդելով ուրիշներին, սիրո օրինակի, հարգանքի և բարի գործերի միջոցով, նրանք կձգվեն դեպի լույսը: Շատերը սկզբում չեն հասկանա, թե ինչու: Բայց ժամանակի ընթացքում և հատկապես Ինձ ուղղված ձեր աղոթքների ուժի օգնությամբ, նրանք կքայլեն դեպի Ինձ:

Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ աղոթել բոլոր հոգիների դարձի համար: Ներառյալ այն մարդկանց համար, ում դուք անձնապես ճանաչում եք, գիտեք որ դժվարություններ ունեն այս կյանքում: Աղոթեք նաև խավարի միջոցով Ինձ համար կորած այն խեղճ զավակների դարձի համար, որը կուրացնում է նրանց ճշմարտության հանդեպ: Աղոթեք հատկապես կարեկցանքով և սիրով նրանց համար, ովքեր ակտիվորեն հետևում են Խաբեբայի ճանապարհին: Նրանք, առավել քան որևէ ալլ մեկը, կարիք ունեն ձեր աղոթքներին

Հայտնի դարձրեք բոլոր նրանց, ում հետ շփվում եք, այն մանրամասները, թե նրանցից յուրաքանչյուրն ինչպես կարող է փրկվել նույնիսկ մահվան պահին, ասելով **Աստվածային Գթասրտության** աղոթքը:

Խնդրում եմ, խնդրում եմ, տվեք սա (աղոթքը) յուրաքանչյուրին, ով կլսի: Կոչ արեք նրանց, եթե կհամարձակվեք, կարդալ այն և հիշել, որովհետև եթե այդպես անեք և նրանք ասեն դա իրենց վերջին շնչում, նրանք կարող են փրկվել և կփրկվեն Իմ կողմից:

Երբեք մի ամաչեք ձեր կրած խաչերից

Երբեք մի ամաչեք, երբ չհավատացողները ծիծաղում կամ ծաղրում են ձեզ, երբ աղոթում եք: Երբեք մի ամաչեք այն խաչերի համար, որ կրում եք պաշտպանության համար: Մի թաքցրեք Իմ՝ ձեր Աստվածային Փրկչի, Իմ Հավիտենական Հոր կամ Սուրբ Հոգու հանդեպ տածած այդ խորհրդանիշերը: Սուրբ պատվի այդ նշանները հպարտորեն կրելով, դուք ուրիշներին կբերեք դեպի Ինձ: Չնայած արտաքուստ այդ մարդկանցից վիրավորանք կկրեք, ներքուստ նրանք նախանձում են ձեզ ձեր հավատի համար: Այդ դիտորդներից շատերն են իրենց ներսում զգում խորը դատարկություն իրենց հավատի պակասի հետևանքով: Աղոթքը, զավակներս, կարող է օգնել Ինձ գրավելու նրանց հոգիները: Ասեք այս աղոթքը նրանց համար.

<<Իմ սիրելի Տեր, Ես վեր եմ բարձրացնում ձեռքերս խնդրելու Քեզ, որ վերցնես իմ սիրելի եղբորը/քրոջը քո քնքուշ բազուկների մեջ: Օրհնիր նրանց Քո սուրբ արյամբ և տուր նրանց այն շնորհը, որի կարիքն ունեն, որ թույլ տա նրանց ստանալ Քո սիրո հոգին՝ նրանց դեպի հավիտենական փրկություն առաջնորդելու համար>>:

Երբ ձեզ, Իմ հավատացյալներ, բացահայտորեն մարտահրավեր են նետում ձեր հավատի վերաբերյալ, առաջին հերթին ասեք հետևյալը. Ես Քրիստոսի հետևորդ եմ, ով մահացավ տառապանքով չհավատացողների ձեռքից: Այդ պատճառով, որպես Քրիստոսի հետևորդ, ինձ միշտ կվիրավորեն Նրա հանդեպ իմ ունեցած սիրո պատճառով: Դա է այն խաչը, որը ես կրում եմ, և ես հպարտ եմ դրա համար: Նա, իմ Փրկչիը մեռավ ոչ միայն իմ մեղքերի համար, այլև՝ ձեր:

*Երբ նրանք հպարտորեն պարծենան, որ ագնոստիկ են կամ աթեիստ, ասեք նրանց հետևյալը: Հարցրեք նրանց, արդյո՞ք իրենց այլ կերպ կզգան, երբ իրենց կյանքն այս երկրի վրա մոտենա իր ավարտին: Հետո նրանց տվեք այս խորհուրդը. Ձեր մահվան մահճում հիշեք **Աստվածային Գթասրտության** աղոթքը, նույնիսկ եթե դեռևս անվստահ եք: Բացեք ձեր սրտերը և խնդրեք Իմ Հավիտենական Հորը, որ ների նրանց: Հիշեք Իմ խոստումը: Որպես Դատավոր,*

ինչպես նաև որպես ձեր Փրկիչ, Ես կներեմ Իմ զավակներից յուրաքանչյուրին այս երկրի վրա նունիսկ իրենց վեջին շնչում: Ասացեք նրանց, որ սրտանց աղոթեն, որպեսզի կարողանան բացել իրենց սրտերը գոնե մեկ անգամ.

Աղոթքը տանում է Իմ բոլոր զավակներին ավելի մոտ դեպի Իմ Թագավորությունը երկրի վրա, երբ Երկինքն ու Երկիրը կմիանան որպես մեկ: Աղոթքի ուժը ճշմարիտ կհասկացվի միայն այն ժամանակ, երբ Իմ զավակները բացեն իրենց սրտերը և կանչեն: Խնդրեք, և եթե դա Աստծո կամքն է, ձեր աղոթքներին պատասխան կտրվի:

Երբեք չզրկեք ձեր զավակներին մկրտության խորհրդից

Ի վերջո, աղոթեք փոքր երեխաների համար, ձեր աղջիկների ու տղաների և աշխարհի երիտասարդության համար: Նրանցից յուրաքանչյուրն արժանի է, որ իրեն ցույց տրվի ճշմարտությունը: Նրանց ծնողները նրանց ցույց չեն տվել Աստծո սիրո ճշմարտությունը, ոչ էլ ուղղություն են ցույց տվել այն հոգևոր խավարի պատճառով, որը գոյություն ունի երկրի վրա վերջին երկու տասնամյակների ընթացքում: Նույնիսկ եթե ձեր սեփական հավատը թույլ է, մի փախեք ձեր պարտականությունից՝ որպես ծնողներ նրանց տալու խորհուրդների, հատկապես մկրտության խորհրդի հնարավորությունը: Ձեզ իրավասու մի համարեք զրկել ձեր սեփական զավակին այդ ամենակարևոր խորհրդից: Շատ ծնողներ, ովքեր հաստատուն կանգնած են, բարձրաձայնելով իրենց չհավատալու մասին, փչացնում են իրենց զավակների հոգիները: Տվեք ձեր զավակներին խորհուրդների ընծան: Ժամանակի ընթացքում նրանք կամ շնորհակալություն կհայտնեն ձեզ, կամ կմերժեն Ինձ: Դա կլինի նրանց գործը: Մերժեք Ինձ, եթե ուզում եք, բայց մի զրկեք Իմ զավակների հոգիները: Դուք նրանց ծնողներն եք երկրի վրա, բայց նրանք Իմ Հավիտենական Հոր զավակներն են՝ ամեն բանի և մարդկության Արարչի ու Ստեղծողի: Մի փորձեք նրանց ձեզ հետ տանել դեպի խավարը: Հիշեք նորից, որ չնայած ձեր սեփական հավատալիքներին, Ես սիրում եմ ձեզ բոլորիդ:

Ձեր Աստվածային Փրկիչ և Դատավոր

Հիսուս Քրիստոս Հավիտենական Հոր Որդի

Կոչ բոլոր եկեղեցիներին և հավատքներին միանալու Չարի դեմ

Իմ եկեղեցիներին ողջ աշխարհով մեկ. Լսեք Իմ կանչը: Դուք բոլորդ զավակներ և հետևորդներ, պատկանում եք Ինձ: Ձեզանից շատերն են հետևում իրենց եկեղեցու և Աստծո՝ մարդկության Արարչի ուսուցումներին: Դա լավ է: Ձեզանից շատերն Իմ Հավիտենական Հոր ուսուցումները տարբեր ձևով են մեկնաբանում: Դա առաջացել է մարգարեների մեկնաբանությունների միջոցով ժամանակի սկզբից ի վեր:

Շատ մարգարեներ մեկնաբանել են Աստծո ուսուցումներն այնպես, ինչպես ստացել են պատգամը: Իմ մարգարեների որոշ խոսքեր կեղծվել են: Իմ բոլոր մարգարեներին տրվել է ճշմարտությունը: Ոչ բոլոր Իմ մարգարեները կարողացան վստահանալ, որ իրենց հետևորդները մնան մեկ ուղու վրա դեպի Հավիտենական Կյանք:

Բոլոր ուղիները տանում են դեպի Աստված՝ մարդկության Արարիչը: Աստծո հետևորդները մեկնաբանում են ուսուցումները տարբեր ձևերով, որը տանում է դեպի խառնաշփոթություն: Հենց որ խառնաշփոթությունը սկսվում է, վստահ եղեք, որ միակ ճանապարհը ձեր հավատը պարզեցնելն է: Պարզապես հավատացեք և պատվեք ձեր Արարչին:

Ես կոչ եմ անում բոլոր եկեղեցիներին և հավատքներին ողջ աշխարհով մեկ, որ հիմա աղթեն մարդկության և նրանց համար, ովքեր հավատ չունեն: Աստծո սերը ոչինչ չունի կյանքի ավերման հետ: Ոչ մի մարդ իրավունք չունի Աստծո անունով կյանք խլել հանուն Ինձ կամ Իմ Հավիտենական Հոր: Դրա փոխարեն մեկտեղ հավաքվեք և միավորվեք ձեր արարչի հանդեպ ունեցած սիրով ի դեմս չարի, որն արագորեն բարձրանում է ձեր շուրջը:

Զավակներս, թույլ տվեք Ինձ հիշեցնել Աստծո օրենքները: Տասը Պատվիրանները, ուղարկված ձեզ Հավիտենական Հորից, Իր ամենասուրբ և նվիրյալ մարգարե Մովսեսի միջոցով: Այս օրենքները նախատեսված էին ուսուցանել Աստծո զավակներին, թե ինչպես պետք է նրանք պատիվ մատուցեին Աստծուն, որ առաջնորդի իրենց դեպի ճշմարտությունը: Այնքան շատերն են այսօր մոռացել դա: Նրաք, ովքեր չեն մոռացել, հազվադեպ են հասկանում, թե այդ պատվիրաններն իրականում ինչ են նշանակում: Նրանք, ովքեր չեն հասկանում Տասը Պատվիրանները, մեկնաբանում են դրանք այնպես, որ չափազանց հեռու է ճշմարտությունից: Այդպիսիններին Ես ասում եմ. Խնդրում եմ, կարդացեք տասը պատվիրանները և լսեք, կամ էլ կանգնեք Աստծո զայրույթի առջև: Նրանց իմաստը չպետք է պղտորվի կեղծ սիրո, կեղծ կարեկցանքի ետևում, կամ արդարացնի մեղքն այն ձևով, ինչպես ձեզ ասվել է:

Առաջին պատվիրանը ասում է ձեզ, որ պաշտեք միայն մեկ Արարչի՝ Իմ Հավիտենական Հորը, և հեռու մնաք կռապաշտությունից: Սակայն այդ առաջին

պատվիրանը մի կողմ է նետվել հանուն կեղծ աստվածների: Կեղծ աստվածներ ասելով Ես ի նկատի չունեմ միայն բարձր տեղերում նստած մարդկանց կամ նրանց ովքեր բարձրացնում են իրենք իրենց, որպեսզի դուք, զավակներս, ընկնեք նրանց ոտքերի առջև: Այո, դա վիրավորանք է և խորապես վիրավորում է Աստծուն: Հիմա Ես կռապաշտություն ասելով ի նկատի ունեմ իշխանության և փողի հանդեպ մարդկության սերը, որոնք կարող են Իմ զավակներին տանել դեպի դատարկ հուսահատություն: Այս հուսահատությունը տանում է դեպի հաջորդ պատվիրանի խախտումը: Ինքնահավանության մեղքը: Կյանքում ձեր սեփական ուղուն հետևելու ցանկությունը, ձեր հոգու հաշվին, կլինի ձեր անկումը: Ինքնահավանությունը սեր չէ: Այն սնափառություն է: Չնայած դրան, այսօր այն հանրահայտ ուսուցում է: Դուք, կեղծ կարեկցանքի պատրվակի տակ, բարձրացնում եք ինքներդ ձեզ և մերժում Աստծուն: ՁԵր խոնարհության պակասը կբերի ձեր անկումը: Երբ դուք ինքներդ ձեզ ուրիշներից առաջ եք դասում, նրանք և ուրիշները տառապում են դրա պատճառով: Այս Պատվիրանը երբեք չպետք է խախտել: Մարդկային մտածողությունը, որն օգտագործվում է արդարացնելու համար մեղքը, աբսուրդ է:

Հոչակավոր լինելու մոլուցքը
Երիտասարդները, որոնք մինչ այժմ առաջնորդություն չեն ստացել, հիմա քշվում են դեպի կռապաշտության անդունդը այնպիսի ուղիներով, որոնք բոլորի համար պարզ երևում են: Այն կուռքերը, որոնք Իմ երիտասարդ զավակները պաշտում են, մեծմասամբ Լույսից չեն: Շատերն են վաճառել իրենց հոգիները Սատանային, մի բան, որի համար իրենք հպարտորեն պարծենում են:

Այդ կուռքերի հիպնոտիկ տեսքը, երաժշտության և բառերի միջոցով, համոզում են Իմ զավակներին թե դա է այն ճշմարիտ ուղին որին պետք է հետևել: Նրանց գրավիչ անբարոյականությունը խրախուսում է Իմ զավակներին հետամուտ լինել նրանց: Երբ Իմ զավակներն այդպես են վարվում, նրանք փակում են Լույսը, քանի որ իրենք նույնպես քաշվում են դեպի հավիտենական խավարը: Հոչակավոր լինելու մոլուցքը այսօրվա աշխարհում նշանակում է, որ Իմ զավակներն ամեն անգամ ցանկանում են հասնել այն բարձունքներին, որոնք խաբեբայի հետևորդները հայտարարում են վայելել:

Եկեք հիմա, Իմ բոլոր զավակներ բոլոր եկեղեցիներից և հավատքներից: Միավորվեք և պայքարեք Աստխո՝ Հավիտենական Հոր հանդեպ հավատը պահելու իրավունքի համար, մեկդ մյուսին սիրելու իրավունքի համար, մաքուր Լույսի իրավունքի համար, Աստծո Սիրո՝ Հավիտենական Հոր, Երկնքի և Երկրի Արարչի Սիրո համար:

ՁԵր սիրող Փրկիչ և Արդար Դատավոր Հիսուս Քրիստոս

Մեծ Նախազգուշացումը՝ ընծա գթասրտությունից ելնելով

Ստացված երկուշաբթի 22 նոյեմբերի, 2010թ, առավոտյան ժ 2.00

Իմ սիրելի աղջիկ, Ես այնքան գոհ եմ նրանից, թե ինչպես ես դու հետևում Իմ խոսքերին ամբողջական հավատքով և ենթարկվելով: Իմ սերը քո հանդեպ ուժեղ է: Նունպես՝ քո սերն Իմ հանդեպ: Հիմա դու Ինձ շատ մոտիկ ես զգում քո սրտին: Դու մեկ ես հիմա Ինձ հետ աղջիկս: Ես և Իմ Հավիտենական Հայրը, ինչպես նաև Սուրբ Հոգին՝ Օրհնյալ Երրորդությունը, ուրախանում ենք այս շատ կարևոր կանչին տված քո պատասխանով: Մենք, և բոլոր հրեշտակներն ու սրբերը, քայլում ենք քեզ հետ ամեն օր, որ պաշտպանենք քեզ այս ամենասուրբ աշխատանքում:

Արիացիր և շարունակիր բռնել ձեռքս: Թույլ տուր Ինձ առաջնորդել քեզ քո խոսքերում, որ մարդկությանը մի հնարավորություն տամ վերջապես հասկանալու ճշմարտությունը նախքան Մեծ Նախազգուշացումը: Այս մեծ Նախազգուշացումը, սիրուց և գթասրտությունից դրդված որպես մի վերջին ընծա Իմ զավակներին, տեղի կունենա շուտով: Իմ զավակներից ամեն մեկին ցույց կտրվի իրենց կյանքը, իրենց մեղքերը, իրենց սխալները և յուրաքանչյուր վիրավորանք, որի համար նրանք պատասխանատու են իրենց եղբայրների և քույրերի առջև, ամենը մի խորհրդավոր փորձառության ժամանակ: Ոչ մի մարդ, կին կամ երեխա այս երկրի վրա չի բացառվի:

Ոմանք խորապես կցնցվեն և կտխրեն իրենց կյանքում եղած մեղքերից և անմիջապես կշրջվեն դեպի Ինձ՝ իրենց արդար դատավորը և կազատագրեն իրենք իրենց: Նրանք սիրուց և վշտից ելնելով, գթասրտություն կխնդրեն:

Մյուսներն այնպես կվատանան և շոկի մեջ կընկնեն նրանից, թե ինչ ձևով են իրենց մեղքերը բացահայտվում, որ մեռած կընկնեն, նախքան հնարավորություն կունենան ներողամտություն խնդրելու:

Եվ հետո, կլինեն նրանք, ովքեր հետևում են Խաբեբային: Նրանք, իրենց սարսափի մեջ, երբ տեսնեն իրենց անցած կյանքի չար մեղքերը իրենց առջև լուսավորված՝ նրանք կփախչեն: Նրանք կփորձեն թաքնվել, բայց գնալու տեղ չի լինի: Սուզվելով և վայր ընկնելով նրանք կամ կընդունեն այն, ինչ տեսնում են և հենց այդ պահին ներողամտություն կհայցեն, կամ կշրջվեն և կկծկվեն ամոթից և սարսափից, բայց Գթասրտություն չեն խնդրի:

Կա նաև վերջնական մեղավորը: երբ նրա մեղքերը ցույց տրվեն իրեն, նա միայն կվիճի և կմերժի, որ ինքը կատարել է այդ ծանր վիրավորանքները Աստծո Պատվիրանների հանդեպ: Նա պարզապես կմերժի ճշմարտությունը և կշրջվի դեպի հավիտենական դժոխքի խավարը

<u>Ոչ մեկի չի մերժվի Իմ Գթասրտությունը</u>

Ինչու՞ իմ զավակները չեն հասկանում սա: Եթե նրանք իսկապես ապաշխարել են և ցանկանում են գալ և ապրել Ինձ հետ նոր երկրի վրա, երբ Երկիքն ու Երկիրը դառնան մեկ, ինչու՞ նրանք ներողամտություն չեն հայցում: Ոչ մեկը չի մերժվի Իմ արդար Գթասրտությունից, եթե խղճի խայթ ցույց տա: Բայց նրանք այնքան են համակված եսասիրական նպատակների հետապնդմամբ, որ չեն կարողանում հասկանալ հետևանքները:

Արթնացեք հիմա դուք բոլորդ: Ընդունեք, որ մարդկության չար գործերի միջոցով տեղի ունենալիք փոփոխությունները, որոնց դուք շուտով ականատես կլինեք, այն կանխասացված նշաններն են, որոնք կնախորդեն Իմ վերադարձին երկիր:

<u>Թույլ տվեք Ինձ առաջնորդել ձեզ դեպի Դրախտ</u>

Այս մարգարեի և Ճշմրտության Գրքի միջոցով Ես ձեզ մեկ անգամ ևս խնդրում եմ, ձեր բոլորիդ հանդեպ ունեցած Իմ թանկագին սիրուց ելնելով, Շրջվեք դեպի Ինձ հիմա, նախքան ժամանակը կլրանա: Թույլ տվեք Ինձ պահել ձեզ Իմ բազուկների մեջ: Թույլ տվեք Իմ սերը հոսի ձեր միջոցով դեպի միտքը, մարմինը և հոգին: Բացեք ձեր սրտերը և թույլ տվեք Ինձ առաջնորդել ձեզ դեպի Իմ Դրախտը Երկրի վրա, ուր կվայելելեք Հավիտենական Կյանք: Ինչու՞ պետք է ցանկանաք ընտրել մյուս՝ դատապարտության ճանապարհը դեպի ոչ մի տեղ, երբ ճշմարտությունը բացահայտվել է:

Իմ սիրտը ծանրացած է անհանգստությամբ և տխուր է երբ մտածում եմ Իմ այն զավակների մասին, ովքեր մերժում են ընդունել Իմ խոստումի ճշմարտությունը: Ես ասում եմ, մեկ անգամ ևս, շրջվեք դեպի Ինձ հիմա և խոսեք Ինձ հետ: Խնդրեք Ինձ, որ ետ գամ ձեր սրտի մեջ: Ես կհարմարվեմ ձեր հոգու ներսում: Ես տալիս եմ ձեզ այս խոստումը: Նույնիսկ ամենակարծրացած հոգիների համար: Ձեզ պետք է ասել միայն մեկ բառ: Խնդրեք Ինձ, որ ձեզ ցույց տամ Իմ ներկայությունը, ասելով.

Հիսուս, ես կորած եմ զգում: Բաց արա իմ սիրտը որ ընդունեմ Քո սերը և ցույց տուր Ինձ ճշմարտությունը, որպեսզի ես փրկվեմ:

Նախազգուշացման Իմ խոսքերը սպառնալիք չեն: Այս իրադարձության մասին հայտնի է դարձվել խաչի վրա իմ մահվանից ի վեր: Ինչու՞ եք մտածում, որ դա չի կարող տեղի ունենալ: Ճշմարտությունը Սուրբ Գրքի մեջ է, որ բոլորը հասկանան: Ես կգործեմ որպես Փրկիչ մինչև այն վերջին պահը, երբ կգամ որպես Արդար Դատավոր, որպեսզի վերջապես տանեմ Իմ զավակներին դեպի մեծ սիրո, ուրախության և երջանկության Իմ ընտանիքը, ուր բոլորը կապրեն ներդաշնակության մեջ հավիտյան:

Սատանան և նրա հետևորդները կընկղմվեն խավարի մեջ ընդմիշտ: Իմ ընտանիքն ականատես կլինի այն ուրախությանը և Աստվածային Դրախտին, որը ոչ մի մարդ, եթե նույնիսկ մի թեթևակի հայացքով զգային նրա խոստումները, իր մեջքը չէր շրջի Իմ Հոր Թագավորության այդ մաքուր երջանկությունից:

Աղոթեք, աղոթեք թողություն ստանալու համար և ներս մտեք Իմ Հոր Թագավորություն փառքով, որտեղ ձեզ և ձեր սիրելիներին կողջունեն մաքուր սիրո լույսի մեջ:

<u>Ես կմարտնչեմ, որ ձեզ բոլորիդ ետ տանեմ</u>

Ես մեռա ձեր բոլորի համար, և Ես մինչև վերջին պահը կմարտնչեմ, որ ձեզ բոլորիդ ետ բերեմ դեպի Ինձ, չնայած աշխարհում տիրող խավարին:

Խնդրում եմ թույլ տվեք Ինձ ցույց տալ ձեզ, մեկ անգամ ևս, թե որքան շատ եմ Ես ձեզ սիրում: Բռնեք հիմա Իմ ձեռքը, դրեք ձեր գլուխն Իմ ուսին, և ձեր նուրբ հոգին կբռնկվի մի այնպիսի սիրով, որը դուք մոռացել եք:

Ձեր Սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Միջուկային պատերազմի նախազգուշացում

Ստացված երեքշաբթի 23 նոյեմբերի, 2010թ, ժ 3.00

Աղջիկս, դու տառապում ես, որովհետև Ինձ համար կատարում ես այս աշխատանքը: Խավարը, որ զգում ես, գալիս է Խաբեբայից, ով ամեն ժամ հարվածում է մարդկանց միջոցով, որոնց դու ճանաչում ես, իր խավարի միջոցով, քեզ վրա հարձակվելու համար: Չնայած հուսահատության քո զգացողությանը, դու իրականում պաշտպանված ես: Նա, Խաբեբան, Ես ասել եմ քեզ, որ չի վնասի քո հոգին: Դու պետք է շարունակես աղոթել **Ամենասուրբ**

Վարդարանը, որ մշտապես պաշտպանված լինես տառապանքից: Այս հոգոր պաշտամունքը Իմ Մոր հանդեպ աղոթելով դու կտեսնես տարբերությունը:

Աշխատանքը, որը ջանում ես ավարտել հանուն Ինձ, հեշտ չէ, բայց դու պետք է ուժեղ մնաս աղջիկս: Քանի որ այս գործն է որը, երբ բացահայտվի աշխարհին, Իմ զավակներին կբերի խաղաղություն և գոհունակություն:

Երբ Իմ զավակները հասկանան ճշմարտությունը, կիմանան, որ իրենց Արարիչը իրենց մի կողմ չի նետել և չի մոռացել: Այն հանգստությունը, որը նրանք կզգան այս գրքի միջոցով բացահայտվող ճշմարտությունն իմանալուց հետո, նրանց ավելի կմոտեցնի Ինձ:

<u>Նախապատրաստվեք սպասվող պատերազմին</u>

Մի վախեցիր, աղջիկս, դու ապահով ես, չնայած անօգնական ես զգում և վախենում ես անորոշությունից: Աշխարհը, ներառյալ քո երկիրը, շուտով ավելի շատ ցավ կզգա, այն համաշխարհային վերահսկողության արդյունքում, որը մարդկանց կթողնի անուժ, ուստի դրա համար կարևոր է հիմա նախապատրաստվել:

Ես քեզ նախկինում ասել եմ, որ դու պետք է Իմ զավակներին ասես, որ հիմա սկսեն նախապատրաստվել նախքան սարսափելի գլոբալ պատերազմը կսկսվի:Պատերազմը, որի մասին Ես խոսում եմ, ղեկավարվում է հիմա Կարմիր Վիշապի կողմից: Վիշապը, համաշխարհային նոր էներգիան, հիմա պլանավորում է և կոչնչացնի քաղաքներ արևմուտքում: Ժամանակը մոտ է: Աղոթեք, աղոթեք ապաշխարության համար, քանի որ այս չարիքը չի կարող կանգնեցվել, քանի որ բավարար աղոթք չկա այն կանխելու համար: Աղոթեք այն հոգիների համար, որոնք կմահանան այս միջուկային պատերազմի ընթացքում:

<u>Երեք տարի, նախքան սյուժեն կծավալվի</u>

Աղոթեք այդ հոգիների համար հիմա: Մինչ գլոբալ մի ուժ զգուշորեն վերցնում է իշխանությունը, նրանք, աղջիկս, կեղծ կարեկցանքի տակ նպատակ կդնեն վերահսկել ապրելու, ուտելու և աղոթելու ձեր իրավունքը: Այդ պատճառով Իմ ժողովուրդը պետք է ձգտի հասնել ինքնաբավ լինելուն: Աճեցրեք ձեր սեփական սնունդը: Այդ ընթացքում ապաստաններ գտեք, ուր կարող եք հանդիպել միմյանց՝ ձեր Աստվածային Փրկչին պատվելու համար: Մնացեք ուժեղ: Շատ մարդկանց մի ասեք, թե ինչի համար եք դուք դա անում: ԸՆդամենը երեք տարի կտևի որ այս սյուժեի նշանները ծավալվեն ձեր աչքերի առջև: Այդ ընթացքում ձեր պլանները կստեղծեն աջակցության մի ձև, որը ձեզ տարօրինակ կթվա և

դուք հարցականի տակ կդնեք և կկասկածեք ժամանակ առ ժամանակ: Աճեցրեք ձեր սեփական սնունդը հիմա: Հիմա գնեք այն սերմերը, որոնք վաճառքի չեն լինի հետո: Դա կսնի ձեր ընտանիքը, երբ համաշխարհային սով սկսվի

Գնացեք հիմա և նախապատրաստվեք: Ձեր Սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Աստիճաններ դեպի հոգևոր կատարելություն

Ստացված չորեքշաբթի, 24 նոյեմբերի 2010թ, առավոտյան 2.30

Գրիր սա, սիրելի աղջիկս: Հավատքը մի ուղի ունի ամայացնելու Իմ ամենանվիրյալ հետևորդներին այն ժամանակ, երբ նրանք ամենաքիչն են այդ ակնկալում: Սա կարևոր է, քանի որ փորձում է նրանց հավատը, որպեսզի նրանք ետ գան դեպի Իմ սիրտը ավելի ուժեղացած այդ փորձառությունից: Մի վախեցիր, սա մի փորձություն է, որը Ես թույլ եմ տալիս Իմ զավակները կրեն, որպեսզի նրանք ավելի ուժեղ դառնան:

Հեշտ չէ պահպանել ձեր հավատն Իմ հանդեպ, զավակներս, քանի որ այնքան շատ խոչընդոտներ կան, որոնք խանգարում են ձեր նվիրմանը: Դուք, ժամանակ առ ժամանակ, ձեր հոգում կզգաք ամբողջական դատարկություն: Դա ձեզ կարող է թողնել անհանգիստ վիճակում, քանի որ ամբողջապես միայնակ եք զգում:

Իմ հավատարիմ հետևորդները պետք է հասկանան սա: Ես, չնայած ձեր զգացած միայնությանը, երբեք հեռու չեմ: Այս բոլոր էպիզոդներն ունեն մեկ նպատակ. Հզորացնել ձեր հավատն այնպես, որ վստահեցվի, որ դուք մի նոր քայլ եք կատարում առաջ դեպի Ինձ ամեն անգամ: Սա այն է, ինչ կոչվում է սանդուղք դեպի հոգևոր կատարելություն, որը Դրախտն է: Դա երկար սանդուղք է, և բավականին երկար ժամանակ կարող է պահանջվել վերին աստիճաններին հասնելու համար: Յուրաքանչյուր աստիճան կարող է ներկայացնել մի նոր հայտնություն այն դասերի, որոնք դուք պետք է զգաք, նախքան կկարողանաք ստանալ ձեզ անհրաժեշտ այն շնորհները, որ վեր բարձրացնեք ձեր հոգիները դեպի այն հոգևոր կատարելություն, որն անհրաժեշտ է Իմ Հոր Դրախտը մտնելու համար:

Ամեն վեր բարձրացող աստիճանի հետ, մի նոր գիտակցությամբ հասկանում եք, թե Ես ձեզնից ինչ եմ ակնկալում: Երբեմն դժվար է: Երբեմն էլ այն կարող է

անարդար թվալ: Բայց ամեն աստիճան մագլցելուց հետո դուք ավելի հստակորեն եք հասկանում Իմ ուսուցումների ճշմարտությունը:

Ոմանք արագորեն են մագլցում այս աստիճանները, մինչդեռ մյուսները չեն շտապում: Իմ նվիրյալ հետևորդներից ոմանք կարող են կորցնել արիությունը և մի աստիճան, երկու, երբեմն էլ միանգամից երեք աստիճան ետ գնալ: Սա բնական է: Մյուսները, որ արագորեն են բարձրանում վստահություն են ձեռք բերում, որը նրանց համոզում է, թե իրենք հասկանում են ամեն հոգևոր հարց: Բայց դա Խաբեբայի ձևն է՝ ձեզ հավատացնել տալու և ընդունելու այդ կեղծ վստահությունը: Ձեզ վրա հեղվող բոլոր ընծաները գալիս են միայն Ինձնից: Դրանք տրվում են ձեզ, Իմ հավատարիմ հետևորդներ, ձեր հանդեպ Իմ ունեցած ասնահման սիրուց ելնելով: Դուք երբեք չպետք է մտածեք, որ եթե ձեր հավատն ուժեղ է, ուրեմն դա այն ամենն է, ինչ պետք է անեք: Այո, ձեր հավատը կարող է ուժեղ լինել ձեր սրտի քնքշության պատճառով: Սակայն սա նույնպես մի ընծա է Իմ կողմից տրված: Դուք պետք է, վերևի աստիճանին հասնելու համար, խոնարհ լինեք Իմ հանդեպ ձեր սիրո մեջ: Ամեն անգամ ցույց տվեք արժանիքներ:

Վստահություն ցույց տվեք ձեր հավատով ամեն դեպքում, քանի որ դա հաճելի է Ինձ: Բայց երբեք մի ընկեք այն թակարդի մեջ, թե դուք գիտեք Աստվածային թագավորության բոլոր առեղծվածները: Որպես մարդիկ՝ ծնված սկզբնական մեղքով, միայն ժամանակը կբացահայտի ձեզ այդ առեղծվածները, զավակներս:

Միշտ ձգտեք ընդունել ամեն ինչ, նույնիսկ փորձությունները, որոնք Ես կուղարկեմ ձեզ որպես ընծա Իմ կողմից: Իմ բոլոր ընծաները հեղվում են, որ ձեզ ավելի ուժեղ դարձնեն Իմ հանդեպ ձեր ունեցած սիրո մեջ:

Ես այնքան հպարտ եմ Իմ բոլոր այն զավակներով, ովքեր հավատում են Ինձ և Ինձ պատիվ ու հարգանք են ցույց տալիս: Որպեսզի Ես կարողանակ ձեզ վեր բարձրացնել դեպի Իմ Հոր Դրախտի ամբողջական փառքը, դուք պետք է զգաք Իմ մեջ կատարյալ միության փառքը:

Սա անելու համար, զավակներս, ժամանակ է պահանջվում և համբերություն, նախքան դուք տեղի կտաք ձեր հոգու ամբողջական հանձնմանը Ինձ: Հենց որ դա տեղի ունենա, դուք կդառնաք Իմ Առեղծվածային Մարմնի մի մասը հավիտյան:

Հանձնվեք, զավակներս, Իմ բացարձակ մաքուր սիրուն և այլևս կարիք չեք ունենա ետ նայել կամ վախենալ, քանի որ ապահով կլինեք Իմ բազուկների մեջ:

Ուժեղ մնացեք, Իմ հավատարիմ զավակներ, նույնիսկ խոչընդոտների դեպքում, քանի որ Ես երբեք, երբեք չեմ լքի Իմ հավատարիմ հետևորդներին:
Ձեր Սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Աշխարհի բնակչությունը նվազեցնելու եւ համաշխարհային առաջնորդներին տապալելու գլոբալ ծրագիր

Ստացված Ուրբաթ 26 Նոյեմբեր 2010թ, առավոտյան ժ. 3

Իմ սիրելի աղջիկ, շուտով քեզ ուղղություն կտրվի հոգևոր առաջնորդի կողմից: Բայց հիշիր, Իմ հետևորդներից շատերին եմ Ես կանչել, բայց բոլորը չէ որ ընդունում են: Ես չեմ կարող, ինչպես գիտես, միջամտել ազատ կամքին, որը մարդկությանը տրված մի ընծա է: Բայց անկախ դրանից, հիմա կարևոր է շարունակել այս հրատապ աշխատանքը, որպեսզի Իմ զավակները լսեն և փրկվեն:

Նշանները
Չսխալվեք, փոփոխությունները շեմին են և շատ շուտով այնքան շատ նշաններ կլինեն, որ այս երկրի վրա շատ քչերը չեն նկատի դրանք: Ես խոսում եմ այն նշանների մասին, որոնք կապված են Եվրոպայում Իմ տեսանողների միջոցով տրվող Իմ Սիրելի Մոր երևումներին: Շատերը, ովքեր բացել են իրենց միտքը և թակարդի մեջ ընկած իրենց հոգիները, կհասկանան, որ այս հաղորդակցությունը գալիս է Երկնքից: Երբ Իմ զավակները տեսնեն այն հրաշք նշանները, որոնք կերևան արևի միջոցով, այդ ժամանակ նրանք կիմանան ճշմարտությունը:
Արհամարհիր այն վիրավորանքները, ծաղրը և ատելությունը, որ մարդիկ ցույց կտան, կարդալով այս ձեռագրի բովանդակությունը: Նույն բանը պատահեց Իմ առաքյալների հետ, ովքեր Սուրբ Հոգու ընծայի միջոցով ստեղծեցին իրենց աշխատանքը: Քեզ նույնպես, աղջիկս, տրվել է այդ ընծան: Երբեք չժխտես կամ չկասկածես դրան: Այն իրական է, և դու գիտես դա: Քո կասկածները, վերջապես սկսել են տեղի տալ:
Ես, ինչպես արդեն քեզ ասել եմ, օգնություն կուղարկեմ քեզ: Այս խոստումն արդեն ակնհայտ է դառնում: Ես նաև քեզ տեղեկություն կտամ գալիք դեպքերի մասին, որը դու պետք է բացահայտես բոլորին, ներառյալ չհավատացողներին: Ինչ նշանակություն ունի, եթե նրանք սկզբում չհավատան: Որովհետև իրադարձությունների զարգացման հետ նրանք այլ ընտրություն չեն ունենա՝ բացի ճշմարտությունն ընդունելուց:

Պատերազմ սկսելու ծրագիր

Մի թունավոր գաղտնի ծրագիր կա համաշխարհային իշխանության կողմից պատերազմ սկսելու, որի նպատակն է նվազեցնել երկրի բնակչությունը: Աղոթեք, աղոթեք հիմա, որ օգնեք նվազեցնել այն վնասը, որն այդ չար մարդիկ ցանկանում են պատճառել երկրին: Նրանց հիմար դաշինքը Խաբեբայի հետ նշանակում է, որ Սատանայի իշխանության տակ գտնվելու համար, նրանից ստացված սատանայական ուժերի միջոցով, այդ մարդիկ մտադիր են ամեն գնով կատարել այդ առաջադրանքը:

Հռոմի պապ Բենեդիկտոսին տապալելու ծրագրեր

Կան նաև գաղտնի ծրագրեր գրավել եկեղեցիները և զանազան հավատքները, ներառյալ Վատիկանը: Իմ Պապը՝ Իմ սիրելի Բենեդիկտը, շրջապատված է այն մարդկանցով, ովքեր նյութում են նրա անկումը: Այլ համաշխարհային առաջնորդներ, անտեղյակ իրենց սեփական իշխանությունների մեջ թաքնված գաղտնի ուժերին, նույնպես մի քանիսի կողմից նշանակետ են դարձել, գլորվելու համար:
Զավակներս, արթնացեք և կռվեք: Սա շատ իրական պատերազմ է, որը նման չէ երկրի վրա եղած որևէ պատերազմի: Դա մի պատերազմ է ձեզ վրա, Իմ զավակներից յուրաքանչյուրի վրա և ամեն մեկի վրա առանձին: Դուք եք թիրախը: Խնդիրն այն է, որ դուք չեք կարող տեսնել թշնամուն: Սրտով վախկոտներ, նրանք չունեն իրենք իրենց բացահայտելու խիզախությունը:

Գաղտնի Հանդիպումներ

Ինքներն իրենցով տարված, նրանք գաղտնի հանդիպում են ձեր համայնքների ներսում և ցրված են յուրաքանչյուր խավի մեջ: Նրանց կգտնեք ոչ միայն ձեր կառավարության միջանցքներում, այլև արդարադատության համակարգում, ոստիկանության ուժերում, գործարար համայնքներում, կրթական համակարգում և զինուժի մեջ:
Երբեք թույլ չտաք այդ մարդկանց թելադրել ձեզ, թե ինչպես աղոթեք: Ուշադիր եղեք, թե ինչպես նրանք կփորձեն կառավարել ձեր կյանքը, և այժմվանից սկսվեք նախապատրաստվել նրան,ինչ առջևում սպասվում է:

Նախազգուշացում գլոբալ վակցինացիայից

Ամենից առաջ աղոթեք խմբերով: Աղոթեք այն մարդկանց համար, ովքեր Սատանայի կրքոտ օգնականներն են: Աղոթքը կօգնի խուսափել այդ աղետներից մի քանիսից: Զգուշացեք այն վայրագություններից, որոնք նրանք կփորձեն **պատճառել վակցինացիայի միջոցով:** Չվստահեք ոչ մի **հանկարծահաս գլոբալ վակցինացիայի նախաձեռնության,** որն իր

մտադրություններով կարեկցող կթվա: Զգույշ եղեք: Մեկը մյուսի ետևից երկրներին կդավաճանեն՝ վերահսկելու համար որքան հնարավոր է շատ մարդկանց:
Չվախենաք, որովհետև Ես կպաշտպանեմ Իմ հետևորդներին, ովքեր աղոթում են Ինձ: Աղոթեք նաև ձեր մեջ գտնվող այն խիզախ հոգիների համար, ովքեր որոշել են տարածել ճշմարտությունը: Նրանցից շատերի վրա են ծիծաղում, բայց նրանք հիմնականում խոսում են ճշմարտությունը:

Պահեստավորեք սնունդ

Հույսներդ մի դրեք սնունդ մատակարարողների վրա: Այժմվանից նախապատրաստվեք ապագայի համար: Սկսեք սնունդ հավաքել և աճեցնել ձեր սեփականը: Պահեստավորեք այնպես, ասես թե պատերազմ է լինելու: Նրանք, ովքեր այդպես կանեն, լավ կլինեն: Աղոթքն ու պաշտամունքը կուժեղացնեն ձեր հոգիները և կփրկեն ձեզ այդ մարդկանց չար ուղիներից: Երբեք թույլ չտաք նրանց վերահսկել ձեր միտքը կամ հավատալիքները՝ ստիպելով ներմուծել այնպիսի օրենքներ, որոնք նախագծված են ընտանիքների վերացման նպատակով: Նրանք կջանան անջատել ընտանիքի անդամներին միմյանցից, խրախուսելով բաժանումները՝ ներառյալ ամուսնալուծությունը, սեռական և կրոնական ազատությունը:

Համաշխարհային առաջնորդների սպանությունը

Նրանք ատելություն կխրախուսեն ազգերի միջև, կսպանեն համաշխարհային առաջնորդների և կգրավեն մարդկանց ազատությունը՝ ստիպելով նրանց հույսները դնել իրենց բռնապետության վրա:
Աստծո զայրույթը կարճ ժամանակում կերևա, քանի որ Նա չի թույլ տա նրանց չարությունը երկար ժամանակով, պայմանով որ այդ մարդիկ, ովքեր ընտրել են հետևել իրենց Սատանայի կողմից ոգեշնչված կազմակերպություններին, ետ դառնան այդ չար դաժանություններից: Աղոթեք նրանց համար:
Ուշադիր եղեք, թե ձեր երկրներում ընտրությունների ժամանակ ում եք ձայն տալիս: Հետևեք, այն բառերին, թե ինչպես են նրանք խոսում: Լսեք նրանց, ովքեր փորձում են ձեզ նախազգուշացնել: Ես պարտադրում եմ ձեզ աղոթել նրանց համար, ովքեր չեն աղոթում, որպեսզի նրանք դարձի գան և նույնպես կարողանան փրկվել:
Այս իրադարձությունները, որոնց մասին Ես խոսում են, շուտով կսկեն կատարվել: Ամուր կպեք իրար, պատրաստ պահեք սննդի ձեր սեփական պաշարները, մտածեք, թե ինչպես աճեցնեք ձեր սեփական բանջարեղենը և գոյատևման այլ միջոցներ: Սա պատերազմ է ձեր դեմ, բայց դա այդպես չի երևա:Պարզապես զգոն եղեք:

Եկեղեցիները կարգելվեն

Ձեզանից նրանք, ովքեր խիզախություն կունենան գնալ իրենց եկեղեցիները և աղոթել, երբեք չվախենաք աղոթելուց կամ ձեր հավատքը բացահայտ ցույց տալուց: Նրանք, ովքեր չեն վստահի Իմ Եկեղեցուն, թող չգնան: Քանի որ միայն այն ժամանակ, երբ այս ընծան, որը ներկայացնում է ձեր հավատքը բացահայտորեն, կվերցվի ձեզնից, այդ ժամանակ ճշմարտությունը վերջապես կհասնի ձեզ, և դա ձեզ սարսափելիորեն կզայրացնի:
Աղջիկս, ասա Իմ ժողովրդին, որ խուճապի չմատնվեն: Նրանք, Իմ հետնորդները, կփրկվեն և Ինձ հետ վեր կբարձրացվեն ամպերի մեջ՝ սպասելու համար երկրի վրա Իմ նոր Դրախտին: Նրանց դուր կգա Իմ Նոր Դրախտը, և նրանք կվերամիանան իրենց մահացած ընտանիքի անդամներին այդ նոր Հավիտենական Կյանքում: Նրանք պետք է ուժեղ մնան, աղոթեն և մեկը մյուսի հանդեպ սեր ցույց տան: Աղոթեք, աղոթեք, աղոթեք հատկապես այն կորած, խաբված հոգիների համար, ովքեր գաղափար չունեն, թե իրենց գործողություններն ինչ կարող են նշանակել հաջորդ կյանքում իրենց ապագայի համար:

Նրանց, ովքեր գաղջ են հոգով

Աղոթեք նաև իմ մյուս զավակների համար, ովքեր գաղջ են հոգով: Նրանք պետք է շրջվեն դեպի Ինձ և շտապ: Զավակներս, հանուն միմյանց հաղեպ ուեցած սիրո, մի տատանվեք այդ մարդկանց նախազգուշացնել ճշմարտության մասին: Ցույց տվեք նրանց, օրինակի միջոցով, աղոթքի կարևորությունը, որպեսզի նրանք նույնպես չկորչեն:
Ուժեղ մնացեք: Երբեք տեղի մի տվեք Խաբեբայի բանակին: Երբեք: Պաշտպանեք այն, ինչին դուք հավատում եք: Պաշտպանեք ձեր ընտանիքը հիմա: Շրջվեք դեպի Ինձ: Ամեն օր աղոթեք Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքը: Բոլոր քրիստոնյաներին՝ ամենուր. **Աղոթեք Վարդարանը:** Թույլ տվեք Իմ Մորը ձեզ ետ բերել Իր միջնորդության միջոցով:
Զավակներս, Ես կանչում եմ ձեզ բոլորիդ և կարիք ունեմ, որ հիմա Իմ հետևորդները Ինձ հետ համախմբվեն Չարի դեմ: Աղոթեք ի պատասխան:
Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Հայտնության Գիրքը

Իմ սիրելի աղջիկ, Այսօր մի օր է, երբ Իմ սիրտը կոտրված է աշխարհում տիրող անհանգստությունից և դժբախտությունից: Ես հուսահատությամբ նայում եմ, մինչ աշխարհը բարկությամբ բարձրանում է մեկը մյուսի դեմ: Տխրության մեծ

մասը գալիս է այն իմացությունից, որ այս մարգարեությունները կծավալվեն, սկայն մարդկության մեծ մասն ավելի իմաստուն չի դառնա:

Աղոթեք, որ Ռուսաստանը նվիրաբերվի Իմ Օրհնյալ Մորը
Նրանք կմերժեն ընդունել, որ այս դեպքերը կանխասցվել են Հովհաննու Գրքում: Հիմա այնքան շատերը կտառապեն հավատի պակասի պատճառով: Աղոթեք հիմա, որ Ռուսաստանը վերջապես հանդարտվի և թույլ տա որ իրեն վերջապես նվիրաբերեն Իմ Սուրբ Մորը: Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ դա տեղի ունենա: Որովհետև աղոթքի միջոցով հնարավոր կլինի այդ մեծ նվաճումը: Եթե սա տեղի ունենա, միլիոնավոր մարդիկ կփրկվեն: Քանի որ վտանգ կա, որ կոմունիստական ուժերը կբարձրանան օձի հետ և կմիավորվեն, թողնելով ձեզ, զավակներս, անուժ:

Նայիր հիմա այն արագությանը, որով ազգերը բարձրանում են կռվելու: Գլոբալ իրադարձությունների արագությունը բավականին մեծ սարսափ կառաջացնի, մինչ դրանք կծավալվեն իրենց ինտենսիվությամբ: Իմ հետևորդներ, դուք պետք է լսեք: Աղոթախմբերն էական են ապաշխարություն տարածելու և այս աղետաբեր իրադարձությունները ցրելու համար: Նունիսկ ձեզնից նրանք, ովքեր ինքնագոհ են և ամեն ինչ գոհությամբ են ընդունում, դուք այլևս ի վիճակի չեք լինի արհամարհել այս դեպքերը: Դուք պետք է լսեք Ինձ հիմա և ընդունեք, որ Հայտնության գրքում կանխասացված իրադարձությունները տեղի կունենան:

Պարզեք ձեր ձեռքերը աղոթքի մեջ հիմա: Եթե նույնիսկ ձեր սրտի մեջ համակրանքի մի կայծ ունեք Իմ հանդեպ, խնդրեք Ինձ բռնել ձեզ, որպեսզի կարողանամ վառել և ուժեղացնել ձեր հավատն Իմ հանդեպ:

Ես կկռվեմ ձեզնից յուրաքանչյուրի համար

Ես մինչև վերջ կպայքարեմ, որ ձեզ բոլորիդ ավելի մոտեցնեմ Իմ սրտին, անկախ նրանից, թե երեխա է, դեռահաս, երիտասարդ չափահաս, միջին տարիքի կամ ծեր, Իմ աչքում դուք բոլորդ նույնն եք: Դուք Իմ թանկագին սիրելի ընտանիքն եք՝ ձեզանից յուրաքանչուրը առանձին առանձին վերցրած: Ոչ մեկը չի բացառվում: Նույնիսկ նրանք, ովքեր չեն ընդունում, որ Ես գոյություն ունեմ: Նույնիսկ նրանք, ովքեր ընդունում են, բայց ատում են Ինձ. Ես էլի սիրում եմ ձեզ: Իմ սերը նախանձախնդիր է ձեր հասկացողությունից այն կողմ, և Ես ամեն ինչ կանեմ Իմ զորությամբ, որ ձեզ ետ բերեմ դեպի Իմ հոտը: Ես այդպես հեշտությամբ Սատանային չեմ տա ձեր հոգին:

Խնդրում եմ շրջվեք դեպի Ինձ

Խնդրում եմ շրջվեք դեպի Ինձ: Անկախ նրանից, թե որքան շատ կասկածներ ունեք, և թույլ տվեք Ինձ լցնել ձեր սիրտն Իմ Աստվածային Սիրով: Այդ սիրո մեկ անգամ զգացողությունը կօգնի ձեզ նախապատրաստվել Հավիտենական Կյանքին Ինձ, Իմ Հավիտենական Հոր և ձեր եղբայրների ու քույրերի հետ Դրախտում: Դա ձեր ժառանգությունն է: Ձեր իրավական ժառանգությունը:

Մի վատնեք փրկության այս հնարավորությունը: Երբ ձեր կյանքը երկրի վրա հասնի ավարտին, դուք երկու ընտրություն կունենաք հաջորդ կյանքում: Երկինքը՝ Դրախտի մեջ, կամ Դժոխի խորքերը Սատանայի հետ, ով կտանի ձեզ իր հետ այն մեղքերի միջոցով, որոնք գայթակղեցնում է ձեզ գործել երկրի վրա: Բաց արեք ձեր աչքերը հիմա: Հիշեք, որ երկրի վրա մահը կարող է տեղի ունենալ ցանկացած օր, ցանկացած ժամանակ և երբ ամենաքիչն եք սպասում դրան:

Այս պատգամի միջոցով Ես աղերսում եմ ձեզ տեսնել ճշմարտությունը նախքան Դատաստանի Օրը: Միշտ հիշեք, որ Ես սիրում եմ ձեզ անկախ նրանից, թե որքան ծանր մեղք եք գործել: Երբ շրջվեք դեպի Ինձ և ներողամտություն խնդրեք ձեր սրտի խորքից, ձեզ ներում կշնորհվի, նույնիսկ ձեր վերջին շնչի ժամանակ:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Կոչ հավատացողներին դարձի բերելու կորած հոգիներին

Ստացված ուրբաթ 26 նոյեմբերի 2010 թ, ժ 12 կեսգիշեր

Իմ սիրելի աղջիկ, Օրհնյալ Երրորդությունը միանում է քեզ որպես մեկ՝ առաջ տանելու համար աստվածային ճշմարտությունը դեպի աշխարհում գտնվող յուրաքանչյուր հոգու, որպես հրատապ հարց:

Դու, աղջիկս, հիմա մարդկության համար զգում ես քո սրտում ցավ և տառապանք Ինձ հետ միացած: Նրանց կորած հավատը քեզ բերում է խորը տխրություն և վախի զգացում իրենց ապագայի հանդեպ:

Հիմա, այս ժամին Իմ նվիրյալ և հավատարիմ հետևորդները միավորվում են աշխարհով մեկ հզոր աստվածային սիրո կապով՝ կռվելու համար, որ հոգիներ փրկեն դատապարտությունից:

Նրանք, լույսի Իմ զավակները, բոլոր ազգերի մեջ կան: Նրանք վայրկենապես կճանաչեն մեկը մյուսին անկախ իրենց ռասայից, գույնից կամ հավատքից: Ես առաջնորդում եմ նրանց, որպեսզի սիրո այդ բանակը օգնի ամրապնդել մարդկության հավատը պատմության այս պահին:

Նախկինում Ես երբեք այսքան ակնհայտ չեմ դարձրել Իմ ներկայությունը հավատացողների սրտերի մեջ: Նրանք զգում են այն տառապանքը, որը Ես եմ կրում, երբ տեսնում եմ սրտի վատությունը, որը դուրս է գալիս մարդուց, նույնիսկ նրանցից, ում կարծում եք բարի և խորամիտ: Եսասիրությունը ոչնչացնում է Իմ զավակներին:

Եսասիրությունն ու ձեզ շրջապատողներին ու թույլերին անտեսումը ամոթի բիծ է թողնում, որը դժվար է ջնջել: Դաժանությունը, որը մարդը ցուցաբերում է իր հարևանի հանդեպ, մտքում միայն մեկ նպատակ՝ ինքնաբավարարություն ստանալու համար, հասել է ամենաբարձր մակարդակին: Իրենց սեփական կարիքներով տարված լինելը մեղք է Իմ Հավիտենական Հոր աչքում:

Որքան կեղծ արդարացումներ, որոնք արվում են ինքնարժանիության անունով, ամբողջապես անընդունելի են և դեմ են Իմ ուսուցումներին: Սիրեք մեկդ մյուսին: Վարվեք այլոց հետ, ինչպես կցանկանաք որ վարվեն ձեզ հետ: Մտածեք այլոց կարիքների մասին նախքան ձեր սեփականի: Ոտքի ելեք ձեր եղբայրների և քույրերի մարդկային իրավունքների համաչ, երբ նրանք կանգնում են ուրիշների անարդարության առջև: Երբեք մի արդարացրեք որևէ մեկին պատժելը նյութական օգուտ ստանալու համար: Սեր և կարեկցանք ցույց տվեք նույնիսկ ձեր թշնամիների հանդեպ: Դա հեշտ գործ չէ այն նյութական անապահովության պաճառով, որը Իմ զավակներն են զգում: Եսասիրական հարստության, գեղեցկության և այսպես կոչված հաջողության ախտանիշները, որոնք շատերի համոզմամբ մարդկանց բնական հատկանիշներ են, պատճառ են դառնում սարսաելի խառնաշփոթության:

Միտքը, որով մարդկանց ուղեղները լվանում են՝ նրանց մեջ մտցնելով, թե իրենց սեփական կարիքներն առաջնահերթ են, վաղուց է դրվել մարդու հոգեկանի մեջ, բայց այդ փիլիսոփայությունը ուժեղացվել է ժամանակակակից հաղորդակցության միջոցների օգնությամբ: Երբ Իմ զավակները լսում են այդ պատգամները հեռուստացույցով, լրատվամիջոցներով, կինոնկարներում, երաժշտության և ինտերնետի միջոցով համարյա ամեն օր, նրանք դրանք ընդունում են որպես կարևոր:

Չնայած այն կեղծ խոստմանը, որոնք այս հավատներն են ներկայացնում, որոնք գրավիչ են այն առումով, որ առաջարկում են ինքնագոհություն, որը

դժվար է մերժել, Իմ զավակներն ընդունում են սուտը: Այն սուտը, որը ցանվել է խաբեբայի՝ Սատանայի կողմից:

Որևէ մեկի հանդեպ առավելության հասնելուց հետո նրանց զգացած անհարմարությունը, իրենց համար դժվար է հասկանալ: Նրանք, Իմ զավակները, շահելով տենչալի մրցանակը, երջանիկ չեն: Հետո նրանք ավելի ու ավելի են նույնը փնտրում, այնքան որ անհագ է նրանց ախորժակը: Բայց դա անօգուտ է: Նրանք չեն կարող ամբողջապես բավարվել: Նրանք զրկված են իրական երջանկությունից, բնական բավարարվածությունից, և չեն հասկանում իրենց ներսում զգացած դատարկությունը:

Երբ ձեզ դնում եք ուրիշներից առաջ, դա եսասիրություն է: Երբ առավելություն եք վերցնում ձեզնից թույլերի և տկարների հանդեպ, դա մեղավորություն է Երբ փչացնում եք այդպիդի մարկանց ունակությունը՝ ապրելու արժանապատվորեն, իսկ հետո զրկում եք նրանց համապատասխանաբար սնելու իրենց ընտանիքիներին, դա խորապես վիրավորում է Ինձ: Ես տառապում եմ այդ հոգիների հետ: Վատություն արեք ձեր հարևանին, և դուք դա կանեք Իմ հանդեպ: Երբ վիրավորում եք ձեր հարևանին չարության խոսքերով, դուք մեղավոր եք Իմ սրտին ցավ պատճառելու մեջ:

Երբ մարդ պատժում է մեկ ուրիշին բռնությամբ, Ես ապրում եմ այն տառապանը, որը կրեցի խաչի վրա: Ես վերապրում եմ դա: Ես զգում եմ նրանց ցավը, երբ դուք մարմնական վնաս եք պատճառում նրանց: Երբ դուք մարդասպան եք, մեղավոր եք ծայրագույն վիարվորանքի համար՝ Ինձ խաչին գամելու համար:

Զավակներս, իմացեք սա. Մեղքը կտանի ձեզ դեպի Դժոխք: Սա վախեցնում է այն բոլոր հավատացողներին, ովքեր տեսնում են Ինձ որպես գթասիրտ դատավոր: Անսահման գթասրտության Իմ խոստումը, որը Ես կտամ ձեզնից յուրաքանչյուրն և ամեն մեկին, ով կապաշխարի, դեռ երաշխավորված է: Բայց ինչպե՞ս կարող եմ Ես փրկել նրանց, ովքեր չեն տեսնի սխալն իրենց խառնակ կյանքում:

Իմ ուսուցումների ճշմարտությունը քարոզելը կարևոր է: Բարձրացող այնքան շատ ավերածությունների պատճառով է, որ Իմ զավակներից շատերի համար չափազանց դժվար է հասկանալ Աստծո խոսքը: Շատերը չունեն Աստծո խոսքի ուսուցումները մարգարեների կամ Սուրբ Հոգու միջոցով: Շատերն էլ պարզապես չեն ցանկանում իմանալ: Մյուսները կմերժեն լսել նույնիսկ այն դեպքում, երբ այդ խոսքը տարածվում է այսօրվա Իմ մարգարեների և տեսանողների միջոցով պարզ նշանների հետ մեկտեղ, որ բոլորը տեսնեն: Ահա թե ինչու հավատացողների վրա է մնում աղոթել մյուսների համար: Հիմա

հատուկ աղոթքներ են անհրաժեշտ: Աղոթելով **Աստվածային Գթասրտության** հզոր աղոթքը՝ տրված Իմ սիրելի քույր Ֆաուստինային, շատ ապաշխարություն տեղի կունենա:

Երբ դա տեղի ունենա, Ես կխնդրեմ Իմ բոլոր զավակներին վերամիավորվել աղոթախմբերի մեջ, որ շարունակեն աղոթել և առաջնորդել Իմ այդ անառակ զավակներիկն՝ ձեր եղբայրներին և քույրերին:

Հանուն Ինձ և Օրհնյալ Երրորդության Ես կոչ եմ անում Իմ սիրելի զավակներին միավորել ուժերը Իմ սրտի հետ միության մեջ և օգնել Ինձ փրկելու նրանց հոգիները: Ես նրանց բոլորին այնքան շատ եմ սիրում, որ տխուր և դառը արտասուք եմ թափում նրանց համար: Ես չեմ ցանկանում կորցնել նրանց:

Օգնեք Ինձ լույսի մեջ գտնվող Իմ հետևորդներ, վերամիավորելու այդ կորած հոգիներին Իմ ընտանիքի հետ, որպեսզի նրանք նույնպես զգան այն ճշմարիտ Դրախտը, որի համարայնքան հուսահատորեն պայքարում են:
Տվեք ձեր ձեռքը նրանց: Խոսեք նրանց հետ: Լսեք նրանց: Կարեկցանք ցույց տվեք նրանց հանդեպ նույնիսկ երբ նրանք ի պատասխան ձեր դեմքին վիրավորանք նետեն: Համբերատար եղեք: Ամենից առավել, զգացնել տվեք նրանց իրենց հանդեպ ունեցած Իմ սերը ձեր միջոցով:

Նրանց համար դժվար կլինի ձեզ վանելը, նույնիսկ եթե ծաղրեն ձեզ: Ձեր աղոթքներով դուք կարող եք և կփրկեք նրանց հոգիները:

Ես ողջունում եմ ձեզ Իմ թանկագին հետևորդներ: Դուք արցունքներ եք բերում Իմ աչքերին այն սիրով և նվիրվածությամբ, որ ցուցաբերում եք Իմ հանդեպ, Իմ Օրհնյալ Մոր՝ Երկնքի Թագուհու և Օրհնյալ Երրորդության հանդեպ:

Մենք և երկնքի բոլոր հրեշտակներն ու սրբերը ուրախանում ենք հիմա այս կանչի հանդեպ ձեր արձագանքով: Ուստի գնացեք ձեր աշխատանքին, հանուն Իմ Հավիտենական Հոր: Ետ բերեք Իմ հոտը:

Ձեր նվիրված Փրկիչ Հիսուս Քրիստոս

Իսկական տեսանողների հետապնդումը

Ստացված Երկուշաբթի 29 Նոյեմբեր 2010թ, երեկոյան ժ 12.48

Աղջիկս, գրիր սա, աշխարհին նախազգուշացնելու համար այն հալածանքների մասին, որոնք հասցվում են Իմ ընտրյալ հոգիներին՝ ուղարկված աշխարհ

ճշմարտությունը հասցնելու համար, որպեսզի փրկեն հոգիների նախքան Իմ Երկրորդ Գալուստը:
Դուք կնկատեք, որ Իմ ընտրյալ տեսանողները և մարգարեները բացահայտ և ավելի շատ կմերժվեն, քան կեղծ մարգարեները: Իմ այդ գեղեցիկ հոգիները, ընտրված իրենց պարզ նվիրվածության համար, կտառապեն Ինձ հետ միասին այն մերժումը, որը Ես տառապեցի մարդկության ձեռքից:
Նրանք, ովքեր տառապում են Իմ մեջ, Ինձ հետ և Իմ պատճառով, իրական մարգարեներն են: Նրանք այն հոգիներն են, ում կտանջեն, կվերաբերվեն քամահրանքով և կարհամարհեն Ինձ համար: Նրանք կմերժվեն նաև Իմ սեփական Եկեղեցու կողմից, սակայն ոչ բոլոր Իմ նվիրյալ ծառաների:
Նվիրված հետևորդները, ովքեր ուշադրությամբ հետևում են Իմ ուսուցումներին, նույնպես կհակվեն մերժել նրանց, մինչև, ժամանակի ընթացքում, ճշմարտությունը դանդաղորեն կհասնի նրանց:
Ժամանակի սկզբից ի վեր, երբ Ես Իմ **Աստվածային Գթասրտությունից** ելնելով Ես ընտրեցի մարգարեներ ուղարկել աշխարհ, ձեզ բոլորիդ Իմ ուսուցումների մասին հիշեցնելու համար, նրանցից շատ քչերին են սկզբում հավատացել: Նրանցից շատերին են ծաղրել և դիտել որպես վառ երևակայությունից, դեպրեսիայից տառապողների, կամ էլ պարզապես արհամարհել են որպես մոլորվածների: Այդ մարգարեներից շատերն են ընկճվել, երբ առաջին անգամ զգացել են իրենց աստվածային հանդիպումը: Նրանցից շատերը բազմաթիվ անգամ կասկածել են այդ առեղծվածային փորձություններին նախքան դրանց իսկությունն ընդունելը: Նրանք դժվարությամ են բացահայտել իրենց զգացողություններն ուրիշներին: Նրանցից ժամանակ է պահանջվել դա ընդունելու համար:
Իմ բոլոր ընտրյալ հոգիները, ընդունելով իրենց կանչված լինելը, տրամադրված չեն եղել փոխանցել Իմ կողմից տրվող պատգամները նույնիսկ Իմ նվիրաբերված ծառաներին՝ միանձնուհիներին, քահանաներին, եպիսկոպոսներին և կարդինալներին: Նրանք սարսափում էին այդ մարդկանցից և իրենց սրտերում գիտեին, որ իրենց պարտադրված հարցերով զբաղվելը շատ դժվար կլինի: Շատերը, որ կանչվեցին, չբացահայտեցին իրենց պատգամները, և օգտագործեցին աղոթքն ու անձնական տառապանքը իրենց պարտքն Իմ հանդեպ կատարելու համար:
Մյուսներին, ովքեր բացահայտեցին պատգամները, ինչպես ասված էր Իմ Օրհնյալ Մոր և Իմ կողմից, չհավատացին:
Ես կո ե մ անում Իմ բոլոր հետևորդներին, որ լսեն իրենց սրտին: Նայեք Իմ թանկագին տեսանողների կողմից բաժանված պատգամներին: Այդ պատգամները տրվում են ձեզ մաքուր սիրուց ելնելով, որ առաջնորդեն ձեզ և հոգիներ փրկեն: Դա է նպատակը: Եթե որոշում եք, որ այդպես է, ուրեմն աղոթեք, աղոթեք Իմ տեսանողների համար, որ նրանց լսեն:
Հիմա թույլ տվեք Ինձ նախազգուշացնել ձեզ այն նշանների մասին, որ հետևեք, երբ Իմ իսկական տեսանողներին հետապնդում են հանուն Ինձ: Խաբեբայի

հետևորդները, տեսնելով նրանց լույսը, թեթև թիրախ չեն դարձնի նրանց, այլ կաշխատեն հարվածել այնպիսի չարությամբ, որ ձեր շունչը կկտրվի: Նրանք ոչ միայն կչարչարեն նրանց ծաղրի միջոցով, այլև ամեն ինչ կանեն որ վարկաբեկեն նրանց: Եվ այդ ամենը հանուն Ինձ: Ցավը որ Իմ աշակերտները զգում են, ոչինչ է այն ցավի հետ, որը Ես եմ զգում:
Վերջին ժամանակներս Իմ տառապանքն այնպիսի աստիճանի է հասել, որ Ես նորից ու նորից ամբողջապես վերապրում եմ այն չարչարանքը, որը կրեցի ձեր մեղքերի համար մեռնելիս: Բոլոր մեղքերի: Ողջ մարդկության համար: Ներառյալ նրանց, ովքեր տանջում են Ինձ և Իմ տեսանողներին: Ներառյալ այն մարդասպանների, այն մարդկանց համար, ովքեր հրապարակայնորեն մերժում են Ինձ և պարծենում դրա համար, և այժմ աշխարհում գոյություն ունեցող սարսափելի չարիքի համար:
Խնդրում եմ լսեք Իմ տսանողներին: Դուք ձեր սրտերի մեջ կզգաք, երբ լսեք ճշմարտությունը: Խնդրում եմ, մի ընկեք նրանց թակարդը, ովքեր հետապնդեցին Իմ Օրհնյալ Մոր տեսանողներին, ներառյալ Բեռնադեթը կամ Ֆաթիմայի Իմ փոքրիկ զավակները: Նրանց հետ վարվում էին չափազանց անարգ ձևով հատկապես Ինձ նվիրաբերված ծառաները: Հենց նրանք են, որ ավմենաշատն են վիրավորում, երբ Իմ Աստվածային դրսևորումները տրվում են մարդկությանը սիրուց դրդված: Իմ սիրտը ավելի շատ է տառապում, երբ նրանք չեն հավատում գերբնական Աստվածայինին ոչ էլ ճանաչում են, երբ այն ներկայացվում է իրենց:
Խնդրում եմ աղոթեք Իմ տեսանողների համար, և հատկապես Իմ այն տեսանողների համար, որոնց պատգամները չեն կարող մերժվել դրանց ցույց տված սիրո և այն նախազգուշացումների համար, որոնք պարունակում են այդ պատգամները: Քանի որ նրանք Իմ ճշմարիտ տեսանողներն են: Դուք նրանց կճանաչեք նրանց այն վիրավորանքներից, չարախոսություններից, տառապանքներից և մեղադրանքներից, որ նրանք ստանում են Իմ զավակների կողմից:
Եթե տեսնեք այն մեղադրանքները, որ տրվում են նրանց և այն ստերը, որոնք տարածվում են նրանց մասին այդպիսի ստորացնող ձևով, այդ ժամանակ հարցրեք ինքներդ ձեզ. Եթե այսքան ժամանակ այս մարդուն տանջել են և չեն հավատացել, ուրեմն ինչու՞ են մեղադրանքներն այդքան կոպտորեն շարունակվում: Այդ ժամանակ կիմանաք պատասխանը: Աղոթեք Սուրբ Հոգուն առաջնորդության համար, որ զանազանեք Իմ ճշմարիտ մարգարեներին, տեսանողներին մյուսներից, ովքեր խաբում են ձեզ:
Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Հարստության ձգտում

Ստացված Երեքշաբթի 30 Նոյեմբեր 2010թ, ժ. 12.00 կեսօր
Իմ սիրելի աղջիկ, կենտրոնացիր և լսիր, թե Ես ինչ ունեմ ասելու: Դու հիմա անցումային շրջանում ես, համեմատած այն ժամանակի հետ, երբ ստացար Իմ

առաջին պատգամը: Խնդրում եմ հասկացիր, որ այս պատգամները գալիս են Ինձնից, և խնդրում եմ դադարեցրու հիմա քո կասկածները: Դա քեզ հնարավորություն կտա կենտրոնանալ այն աշխատանքի վրա, որի համար կանչվել ես:
Աշխարհում տեղի ունեցող դեպքերի առնչությամբ հիմա արդեն ավելի պարզ է դառնում, թե չար համաշխարհային կարգի մերկայացուցիչները ինչ են փորձում պարտադրել աշխարհին: Միացյալ ազգերը, այս նոր համաշխարհային կարգի բազմաթիվ ճակատներից մեկը, փորձում են կնքել Իմ բոլոր ուսուցումները և կօգտագործեն իրենց տրամադրության տակ գտնվող ամեն մահացու զենք, դա անելու համար:
Չվախենաս, որովհետև Իմ հետևորդները ուժեղ կպայքարեն և չեն ժխտի Ինձ հատկապես այն երկրներում, որոնք նվիրաբերված են Ինձ, և որոնք ունեն նվիրված և անսասան հավատ: Նրանք մի կողմ չեն կանգնի և թույլ չեն տա դա: Սակայն շատերի համար այն ծախսերի պատճառով, որ նրանք կատարած կլինեն իրենց երեխաներին լույսի մեջ ապահովելու համար, նրանք անզոր կլինեն:
Ինչպես քեզ արդեն նախկինում բացատրվել է, Իմ Հավիտենական Հոր զայրույթը պատրաստ է երկրի վրա ցուցադրվելու, մինչ մարդիկ ավելի ու ավելի են մոտենում Ինձ մերժելու իրենց փորձերին:
Աշխարհը նույնն է թվում: Մարդիկ նույնն են թվում: Հեռուստատեսության աշխարհն իր վարդագույն երանգներով նույնն է թվում: Մարդիկ գլուխները թաղում են ավազի մեջ: Նրանք մտածում են, որ աշխարհը կմնա այնպես, ինչպես կա: Տխուր է, բայց նրանք սխալվում են: Իմ պարտականությունը Իմ զավակների հանդեպ ձեզ փրկելն է: Թույլ չտալ, որ դուք քաշվեք խոստումների, դատարկ երազանքների և փառասիրության դատարկ վակուումի մեջ: Սրանք այն հաճույքներն են, որոնց դուք հավատարիմ եք եղել շատ ու շատ տարիներ: Սրանք այն խոստումներն են, որոնց ոչ ձեր սեփական մեղքով հավաստիացվել եք հետևել սեփական արժանիքի համար: Սեփական շահի համար: Ինքնագնահատման համար: Ձեզ սովորեցրել են հետևել համար մեկին, ինչ գնով էլ որ լինի: Համար մեկը դուք էիք: Դուք, ձեր հավակնություններով, հարստության հանդեպ ունեցած տենչանքով ձեր և ձեր երեխաների համար, ցանկանում եք դառնալ ավելի լավը, քան ձեր եղբայրներն ու քույրերը և ինքնահաստատման անողոք ձգտումով, հիմարացվել էիք:
Այս նկրտումներով Իմ երեխաները կերակրվել են խաբեբայի կեղծ և խաբուսիկ նկրտումների միջոցով: Իմ զավակներից շատերը կծիծաղեն այս պատգամի վրա և կասեն, որ դա ճշմարիտ չէ: Դժբախտաբար Խաբեբան գոյություն ունի, իսկ Իմ զավակների մեծ մասը չի ընդունում նրա գոյությունը:
Նա խորամանկ է այնպես, որ թաքնվում է իրերի, մարդկանց, գործողությունների և հրապուրիչ նախաձեռնությունների ետևում: Նրա խաբուսիկ հմայքը նշանակում է, որ այսօր, եթե այսօր մարդկանց հարցնեք, թե նրանք որը կընդունեին՝ փոո՞ղը, թե՞ իրենց ընտանիքի մահացած անդամների

հետ վերամիավորումը, նրանք կհակվեն դեպի փողը: Հարցրեք մեկ ուրիշի, արդյո՞ք նրանք կդավաճանեին իրենց եղբորը կամ քրոջը նյութական շահի համար: Եվ պատասխանը կլինի այո: Հարցրեք երիտասարդ երեխային, արդյո՞ք կփոխանակեին իրենց պարզ կյանքը հիանալի և գրավիչ կյանքով, և պատասխանը կլինի այո:
Ուրեմն ինչու՞ իմ զավակները չեն կարողանում հասկանալ, որ երբ նրանց տրվում է հաղթանակի պարգևը, նրանք զգում են, որ իրենք կարիք ունեն ավելի ու ավելի շատի: Սրա պատճառն այն է, որ Սատանայի պարգևները ձեր ներսում թողնում են մի անբացատրելի դատարկ զգացողություն, որը չեք հասկանում: Ուստի դուք ձեր ձգտման մեջ շարունակում եք ավելին փնտրել, և դա սովորաբար ձեր հարևանի հաշվին: Ոչ մեկը հսկայական հարստություն չի կուտակում առանց իր ճանապարհին հանդիպող մարդկանց որոշ չափով նեղություն պատճառելու: Ոչ մեկը հռչակ չի ստանում առանց որևէ մեկի դրանից զրկելու: Այն մարդը, ով իր հարստությունը չի կիսում, դատապարտված է: Նա, ով ոչինչ չունի, հակված է ավելին կիսելու, քան նրանք ովքեր ստացել են նյութական օրհնություններ:

Իմ ուսուցումները չեն կարող ընկղմել ջրի տակ

Ինչու՞ են Իմ զավակներն անտեսում այս ուսուցումները՝ տրված Իմ առաքյալների կողմից Նոր Կտակարանի գրվելուց ի վեր: Ինչու՞ չեն հետևում այնտեղ պարունակվող վարդապետությանը: Արդյո՞ք նրանք հավատացած են, որ դրանք գրվել են Իմ աշակերտների կողմից, որ մարդիկ չլսեն: Նրանց ուսուցումները չեն փոխվել այն ժամանակից ի վեր, ինչ ես հեռացա երկրից: Դրանք այդտեղ են մի նպատակի համար: Դուք կարող եք փոխել դրանց մեկնաբանությունը, ջրի տակ ընկղմել դրանք, ավելացնել նոր իմաստ կամ ջնջել որոշ մասեր, բայց մի բան կմնա: Եվ դա ճշմարտությունն է: Ճշմարտությունը միշտ կմնա նույնը: Այն չի կարող և չի փոխվի մարդկությանը հարմարվելու համար: Ուշադրություն դարձրեք սրան հիմա: Նստեք և լսեք: Դուք չեք կարող ակնկալել, որ կհետևեք այս ուղուն և կմտնեք Իմ Հոր Թագավորություն: Ձեզանից շատերը արդարացնում են հարստությունը և ձեր ստացած փառքը և դրանք վերագրում բախտին: Դուք չեք հասկանում, որ այդ ընթացքում ձեզնից շատերը ծախել են իրենց հոգիները Չարին:
Իմ զավակներից ոմանք գիտեն, որ իրենք կատարել են ծանր մեղքը և ոչնինչ չեն մտածում այդ մասին: Մյուսները իսկապես հավատացած են, որ իրենց կարողացածն անում են իրենց և իրենց ընտանիքների համար: Բայց նրանք պետք է հասկանան, որ ֆինանսական ապահովությունն ընդունելի է, իսկ ճոխության ձգտումը՝ ոչ:
Ի հակադրություն Իմ Հոր Եկեղեցու ուսուցումներին ողջ աշխարհում, մարդիկ դեռևս չեն ընդունում Իմ ուսուցումները: Հարուստները, ովքեր ձգտում են նյութայան օգուտի, ունեն մեկ Աստված: Աղքատները, ովքեր ձգտում են հարստության, ունեն մեկ Աստված: Նրանք երկուսն էլ նույնն են: Փող: Փողն

անօգուտ է, եթե այն ձեռք է բերվել անազնիվ ձևով և երբ ավելի քիչ ունեցողներն օգուտ չեն ստանում այդ ձեռքբեռումից:
Փողը, նյութական հարստությունն և բոլոր լավ բաները, որոնք ձեռք են բերվել այն մարդկանց կողմից, ովքեր իրենց համարում են բախտավոր պետք է բաժանվեն նրանց, ովքեր դրա կարիքն ունեն: Բարեգործության համար տրված փողն անիմաստ է դառնում, եթե դա արվում է փառք կամ ուշադրություն գրավելու համար:
Վստահ եղեք, որ այն չարը, որը հիմա պլանավորվում է աշխարհում, երբ ձեզ դատարկ գրպաններով թողնելու ցանկությունը դառնա իրականություն, այդ ժամանակ կհասկանաք, թե փողը որքան քիչ արժեք ունի: Երբ նրանք, չար խումբը, վերահսկեն ձեր փողը և ձեզ անզոր թողնեն դրան ձեռք տալու, առանց իրենց պայմաններին համաձայնելու, այդ ժամանակ վերջապես կհասկանաք, որ երջանիկ լինելու համար այլընտրանքի կարիք ունեք:
Ձեր փողն անարժեք կլինի: Այդ ժամանակ կարիք կլինի գոյատևել ջունգլիների օրենքով: Նրանք ովքեր ունեն գոյատևման բնազդներ, նրանց համար ավելի հեշտ կլինի, քան նրանց, ովքեր նախկինում ստիպված չեն եղել աշխատել ծնկի եկած: Ձեր սեփական սնունդն աճեցնելու սերմերը ձեզ համար ավելի շատ իմաստ կունենան, քան միլիոնավոր դոլարները: Մի հասարակ միրգը ձեզ համար ավելին կնշանակի, քան ճոխ մեքենան: Որովհետև երբ մերկացվեք, կկանչեք ձեր ստեղծողին, ձեր արարչին: Միայն և միայն այդ ժամանակ կհասկանաք, որ միակ արժեք ունեցող բանը ձեր սրտում եղած սերն է: Որովհետև առանց սիրո չեք կարող աճել, ոչ էլ կարող եք մտնել Իմ Հոր Թագավորություն:
Մտածեք հիմա: Զգույշ եղեք հարստության հանդեպ ձեր ձգտման մեջ: Կանգ առեք հիմա, քանի դեռ չափազանց ուշ չէ: Կիսեք և բաժանեք և հետևեք Իմ ուղուն: Սա մի հզոր դաս է Իմ զավակների համար, ովքեր անապահովություն են զգում:
Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Նախազգուշացում մարդկությանը ճշմարտությունը հասկանալու համար

Ստացված Երեքշաբթի 7 Դեկտեմբեր 2010թ, առավոտյան ժ. 3.15

Այո Իմ սիրելի դուստր, Ես ետ եմ եկել: Գրիր սա: Դու, աղջիկս, որ շրջել էիր մեջքդ դեպի Ինձ, մերժելով ճշմարտությունը, հիմա կօգնես Ինձ առաջնորդել Իմ ժողովրդին ետ՝ դեպի լույսը, դեպի ճշմարտության լույսը:
Ես ոչ մի մարդու չեմ զրկի Աստծո ճշմարտությունը տեսնելու հնարավորությունից: Նրանց գթասրտություն ցույց կտրվի իրենց տրվելիք այն ապացույցի ընծայով, որ Ես գոյություն ունեմ: Նրանց կտրվի այս ընծան, երբ, Նախազգուշացման ընթացքում, նրանք վերջապես կիմանան ճշմարտությունը:

Տխուր է, որ բոլորը չեն շրջվի, նույնիսկ այդ էտապում, դեպի Ինձ կամ Իմ Հոր Հավիտենական Թագավորությունը:
Աղջիկս, Ես մի քանի օր չհաղորդակցվեցի քեզ հետ: Դա մտածված էր: Քեզ տրված ժամանակը նրա համար էր, որ դու կարողանաս զգուշորեն մարսել Իմ պատգամների բովանդակությունը:
Արդեն գիտես, որ այս պատգամներն Ինձնից են և բոլորն էլ չափազանց կարևոր հարցերի մասին են: Կարծում եմ դու արդեն կարող ես զանազանել Իմ ուսուցումների ճշմարտությունը քո երևակայությունից: Աղջիկս, հիմա դու կարող ես տեսնել այն վիրավորանքն ու հուսահատությունը, որը Ես զգում եմ, երբ ամեն օր ականատես ես լինում այն հիասթափությանը, որը Ես և Իմ Հավիտենական Հայրը զգում ենք այս տխուր, դատարկ և անհավատ աշխարհի վերաբերմունզի պատճառով:
Քեզ ոչ միայն անհավատներն են ցավ պատճառում, այլև Իմ կողմից քեզ տրված ընծաների և շնորհների միջոցով դու տեսնում ես այն խառնաշփոթությունը, որը կա նույնիսկ Իմ հետևորդների մտքերի մեջ: Նրանք նույնպես հեշտությամբ չեն համոզվում ճշմարտության մեջ, երբ այն տրվում է նրանց իմ մարգարեների միջոցով որպես սիրո ընծա Իմ կողմից:
Որքան երկար և ոլորապտույտ ճանապարհ է սա իմ զավակների համար, երբ ցանկանում են հասնել դեպի ճշմարտությունը և այն խոստումները, որոնք Ես տվել եմ նրանց: Ամեն օր նայելով Իմ զավակներին, անձապես, փողոցում, հեռուստացույցով, լրատվամիջոցներով և քո հարևանների մեջ, հիմա դու տեսնում ես նրանց Իմ աչքերով Ի՞նչ ես տեսնում: Հոգևոր աշխարհի համընդհանուր մոռացում և իրենց կյանքում իրական նպատակի բացակայություն: Անհուսության զգացողություն չնայած աշխարհիկ հաճույքների գրավչությանը:
Հիմա Իմ զավակները չեն հասկանում, բայց նրանք անցնում են մաքրագործման միջով: Այս մաքրագործումը, ուր նրանք ունեն դատարկության սուր զգացողություն նյութական բարիքների պակասի հետևանքով,, Ես եմ թույլ տվել: Սակայն այդ ամենի պատճառը մարդկության ագահությունն է: Մարդկանց իրենց ազատ կամքի իրավունքը թույլատրելով, նրանք, ամբողջ աշխարհում բանկային համակարգի փլուզման չար նախապատրաստողները, կշարունակեն իրենց խորամանկ խաբեությունը:
Ես թույլ եմ տվել, որ իմ ժողովուրդը, անմեղ զոհերը, անցնեն այս մաքրագործման միջով: Դա շատ կարևոր է, որ անցնեն,, որովհետև այն դժվարությունները, որոնց նրանք կդիմանան, կմաքրագործեն նրանց հոգիները:
Շատ շուտով, մինչ նյութական բարիքները կքչանան և դժվար կլինի դրանք ձեռք բերել, նրանք կտեսնեն կյանքն ավելի խորը ձևով: Պարզությունը կօգնի բացել նրանց աչքերը ճշմարտության հանդեպ, այն ճշմարտությաո, թե իրականում ինչ է կարևոր: Առանց այս մաքրագործման, երբ Իմ զավակներին

թույլ կտրվի տառապել հանուն իրենց հոգիների, նրանք չեն կարողանա ավելի մոտենալ Իմ սրտին:
Զրկված այն նյութական բարիքներից, որոնց հանդեպ նրանք անցյալում այդպիսի կռապաշտություն էին ցուցաբերում, նրանք կշչջվեն դեպի ճշմարտությունը: Պարզությամբ նրանք կտեսնեն մեկը մյուսի հոգու մեջ եղած սերը: Նույնպես նրանք արագորեն կտեսնեն չարը իր այլանդակ փառքով նրանց մեջ, ովքեր գայթակզված են ինքնաբավարարման և ագահության մոլուցքով: Այդ ժամանակ նրանք կտեսնեն այդ մարդկանց, ում հարգանք են մատուցում լրատվամիջոցներում և ընդունում որպես այնպիսիների, որոնցով պետք է հիանալ, այնպես, ինչպես Ես եմ նրանց տեսնում: Այսինքն, ամբողջական հուսահատությամբ և տխրությամբ:

Գնա հիմա աղջիկս և հասկացիր քո առաջադրանքը պարզ աչքերով: Հիմա դու գիտես ճշմարտոոոությունը: Դու այլևս չես կասկածում: Որքան հնարավոր է շուտ տարածիր փրկության ճշմարտությունը, որպեսզի մարդկանց հասցնես ազատագրման հնարավորությունը նախքան Մեծ Նախազգուշացումը:
Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Հաջորդ Կյանքը

Ստացված շաբաթ 11 դեկտեմբերի 2010թ, առավոտյան ժ9.15

Իմ սիրելի աղջիկ, դու պատրաստ ես հիմա առաջ շարժվել և շարունակել Իմ Ճշմարտության Գիրքը ավարտելու առաջադրանքը: Դու, աղջիկս, անցնում էիր այն մաքրագործման միջով, որը պահանջվում էր այս աշխատաքնի համար քեզ ուժ տալու համար:

Իմ զավակները, այնքան կլանված երկու մասի աշխարհով, չեն հասկանում, որ շուտով բոլորը կլինեն մեկ: Երկու մասը ներառում են վիշտն ու ուրախությունը: Վիշտը գոյություն ունի աշխարհում այնպիսի ձևով, որ առաջ է բերում խառնաշոթություն և հուսահատություն:Դա մի այնպիսի վիշտ է, որի նմանը չի եղել երկրի հինադրումից ի վեր:

Վիշտը, որը զգում են այսօր, հիմնված է այն կորստի վրա, որը գալիս է նյութական իրերի հեռացումից հետո: Կա նաև մտքի, մարմնի և հոգու խաղաղության ձգտում: Սա կգա միայն խոնորհության և Իմ Հավիտենական Հորն ընդունելու և սիրո միջոցով: Կա նաև ուրախությունը: Ես սիրով ժպտում եմ, երբ Իմ զավակները ծիծաղում են, ժպտում և ուրախանում: Սա մի ընծա է

Իմ կողմից: Ծիծաղն ու ուրախությունը կարևոր ընծա են տրված մարդկությանը, երբ դրանք մաքուր են և ոչ թե մեկդ մյուսի հաշվին:

Քիչ հավատով Իմ զավակներ, գիտեմ, որ դժվար է կանգ առնել և ասել <<ես ետ եմ շրջվում դեպի Աստված>>; Ձեզանից այնքան շատերն են հասկանում թե ով է Հավիտենական Հայրը: Շատ քչերն են հասկանում, որ Նա նայում է ձեզ վրա՝ ձեզանից յուրաքանչյուրի և ամեն մեկիդ վրա ձեր կյանքի յուրաքանչյուր օր: Նա ժպտում է, ծիծաղում և մեծ ուրախություն զգում, երբ իր զավակները երջանիկ են: Նա, այնուամենայնիվ, բարեհաճությամբ չի նայում նրանց, ում ուրախությունը կամ ենթադրվող ուրախությունը ստանում են առանց սիրո իրենց սրտերի մեջ:

Ես, ձեր Փրկիչ Հիսուս ՔրԻստոսը, անունպեսսիրում եմ ձեզ, Իմ բոլոր զավակներ: Բայց Ես մեկ եմ Իմ Հավիտենական Հոր հետ: Ես ժպտում եմ ձեզ բոլորիդ վրա և հույս ունեմ, որ դուք կվերադառնաք Ինձ մոտ:

Առաջ եկեք Ինձ մոտ, զավակներս, ինչպես մեկ, և շարժվեք դեպի Ինձ բաց սրտերով:

Իմ զավակներից շատերի սրտերի մեջ Իմ Երկրորդ Գալուստի մասին պատգամները վախ են առաջացնում: Կարիք չկա վախենալու: Դա կլինի բացառիկ ուրախության, փառքի և մաքուր երջանկության պահ: Քանի որ ձեզ բոլորիդ համար, ովքեր իրենց սրտերը շրջել են ետ՝ դեպի Ինձ, Ես ձեզ կպահեմ Իմ բազուկների մեջ և ուրախության արցունքներ կթափեմ:

Հավատացողներ, խնդրում եմ, խնդրում եմ աղոթեք հիմա նրանց համար, ովքեր չեն հավատում կամ մոլորվել են: Ֆերմերը, որ հավաքում է իր հոտը, միշտ կձգտի առանց դադարի գտնել կորածներին: Հաղթանակի այն քաղցրությունը, որը նա զգում է, երբ նրանք (կորածները) վերադառնում են իր հոտի հետ, նման է այն զգացողությանը, որը Ես ստանում եմ երբ Իմ կորած զավակները վերադառնում են դեպի Ինձ:

Զավակներս, երկրի վրա նույնիսկ ուրախության և ծիծաղի պահերին խնդրում եմ հիշեք մի բան. Դա այն մաքուր երջանկության և ուրախության աղոտ արտացոլումն է միայն, որը գոյություն կունենա նոր երկրի վրա, երբ կորած Դրախտը միանա: Երբ սա տեղի ունենա, ընտրյալները, նրանք, ովքեր բարի կյանքով են ապրում, հավատում են իրենց Արարչին., կմիանան հարություն առած մահացածներին: Այդ մարդիկ, ընկերները և ընտանիքը, ովքեր հեռացել են այս կյանքից, կմիանան Ինձ հետ նոր փառապանծ հավիտենության մեջ: Հիշեք, զավակներս, կարևոր է, որ չափից դուրս կարևորություն չտաք այս երկրին: Ոչ էլ մտածեք, թե նրանում գտնվող ամեն ինչ ձեր վերահսկողության

տակ է: Որովհետև այդպես չէ: Մինչ դուք շարունակում եք կլանվել դրա խոստումներով, հուսախաբություններով, ուրախություններով ու հրաշքներով, հիշեք, որ դա սոսկ մի ժամանակավոր վայր է: Անցումային էտապ, նախքան Իմ Հոր Թագավորություն մտնելը՝ նոր Երկինք ու նոր Երկիր, որը դառնում է մեկ:

Մի վերջին կոչ, զավակներս, աղոթեք Ինձ ձեր սեփական բառերով, Խնդրեք Ինձ առաջնորդել ձեզ: Խնդրեք Ինձ ցույց տալ ձեզ սերը և ճշմարտությունն այնպես, որ խելամիտ լինի: Մի պահեք գլուխներդ ավազի մեջ թաղած, այլապես չեք ուրախանա նոր Երկրի փառքով:

Դատարկ ճանապարհ դեպի ոչնչություն
Այն զավակները, ովքեր քմծիծաղ են տալիս և մերժում Ինձ, ձեզ կասեն, թե այս կյանքից հետո կյանք չկա: Թույլ տվեք Ինձ վստահեցնել ձեզ, որ նրանք ոչ միայն զրկում են իրենք իրենց Դրախտ հասնելուց, այլև դրա փոխարեն ընտրում են մի դատարկ ճանապարհ դեպի ոչնչություն: Որոշ դեպքերում, նրանք հետևում են Խաբեբայի խորամանկությանը՝ Չարի, ով այնքան լռությամբ է շարժվում և մահացու քաջությամբ, որ նրանք, չհավատալով նրա գոյությանը, կուրորեն հետևում են՝ բռնած նրա ձեռքը դեպի Դժոխքի դարպասները:

Իմ տառապանքը Գեթսեմանիի պարտեզում
Երբ Իմ հետևորդները տեսնում են այդ մարդկանց հպարտորեն քայլելիս և իրենց աթեիզմով պարծենալիս, նրանք սարսափելի տառապանք են ապրում: Նրանք, ովքեր վերցրել են Իմ խաչը, զգում են այն տառապանքը, որը Ես կրեցի Իմ ժամանակին Գեթեմանիի պարտեզում: Այստեղ է, որ Ես գիտեմ, որ նույնիսկ երբ Ես կրեցի ծայրագույնտառապանքը երբ ընդունեցի մահը որպես միջոց՝ տալու համար Իմ զավակներին հնարավորություն Իմ Հոր Թագավորության մեջ տեղ գրավելու համար, Ես ներքուստ գիտեի, որ Իմ որոշ զավակների համար դա նշանակություն չէր ունենա: Դա ամենավատ տառապանքն էր, որը Ինձ ստիպեց արյան քրտինք թափել: Այդ կորած հոգիների համար զգացած սարսափը դեռևս Իմ մեջ է այսօր:

Ձեզանից նրանց, ովքեր հարցնում են, եթե Դու Աստված ես, կամ Հիսուս Քրիստոսն ես, ուրեմն կարող ես ինչ-որ բան անել: Իմ պատասխանը ձեզ հետևյալն է. Ես չեմ կարող խախտել ձեր ազատ կամքը, որը տրվել է մարդկությանը: Իմ երեխաներն իրենք պետք է կատարել այս վերջնական ընտրությունը իրենց ազատ կամքով:.

ՁԵՐ սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Կոչ սպանությունը՝ աբորտը դադարեցնելու

Ստացված հինգշաբթի 16 դեկտեմբերի 2010թ, ցերեկվա ժ1.10

Գրիր սա, աղջիկս: Անմեղ զոհերի հանդեպ կատարվող մահը ամենամեծ մեղքերից մեկն է, որը մարդը կարող է գործել իր եղբոր հանդեպ: Դա մարմնի ամենածանր մեղքն է և Ինձ մեծ ցավ է պատճառում: Աշխարհում շարունակաբար ավելի ակնհայտ է դառնում հարգանքի պակասը, որը մարդկությունն այսօր ցուցաբերում է մարդկային կյանքի հանդեպ:

Կյանքը թանկարժեք ընծա է տրված Աստծո կողմից: Ոչ մեկն իրավունք չունի խլել մյուսի կյանքը: Ոչ մեկն իրավունք չունի խլել երեխայի կյանքը, նույնիսկ ծնվելու պահին դեռ շունչ չքաշած: Այս ոճիրը սարսափելի է և աններելի: Բոլոր հոգիները գալիս են Իմ Հավիտենական Հորից և ստեղծվում են սաղմնավորման պահից: Փոքրիկ երեխաները, անմեղ հոգիներ, սպանվում են հենց այն մարդկանց կողմից, ովքեր ուղարկված են նրանց խնամելու համար՝ իրենց սեփական մայրերի կողմից, ովքեր պատասխանատու են նրանց ծնվելու իրավունքը մերժելու մեջ:

Ինչու՞ են Իմ զավակները ետ կանգնում և ոչինչ չեն անում: Ազատության անվան տակ Իմ Հոր Թագավորությունից եկած այդ փոքրիկ հրեշտակներին վերցնում են այս երկրի վրայից նախքան նրանց համար նշանակված ժամանակի հասնելը: Մի՞թե այդ կանայք չեն հասկանում, որ այն կյանքերը, որոնց նրանք այդքան քիչ արժեք են տալիս, Աստծուց են: Այդ երեխաները տառապում են: Նրանք սոսկալի ցավ են զգում իրենց սպանության ժամանակ: Եվ դա արդարացվում է կառավարությունների, բժշկական մասնագետների և այդ կանանց ընտանիքների կողմից: Ինչպե՞ս նրանք խղճի խայթ չեն զգում իրենց հոգում:

Մի՞թե նրանք չեն հասկանում, որ իրենց սոսկալի գործողությունները չեն տարբերվում նրանից, երբ մարդ սպանում է մեկ այլ մարդու:

Փաստորեն սա նույնիսկ ավելի մեծ մեղք է, քանի որ այդ երեխաները անօգնական են: Այդ կանայք պետք է գթություն խնդրեն, եթե մեղավոր են: Կամ Ինձնից առաջնորդություն խնդրեն, եթե մտածում են աբորտի մասին: Երկու դեպքում էլ նրանք կդատվեն ըստ իրենց մեղքի: Մարմնի մեղքերն ամենավիրավորականն են Իմ Հոր աչքում: Ոչ մի արդարացում իր նմանին սպանելու համար ընդունելի չէ Իմ կամ Իմ Հավիտենական Հոր աչքում:

Արթնացեք հիմա, զավակներս և հասկացեք, որ կյանք խլելը կառաջնորդի հանցագործներին դեպի դժոխքի հավիտենական կրակները: Դներով լի այդ

անդունդից վերադարձ չի լինի: Այդ նույն դևերի, որոնք Խաբեբայի՝ Սատանայի աշխատանքի մեջոցով համոզում են մարդասպանին, թե այն, ինչ նա անում է, ճիշտ է: Նա խորամանկորեն կհամոզի մայրերին, օրինակ, թե նրանք ընդունում են <<ճիշտ որոշում>>: Մարդկային մտածողության հետ առնչվող ցանկացած խորամանկություն օգտագործելով, նա կստիպի մարդկանց արդարացնել այդ գործողությունը, չնայած այն սխալ է: Նա կօգտագործի այն սուտը, թե մարդասպանն ունի իր իրավունքները: Որ նրանք պետք է առաջին հերթին փնտրեն իրենց շահերը: Մարդու իրավունքների անվան տակ սուտը ներկայացվում է այնպես, որ մոր և նրա այնպես ինչպես ինքն է ցանկանում ապրելու ազատությամբ, պետք է հիանալ: Հետո այդ սուտը համոզում է նրան, թե ճիշտ է և ուղիղ սպանել իր զավակին:

Խնդրում եմ հասկացեք, որ գենոցիդի աճն աշխարհում կանխասացվել է: Դա այն բազմաթիվ նշաններից մեկն է, որոնց մասին խոսվել է Վերջին Ժամանակների առնչությամբ:

Կանգ առեք հիմա դուք բոլորդ: Լսեք: Մարդասպանությունը չափազանց լուրջ վիրավորանք է: Արեք դա և չեք փրկվի: Ետ դարձ չկա: Ապաշխարեք դուք բոլորդ, ովքեր գործել եք այդ սարսափելի մեղքը: Ներողություն հայցեք հիմա: Ես, Իմ Գթասրտությամբ, կլսեմ ձեր աղոթքը: Դուք կարող եք և կփրկվեք, եթե ճշմարիտ ափսոսում եք ձեր ծանր մեղքի համար: Ես կլսեմ: Ես կներեմ: Բայց ժամանակը ձեր կողմից չէ:

Հավատացողներ եռանդով աղոթեք Իմ այս կորած և թափառող զավակների համար, ովքեր շեղվել են Սատանայի և նրա կողմնակիցների կողմից իշխանության դիրքերում: Նրանք հիմա ձեր աղոթքների կարիքն ունեն: Դուք բոլորդ պետք է պաշտպանեք մարդկային կյանքի իրավունքը, որին մարդկային ձեռքերը չպետք է դիպչեն ոչ մի հանգամանքում:

Աղոթեք Ինձ ամեն օր: Առաջարկեք ձեր ունեցած բոլոր տառապանքները անմեղ զոհերի համար:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Ճշմարտության գիրքը

Ստացված 18 դեկտեմբերի, 2010թ, առավոտյան ժ 9.40

Հիմա արդեն դու լավ գիտես, թե այն, ինչ Ես խոստանում եմ, դառնում է իրականություն: Ես քեզ մոտ եմ ուղարկել մի հոգևոր ղեկավարի, այն մարդուն, ում Ես ընտրել էի քո (հոգևոր) ճամփորդության սկզբից ի վեր: Մի քանի ընտրյալների համար ժամանակ է հարկավոր մինչև նրանք կվերցնեն Իմ աշխատանքի գավաթը: Աղջիկս, դու հոգևոր առաջնորդի կարիք ունես, որ Իմ պատգամներն ամբողջապես հասկացվեն իմ ծառայի կողմից: Այդ կերպ խոսքը կտարածվի, և մարդիկ կհասկանան ճշմարտությունը: Սա կլինի խորդուբորդ և կարճ փակուղիներով լի մի ճանապարհ, որոնք հանկարծակի կհայտնվեն, որ քեզ նետեն այլ ուղղության վրա: Բայց մի վախեցիր: Հիմա դու առաջնորդություն կունենաս և ավելի մեծ վստահություն կզգաս քո աշխատանքի հանդեպ:

Հիմա գրիր սա: Ճշմարտության Գիրքը ներկայացվում է մարդկությանը՝ օգնելու նրանց, որ կարողանան ազատագրվել Իմ Սրտում: Նրանց տրվում է ընտրություն հոչակելու Իմ փառքը նախքան Ես կվերադառնամ որպես Գթառատ Փրկիչ և արդար դատավոր: Ես երբեք չեմ ցանկանում պատժել Իմ զավակներին, բայց, որոշակի հանգամանքներում, նրանք ովքեր համագործակցում են Խաբեբայի հետ ամբողջապես գիտակցելով այդ և բարձրացնում են նրան և նրա չար կողմնակիցներին այն աստիճան, որ նրան երկրպագում են զոհասեղանի մոտ, չեն կարող փրկվել: Նրանք իրենք գիտեն, թե ովքեր են: Նրանց համար չափազանց դժվար կլինի շրջվել ետ՝ դեպի Ինձ: Աղոթեք նրանց համար:

Ում վրա է հարձակվում սատանան
Խաբեբային շատ քիչ ժամանակ է մնացել երկրի վրա ավերածություն տարածելու համար, ուստի նա ավելացրել է իր գործունեությունն ամենուրեք: Հիմնականում նա նշան է բռնում Իմ Հոր Եկեղեցու նվիրյալ ծառաների վրա, երտասարդների ու գեղեցիկների, ինչպես նաև չափազանց խելամիտների:

Նրանց, ովքեր շարունակում են պարծենալ, թե չեն հավատում Ինձ կամ Իմ Հավիտենական Հորը, մեկ անգամ ևս հնարավորություն կտրվի բացելու իրենց սրտերը:

Ինձ ցավ է պատճառում նրանց նայելը: Դա նման է նրան, որ նայես մարդկանցով լի մի ավտոմեքենայի, որը խիտ մառախուղի ժամանակ գնում է դեպի ժայռը: Նրանք սխալ ընթացք են վերցրել և մինչ հավատում են, թե վերադառնում են դեպի իրենց տների հարմարավետությունը, պատրաստ են մխրճվելու խորը խավարի մեջ անհույս կերպով:

Կանխասացված մարգարեություններն այժմ կբացահայտվեն
Իմ զավակներին լսել տալը, աղջիկս, հեշտ չի լինի: Դու պետք է հաստատակամ

լինես, չնայած խոչընդոտներին: Համբերությունը կարևոր է: Այս պատգամները չափազանց թանարժեք են և լի սիրով ու նախազգուշացումներով: Նրանք, Իմ զավակները, պետք է առաջ գան և հասկանան, որ այնքան վաղուց կանխասացված մարգարեությունները հիմա սկսել են բացահայտվել: Այդ իրադարձությունները արդեն պատրաստ են կատարվելու երկրի վրա և ժամանակը շատ, շատ քիչ է:

Ես երբեք չեմ բացահայտի Իմ Երորորդ Գալուստի ամսաթիվը
Ես երբեք չեմ ասի քեզ Իմ Երկրորդ Գալուստի ամսաթիվը, սիրելի աղջիկս, որովհետև դա ձեր գիտության համար չէ: Բայց նախքան Ես կգամ, Ես հիմա հաղորդակցվում եմ ողջ աշխարհի հետ, որ կարողանամ ցույց տալ Իմ զավակներին Իմ արդարացի Գթասրտությունը:

Իմ Մայրն աշխատում է Ինձ համար
Իմ Սիրելի Մայրը, աշխատում է Ինձ համար, տարածելով պատգամներ ընտրյալ տեսանողների միջոցով: Այլ ընտրյալ մարգարեներ տառապում են առանձնության մեջ, ընտրությամբ, հոգիներ փրկելու համար: Ես նրանց՝ այդ ամենանվիրյալ հավատացողներին, թույլ եմ տալիս տառապել Իմ ցավերով հսկայական առատաձեռնությամբ: Նրանք շատերի փրկության համար են պատասխանատու: Բայց նրանք տառապում են ոչ միայն խաչի վրա Իմ կրած տառապանքներով, այլև զգում են այն ցավը, որը Ես այսօր եմ զգում: Ի հավելումն, նրանց ծաղրում են, մեղադրում և ծաղր ու ծանակի ենթարկում ժամանակ առ ժամանակ: Սակայն իրենց խոնարհության միջոցով նրանք դիմանում են լռության մեջ, իսկ որոշ դեպքերում էլ բոլորի աչքի առջև: Զավակներս, Իմ նվիրյալ ծառաները, ովքեր հակված են միայնության կյանքի, Ինձ մեծ ծառայություն են մատուցում: Ինքնամերժման նրանց հատուկ զոհաբերությունը կրկին օգնում է հոգիներ փրկել:

Աստծուց տրված պարգևները անշնորհակալությամբ են ընդունվում
Ժամանակակից աշխարհում ճշմարտության մասին խոսելը, երբ տեխնոլոգիան հասել է զարգացման այդպիսի բարձունքների, դժվար է: Իմ ձայնը նման է մի թույլ կանչի անապատում՝ հրված մի կողմ հանուն նմանակման:

Իմ զավակները չեն կարողանում հասկանալ այն բոլոր հրաշքները, որոնք գալիս են մարդու բարօրության համար տեխնոլոգիայի միջոցով, որը մի ընծա է Իմ Հոր կողմից: Դեղագործության զարգացման բոլոր հրաշքները հանուն մարդկության բարօրության, նույնպես ընծա է: Սակայան այս ընծաները անշնորհակալությամբ են ընդունվում, որովհետև Իմ զավակները մտածում են, թե այդ ամենը մարդու արածն է, բայց դա այդպես չէ:

Բանականության ընծան
Բանականության ընծան, ճիշտ ինչպես երգինը, Աստվածային Թագավորությունից տրված ընծա է: Եվ այն ճշգրիտ է, քանի որ դրանք Աստծո կողմից տրված ընծաներ են, որոնք դարձել են Սատանայի՝ Չարի թիրախը: Այդ նրա ազդեցությամբ է, որ տեխնոլոգիան օգտագործվում է ոչնչացնելու և աշխարհում ավերածություն տարածելու նպատակով: Ինչպես է նա ծիծաղում, երբ տեսնում է սկսվող պատերազմներ և երբ տեխնոլոգիան օգտագործվում է լրտեսելու լամ սպանելու համար: Ինչպես է նա նորից ծիծաղում, երբ բժկության տեխնոլոգիան օգտագործվում է ոչ միայն պարզապես սպանելու համար,, այլև սպանությունն արդարացնելու համար: Տեխնոլոգիայի միջոցով իրագործվող այս բոլոր սարսափելի ոճիրները մարդկության դեմ թաքնված են այսպես կոչված հանդուրժողականության ֆասադի ետևում:

Հանդուրժողականությունը՝ չարի դիմակ
Հանդուրժողականությունը կարող է լինել ամենակատարյալ դիմակը չարի համար: Պարզ է ցանկացած զգոն մարդու համար, Իմ ուսուցումների միջոցով, և անմիջապես նկատվի, երբ մարդկության դեմ նյութվող այդ ոճիրները սկսեն ծավալվել ձեր աչքերի առջև: Հանդուրժողականության անվան տակ սպանում են մարդկանց, զրկում նրանց ազատությունից, և առավել ևս, բարոյական արդարության համար մարտնչելու իրավունքից: Ոհ, այո, զավակներս, իմացեք, զգոն և ուշադիր եղեք, երբ լսեք հանդուրժողականություն բառը, քանի որ դա Սատանայի խաբեության սիրելի խայծերից մեկն է:

Մարդի չեն կարողանում պաշտպանել քրիստոնեությունը
Իմ զավակները, չնայած ժամանակակից հաղորդակցության աշխարհին, չեն կարողանում ոտքի կանգնել և ընդունել իրենց քրիստոնյա լինելը: Սա հիմնականում այն փաստի պատճառով է, որ քրիստոնյաների մեծ մասն ապրում է արևմտյան աշխարհում: Նրանք սարասափում են, երբ մտածում են որ իրենց վրա կծիսծաղեն կամ ծաղրի կենթարկվեն: Նրանք բացարձակապես ճիշտ են: Նրանց կծաղրեն: Բայց ուշադրություն դարձրեք սրա վրա: Իմ զավակները միշտ էլ ինչ-որ ձևով ծաղրի են ենթարկվում, երբ վերցնում են Իմ խաչը: Այդ դեպքում նրանք կարող են վստահ լինել, որ կատարում են Իմ աշխատանքը:

Նրանք, ովքեր տառապում է հանուն Ինձ, կստանան մեծ օրհնություններ և բազմաթիվ շնորհներ: Բայց այն քրիստոնյաները, ովքեր մարտնչում են հրապարակայնորեն հռչակելու համար Իմ անունը, ամենաշատը կտառապեն: Նրանք պետք է ուժեղ մնան: Դուք Իմ հույսն եք այս երկրի վրա; Առանց Իմ նվիրյալ հետևորդների Իմ զավակները չեն կարողանա անցնել դեպի Իմ Հոր Թագավորություն տանող վերջնական շեմից:

Ես սիրում եմ Իմ բոլոր հետևորդներին: Ես նրանց սրտերում եմ, և նրանք գիտեն դա: Ուշադրություն դարձրեք Իմ խոսքին հիմա այս մարգարեի միջոցով տրվող: Մի արհամարհեք այս պատգամները: Նրանք կօգնեն, ասված խոսքի միջոցով, փրկել միլիոնավոր հոգիների ողջ աշխարհով մեկ, նախքան Իմ Երկրորդ Գալուստը:

Գնացեք հիմա խաղաղությամբ և սիրեք: Ձեր նվիրյալ Փրկիչ Հիսուս Քրիստոս

Մեծ Դժբախտություն

Ստացված Հինգշաբթի 20 Դեկտեմբեր 2010թ, առավոտյան ժ. 10.00

Ուշադրություն դարձրու սրա վրա աղջիկս: Մարդկությունը նախազգուշացվում է, այս պատգամների միջոցով, այն կացնի մասին, որը կիջնի նրանց վրա, ովքեր շարունակում են մերժել Հավիտենական Հորը: Ժամանակը մոտենում է **Մեծ Դժբախտության** գալստի: Այս իրադարձությունը **կսկսվի 2012թ-ի վերջից**, և չպետք է այն շփոթել Երկիր իմ Երկրորդ Գալստյան ժամանակի հետ**,** քանի որ դա, զավակներս, չի կանխասավցում այս պատգամներում: Ով էլ որ փորձի Իմ զավակներին տալ Իմ Երկրորդ Գալստյան վերաբերյալ որևէ ամսաթիվ, ստախոս է և մաքուր մարգարե չէ: Ես, այնուամենայնիվ, այս մարգարեի միջոցով բացահայտում եմ յուրահատուկ դեպքերի տարիներ, որոնք տանում են դեպի Իմ Երկրորդ Գալուսը:

Աստված թույլ չի տա, որ աշխարհի բնակչության սպառման ծրագիրը կատարվի
Այնքան վաղուց կանխասացված Մեծ Դժբախտությունը հիմա կսկսի իրականանալ չհավատացող աշխարհի աչքերի առջև: Սա կլինի, երբ արդարադատության սուրը կիջնի ամենուր: Իմ Հավիտենական Հայրը չի պարաստվում ետ կանգնել և թույլ տալ չար ծրագիրը, որը հենց հիմա նյութվում է փակ դռների ետևում և նախատեսում սպառել աշխարհի բնակչությանը, հասկացեք:
Չար խումբը, Սատանայի նվիրյալ հետևոդները, անցյալում փորձել են ցեղասպանություն պարտադրել Իմ Հոր զավակների վրա: Նրանք ձախողվեցին: Նրանք նորից փորձում են: Նրանք նորից կընկնեն, բայց կհասցնեն դրանից առաջ սարսափելի ավերածություն առաջացնել:

Հավատացյալները չպետք է վախենան
Իմ Հավիտենական Հայրը, Իր գթասրտությամբ, ստիպված կլինի միջամտել, որ կանգնեցնի նրանց, չնայած այն բանին, որ Նրան ցավ է պատճառում գլոբալ աղետներ սանձազերծել, որոնք առջևում են: Հավատացյալներ չվախենաք ձեր կամ ձեր ընտանիքների համար: Դուք պաշտպանության տակ եք: Բայց

խնդրում եմ աղոթեք **Սուրբ Վարդարանը** և Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքը միշտ, որ օգնեք թեթևացնել և խույս տալ որոշ աղետներից:
Հիմա սկսեք նախապատրաստվել: Այդ մարդկանց դեմ, մինչ նրանք փորձում են վերահսկել ձեր փողը, առողջությունը, սնունդը և նույնիսկ հավատը, պետք է կռվել: Կանգնեք և պաշտպանեք ինքներդ ձեզ և ձեր ընտանիքներին, աղոթքի միջոցով: Կանչեք բոլոր սրբերին, որոնց հարգանք եք մատուցում, որ օգնեն ձեզ որպես միջնորդներ Իմ Հավիտենական Հոր մոտ:

Գլոբալ աղետները կհարվածեն
Մինչ գլոբալ աղետները սկսվել են եղանակի մեջ կատարվող դրամատիկ փոփոխություններով, որն արդեն սկսվել է մեղմ տեսքով, նրանք կդիտվեն որպես գլոբալ նախազգուշացման հետևանք: Այո, մարդկությունը փչացրել է երկիրը չափազանց այլանդակ ձևով, բայց այդ աղետները ոչ մի կապ չունեն կլիմայի փոփոխության հետ:
Իմ Հավիտենական Հայրը կարող էր, եթե որոշեր, ետ նստել և ոչինչ չանել: Այդ ժամանակ որոշում կայացնողների այդ չար, իշխանության ծարավ և խաբված խմբերը կհաղթեին: Նրանք հոգիներ կգողանային, քաշելով Իմ զավակներին Սատանայի՝ Չարի հանդեպ իրենց հիպնոտիկ նվիրվածության ցանցերի միջոցով: Նրանց դա թույլ չի տրվի:

Կոչ բոլոր կրոններին՝ միավորվելու
Ժամանակն է հիմա իմ Հոր զավակների ու հետեւորդների համար, ինչպես նաև նրանց համար, ովքեր հավատում են գերագույն էությանը, որն Աստված է՝ ամեն ինչի արարիչն ու ստեղծողը, միավորել ուժերը որպես մեկ: Անկախ նրանից, թե ինչ ուղիով եք հետևում Աստծուն, կամ հավատում եք Ինձ՝ Նրա միակ սիրելի որդուն, կանգնեք միասին որպես մեկ: Կռվեք այն խմբի դեմ, որը ներկայացնում է Չարին: Նա ձեր թշնամին է, եթե դուք հավատում եք Աստծուն՝ Հավիտենական Հորը: Նա փորձում է արգելել ձեզ մտնելու Դրախտ, ստելով իր հետևորդներին, որ ինքը նույնպես նրանց կտանի համազոր կերպով գեղեցիկ դրախտ: Այդ խեղճ մոլորված և վստահության արժանի հետևորդները չեն կարող տեսնել խաբեության միջոցով, քանի որ կուրացած են նյութական փառքի հմայքով:

Հովհաննու Գրքի մարգարեությունները հիմա ի հայտ են գալիս
Աղոթեք, աղոթեք, աղոթեք բոլորդ ամեն օր: Շատ շուտով բոլորը կհասկանան Սուրբ Գրքի ճշմարտությունը: Բոլորը կհասկանան, վերջապես, որ Իմ Հոր Գրքում պարունակվող ուսուցումները ճշգրիտ են: Նրանք չեն ստում: Անցյալում կանխասացված մարգարեություններն ի հայտ են գալիս: Հովհաննու Գրքում պարունակվող մարգարեությունները հիմա ի հայտ կգան: Այս

մարգարեին տրված այս պատգամները Իմ զավակներին Իմ Հոր Թագավորություն մտնել նախապատրաստելու համար են:
Գնացեք հիմա, տարածեք Իմ ճշմարտությունը: Փրկեք մեկդ մյուսին Խաբեբայի ճանկերից քանի դեռ չափազանց ուշ չէ:
Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Երրորդ պատգամը Կույս Մարիամից

Լսիր Ինձ զավակս: Դու պետք է ուժեղ մնաս Իմ սիրելի որդու՝ Հիսուսի Քրիստոսի համար: Նա չափազանց յուրահատուկ և կարևոր է քեզ համար, որպեսզի դու հեռանաս մտքումդ կասկածներ ունենալով: Այո, հեշտ է շփոթության մատնվել այս աշխարհում, բայց դու պետք է ամբողջապես վստահես նրան: Նա կարիք ունի, որ դու ենթարկվես և Իրեն տաս բացարձակ վստահություն:

Զավակս, քեզ համար հեշտ չի եղել այս աշխատանքը, բայց ինչպես Ես նախկինում ասել եմ, դու սիրում ես հաստատակամ լինել:Դու հաջողությամբ կավարտես քո գործը: Ես կոչ եմ անում քեզ ետ վերադառնալ ամենօրյա աղոթքի:: Քանի որ Իմ **Ամենասուրբ Վարդարանի** միջոցով է որ կպաշտպանվես: Այս աշխատանքը չափազանց սրբազան է, զավակս, ուստի հարգանքից ելնելով, խնդրում եմ ենթարկվիր Իմ Որդուն՝ նրան ամբողջապես վստահելով: Մի կողմ հրիր կասկածներդ, զավակս, քանի որ քեզ տրվել են յուրահատուկ շնորհներ Սուրբ Հոգու կողմից: Հիմա ճշմարտությունը քո սրտի, հոգու և մտքի մեջ է: Սա է պատճառը, որ քեզ համար ավելի հեեշտ եղավ գրել պատգամները, որոնք Իմ Սիրելի Որդին տալիս է քեզ:

Նա սիրում է քեզ զավակս, և ընտրել է քեզ այս դարի ամենակարևոր առաջադրանքներից մեկի համար: Քո աշխատանքը համեմատվում է քույր Ֆաուստինայի կատարած աշխատանքի հետ: Դու կրում ես նմանատիպ տառապանքներ, որոնք նա կրեց Մի վախեցիր այդ տառապանքներից, որոնց մեջ է նաև աղոթել կարողանալու պակասը և ամենաօրյա կասկածները, որոնք բնական են: Դրանք կանցնեն: Բոլոր սրբերը, ներառյալ սուրբ Ֆաուստինան, քայլում են քեզ հետ, զավակս, և ուղղություն տալիս քեզ ամեն օր:

Աշխատանքը, որը դու կատարում ես հանուն Ինձ և Իմ Սիրելի Որդի Հիսուսի, կանխասացվել է: Դա ամենակարևոր ձևերից մեկն է, որով կարող ես հոգիներ փրկել:Մի երերա և մի տատանվիր: Միշտ, միշտ կանչիր քո Սիրելի Մորը օգնության համար: Ես այստեղ եմ քեզ համար: Խնդրում եմ ամեն օր աղոթիր

Իմ Որդուն, ասելով Նրա **Աստվածային Գթասրտության** աղոթքը: Այդ կերպ դու ավելի մոտ կլինես նրան և ավելի շատ կզգաս նրան քո սրտի մեջ:

Արիացիր և առաջ շարժվիր հիմա: Սիրով նայիր այն թանկագին արահետին, որը տանում է դեպի Օրհնյալ Երրորդություն: Բոլորը քեզ հետ են: Դու կտառապես, բայց դա շնորհ համարիր, քանի որ առանց տառապանքի չես կարող մոտ մնալ Իմ Որդու սրտին:

Այժմ այսքանը: Շրջվիր և բաց արա սիրտդ հիմա Իմ Սիրելի Որդի Հիսուսի՝ Ամենաբարձրյալի համար:

Սեր և խաղաղություն: Վարդերի Տիրամայր

Ցավը, որով Հիսուսն այսօր տառապում է

Ստացված հինգշաբթի, 22 դեկտեմբերի, 2010թ, առավոտյան ժ 2.40

Աղջիկս, Ես սոսկալիորեն տառապում եմ մարդկության մեղքերի համար և Իմ գոյության դաժան ժխտման պատճառով, որն այսօր այնքան սովորական է դարձել աշխարհում, որ չհավտացողների թիվը, ովքեր իրենց մեջքն են շրջել դեպի Ինձ, հասել է արտառոց քանակի:

Ցավը, տառապանքն ու տանջանքն էլ ավելի ուժգին են արտահայտվում, երբ աշխարհը տոնում է Սուրբ Ծնունդը: Ես գիտեմ Իմ սրտի մեջ, որ դա ամենակարևոր քրիստոնեական տոնն է, և Իմ ուսուցումները հայտարարվում են այն ձևով, ինչպես պետք է:

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է հաստատակամ լինես քո տառապանքի մեջ՝ ինչպես մտքի, այնպես էլ հոգու: Դրանք քեզ ավելի կմոտեցնեն Իմ Սուրբ Սրտին: Միայն այն ժամանակ, երբ տառապանքով դիմանաս այդ փորձություններին, դու միասնության մեջ կլինես Ինձ հետ:

Աղջիկս, աղոթիր, աղոթիր այն մյուս հոգիների համար, ովքեր կթեթևացնեն Իմ կրած տառապանքները: Ոհ, եթե միայն Ես կարողանայի փրկել հոգիներին արագորեն և գրկել նրանց իմ սիրող բազուկների մեջ, Իմ սիրտը կսփոփվեր: Բայց շատ հոգիներ չեն շրջվի դեպի Ինձ: Դու պետք է շատ աշխատես նրանց ճշմարտության մեջ համոզելու համար, աղջիկս: Երբեք չնահանջես:
Դու լի ես կասկածներով, բայց Ես գիտեմ, որ սրտիդ խորքում հասկանում ես,

որ Գթասրտության այս պատգամները՝ հոգիների փրկության համար տրվող, ճշմարտապես գալիս են Ինձնից և Իմ Հավիտենական Հորից:

Հաստատակամ եղիր, ընդունիր տառապանքը, խոնարհ եղիր, համբերատար և գործիր արժանապատվությամբ, երբ քեզ մարտահրավեր են նետում Իմ անվան համար:
Գնա հիմա նորացված եռանդով, սիրով և զորությամբ, որ ետ գրավես Իմ սիրելի զավակների հոգիները:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Ինչու ես դարձա մարդ

Ստացված ուրբաթ 24 դեկտեմբերի 2010թ, առավոտյան 8-ից երեկոյան 8.15

Իմ սիրելի աղջիկ, շնորհակալ եմ, որ պատասխանեցիր կանչիս: Ուրախությամբ եմ Ես հաղորդակցվում քեզ քեզ Իմ ծննդյան տոնակատարության պահին: Իմ բոլոր զավակների կողմից ցույց տրված հավատի և պաշտամունքի հետևանքով Իմ Սրտի մեջ լցվող սերը չափազանց թանկ է:

Սա ամենուր գտնվող Իմ զավակների համար այն պահն է, որ մտածեն, թե երկրի վրա Իմ անցկացրած կյանքը ինչ հետևանքներ ունի մարդկության վրա: Իմ ծննդյան պատճառով է, որ մարդը փրկություն կփնտրի: Իր բոլոր զավակների հանդեպ Իմ Հավիտենական Հոր ունեցած սիրո պատճառով էր, որ Նա կատարեց գերագույն զոհաբերությունը: Այն, որ Նա պետք է տեսներ մանկան ծնվելը, նրա աճը, երբ երեխա էր մինչև հասունություն՝ հստակորեն ցույց տալով Իր սերն ու վճռականությունը՝ փրկելու համար Իր բոլոր զավակներին:: Նա այնքան շատ է սիրում Իր բոլոր զավակներին, որ Ինձ խնդրեց ապրել մի կյանք որպես մարդ, իմանալով, որ Ես կստորացվեմ և ծաղրի կենթարկվեմ: Նա թույլ տվեց, որ դա կատարվի:

Իմ ծնունդը մի նշան է բոլորի համար, որ Աստված՝ Հավիտենական Հայրը այնքան սիրեց Իր զավակներին, որ մի հսկայական զոհաբերություն կատարեց: Ինձ թույլ տալով երկիր գալ և ապրել ձեր մեջ, Նա ցույց տվեց Իր կարեկցանքն ու ցանկությունը՝ փրկելու ձեզ, Իմ մահը թույլ տալու միջոցով: Եթե Նա Ինձ չուղարկեր, մարդը չէր կարող փրկվել: Սակայն նրանք, ովքեր Ինձ մերժում էին, դեռևս վստահ չէին Աստծո՝ Հավիտենական Հոր տված խոստումների վերաբերյալ: Մինչև հիմա էլ բավականին խառնաշփոթություն կա:

Հիմա մարդկությունը պետք է հասկանա նոր Երկնքի և Երկրի խոստումներն ու իրական լինելը, որը նախատեսված է Աստծո բոլոր զավակների համար: Սա ամենամեծ պարգևն է, և այն ընծան, որը նախատեսված էր ձեզ բոլորիդ համար, որ կիսեցիք Նրա հետ, մինչև այն ժամանակը, երբ Սատանան ոչնչացրեց այն՝ Եվային գայթակղեցնելու միջոցով:

Այսօր մարդիկ շատ դեպքերում Հին և Նոր Կտակարանների ուսուցումները դիտում են որպես առակներ: Շատերը չեն հասկանում, որ դրանցում եղած ուսուցումները եղել և մնում են վավերական: Քանի որ շատ դեպքերում հղում է արվում հոգևոր թագավորության մեջ կատարված դեպքերին, մարդկանց համար դժվար է հավատալ, որ դրանք կարող է տեղի ունեցած լինեն: Նրանք հանգել են այդ եզրակացությանը, քանի որ գնահատում են այդ բովանդակությունը տրամաբանական մտածողության միջոցով՝ հիմնվելով այն ամենի վրա, ինչ տեղի է ունենում երկրի վրա: Բայց նրանք սխալվում են:

Երկիր Իմ գալը նախապատրաստված էր որպես մի վերջին հնարավորություն աշխարհն արթնացնելու համար, որպեսզի բոլորը հասկանան, որ Աստված ամենաներող է: Իմ դերն էր ձեզ ցույց տալ, Իմ ուսուցումների և խաչի վրա մահվամբ, դեպի Երկինք տանող Ճանապարհը:

Ուրեմն հիշեք, որ Սուրբ Ծննդին Իմ ծնունդը օգնելու համար էր ձեզ, որ վերագնահատեք Դրախտի հանդեպ ունեցած ձեր հավատը, որին դուք բոլորդ կոչված եք մասնակից լինելու: Իմ կյանքը հիշելով դուք կարող եք հիմա միանալ Ինձ Իմ Հոր Թագավորության մեջ, եթե բացեք ձեր սրտերը և խնդրեք Ինձ մեկ անգամ ևս գրկել ձեզ:

Ձեր Աստվածային Փրկիչ և Արդար Դատավոր Հիսուս Քրիստոս

Կեղծ ուսուցիչներ եւ մարգարեներ

Ստացված Շաբաթ 25 Դեկտեմբեր 2010թ, առավոտյան ժ. 10.30

Ես սկիզբն եմ և վերջը: Իմ միջոցով Իմ Հավիտենական սիրելի Հայրը ստեղծեց աշխարհը և Իմ միջոցով այն կվերջանա: Ես լույսն եմ Փրկիչը, ով բոլոր նրանց, ովքեր Ինձ հավատում են, կբերի խոստացված Դրախտի մեջ: Նրանք, ովքեր չնայած Իմ բոլոր ուսուցումներին և Իմ մարգարեների ջանքերին, դեռևս մերժում են Ինձ ընդունել, չեն մտնի Իմ Հոր Թագավորություն:
Ձեզանից նրանք, ում Սուրբ Գրքերի միջոցով տրվել է ճշմարտության ընծան, պետք է բացեք ձեր աչքերը հիմա և ընդունեք Իմ ուսուցումները և Իմ մարգարեների կողմից տրված մարգարեությունները: Վերջապես մոտենում է այն ժամանակը, երբ Ես կվերադառնամ Երկիր ետ վերցնելու Իմ սիրելի

հետևորդներին: Իմ ժամանակակից մարգարեների միջոցով, տխուր է, բայց Ինձ կշարունակեն մերժել: Դուք բոլորդ պետք է լսեք և կարդաք Իմ կողմից տրվող պատգամները, որոնք տրվում են գթասրտությունից ելնելով, և հասկանաք դրանց կարևորությունը:

:

Իմ Ուսմունքները երբեք չեն փոխվել

Դուք պետք է հիշեք, որ Իմ ուսուցումները նույնն են, ինչ միշտ եղել են: Նրանց, ովքեր գալիս են Իմ անունից, պետք է ուշադրությամբ հետևել: Եթե նրանք հայտարարում են Իմ խոսքը, ուրեմն լույսից են: Երբ տեսնում եք, որ ուսուցումները փոխված են որևէ ձևով, որը ձեզ տարօրինակ կթվա, ուրեմն հեռացեք: Մի լսեք: Այդ դժբախտ մարդիկ գայթակղվել են Չարի կողմից՝ գիտակցաբար աղավաղելու համար Իմ ուսուցումները, որ ձեզ շեղեն և շփոթության մատնեն:
Ցանկացած վարդապետություն, որը չի սերում Սուրբ Գրքից և որը հայտարարում է, թե հռչակում է ճշմարտությունը, սուտ է: Դա մեղք է Իմ դեմ և ծանր հարձակում Ինձ վրա և Իմ Հավիտենական Հոր վրա:

Կեղծ Մեսիա

Շուտով այս կեղծ ուսուցիչներն իրենց հայտնի կդարձնեն աշխարհով մեկ: Դուք նրանց կտեսնեք ամենուրեք՝ բղավելով ինչքան կարող են բարձր, ուշադրություն փնտրելով: Ոմանք այն աստիճան կգրավեն Իմ զավակներին, որ նույնիսկ Իմ ճշմարիտ հետևորդները կհավատան, որ նրանք ունեն աստվածային զորություններ: Հատկապես մեկը կբարձրանա այնպիսի բարձունքների, որ մարդիկ սխալմամբ կհավատան, որ նա Մեսիան է:
Իմ զավակներից կպահանջվի մեծ արիություն, մեկ միտք և ուժ, որ կպչեն Ինձ և թույլ տան Ինձ առաջնորդել իրենց դևերով լցված այդ վտանգավոր ջունգլիի միջով: Վերջին օրերի սկսվելու հետ Սատանայի կողմից արձակված դևերը կգան դիմակավորված որպես Իմ հետևորդներ և մարգարեներ: Հիմա նրանք համախմբում են, թիրախ ունենալով Իմ ճշմարիտ մարգարեներին ու տեսանողներին: Նրանք (դևերը) կփորձեն լռեցնել նրանց կեղծ վարդապետությամբ: Նրանք կշրջեն ճշմարտությունը, հարմարեցնելու համար այն իրենց անբարոյական ուղիներին, որն արտաքինից դժվար կլինի զանանանել:Իմ նվիրյալ հետևորդները, ծատաներն ու մարգարեները անմիջապես կիմանան, թե ովքեր են այդ չար մարդիկ: Նրանք ցավալի և անհանգստացնող կհամարեն այդ հայտարարությունները: Բայց ամենից շատ նրանց սրտերին ցավ կպատճառի այն փաստը, որ այնքան շատ քրիստոնյաներ կխաբվեն նրանց հմայիչ տեսքից: Նրանք այնքան համոզիչ կլինեն, որ շատերն իրենց չար ցանցերի մեջ կքաշեն Իմ նվիրված ծառաներին, ովքեր նվիրել են իրենց կյանքը Ինձ և Իմ Հավիտենական Հորը:

Կոչ քրիստոնյաներին՝ կանգնելու
Սուրբ Հոգու շնորհներով օծված Իմ նվիրյալ հետևորդներին հիմա Ես կոչ եմ անում: վերցրեք հավատի ձեր զենքերն ու ուժեղ մնացեք: Մարտի կանչեք նրանց: Սովորեցրեք մարդկանց ճշմարտությունը՝ նրանց մշտապես հիշեցնելով այն ճշմարտությունը, որը պարունակվում է Իմ Հոր Գրքի՝ Ճշմարտության Գրքի մեջ: Այդ ուսուցումները հարատև են:
Ձեզ համար, զավակներս, դժվար կլինի կանգնել և հաշվել, բայց լսեք Ինձ հիմա:Եթե դուք դա անեք, կօգնեք փրկել հոգիների: Ձեր եզբայրներն ու քույրերն աշխարհում ձեր ընտանիքն են: Ես ձեզ բոլորիդ Ինձ հետ կտանեմ Դրախտ, որը խոստացել եմ Իմ բոլոր սիրելի զավակներին: Ամենուր Իմ հետևորդների կողմից արվող աղոթքների, զոհողությունների և հաստատակամության միջոցով է, որ Իմ կամքը կկատարվի:
Վերցրեք փրկության գավաթը հիմա Իմ անունով: Հետևեք Ինձ: Թույլ տվեք Ինձ առաջնորդել ձեզ բոլորիդ: Թույլ տվեք Ինձ գրկել ձեզ Իմ Սրտում, երբ միավորվենք միասին փրկելու մարդկությանը Խաբեբայից:
Հիշեք սա. Ես սիրում եմ Իմ զավակներից յուրաքանչյուրին այնպես, որ հաղթանակի քաղցրությանը դառնություն կխառնվի և Իմ սիրտը կկոտրվի, եթե նրանց բոլորին հավիտենական կյանքի մեջ չբերենք:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք հիմա դուք բոլորդ և հիշեք հետևյալ խոսքերը՝ Ես Ալֆան եմ և Օմեգան:
Ձեր սիրելի Փրկիչ Հիսուս Քրիստոս, Թագավորը Երկրի եւ Արդարացի Դատավոր ողջ մարդկության.

Սուրբ Ծննդի նշումը

Ստացված երեքշաբթի 25 դեկտեմբերի, 2010թ, առավոտյան ժ12.30

Իմ սիրելի աղջիկ, ինչու՞ Ես տատանվում: Մի՞թե չգիտես, որ քեզ առաջնորդում եմ ամեն օր: Դու սրտիդ մեջ վստահորեն գիտես, որ պետք է միայն նստես, բացես քո սիրտը և դրանից հետո կլսես Իմ պատգամը: Վստահիր Ինձ: Անձնատուր եղիր: Հավատա, որ երբ դու Ինձ ես փոխանցում քո վախը, անհանգստությունը, հոգսերը և խնդիրները, որ Ես կվերցնեմ դրանք քեզնից և համապատասխան ձևով կպատասխանեմ: Հիմա դու պետք է ժամանակ տրամադրես ուշադրություն դարձնելու համար ողջ մարդկության համար տրվող այս ամենակարևոր պատգամներին: Մի տատանվիր առաջ տանել այս ամենասրբազան աշխատանքը:

Հիմա ուշադրություն դարձրու սրա վրա, Իմ սիրելի աղջիկ: Մինչ ամբողջ աշխարհով մեկ քրիստոնյաները պատվում են Բեթղեհեմում Իմ ծնունդը, շատերն են հարգանք մատուցում առանց իսկական սիրո իրենց սրտերում: Չնայած դրան, շատերը կմոտենան Իմ սրտին:Մյուսները պարզապես գլխով կանեն, կժպտան և կխոսեն համառոտ կերպով այս ամենակարևոր ժամանակի նշանակության մասին, երբ նշվում է Իմ Հոր զավակների վրա ժամանակների սկզբից ի վեր մարդկության վրա հեղված ամենամեծ ընծան: Սակայն երբ Իմ զավակները, Իմ նվիրյալ հետևորդները տոնում են Սուրբ Ծնունդը, նրանց ուշադրությունը շեղվում է աշծարհիկ բարիքների հետ կապված արտաքին շուքից և արարողություններից:

Քանի՞սն են քրիստոնյաներից բատարում իրենց երեծաներին Իմ ծննդյան նշանակությունը: Քանի՞սն են հիշում Իմ սիրելի Մոր և Նրա սուրբ ամուսին Հովսեփի ցուցաբերած խոնարհությունը: Քանի՞սն են հասկանում, որ Ես դարձա մարդ, որ փրկեմ մարդկային ռասան Դժոխք տանող ճանապարհից: Այս պարզ պատգամն է, որ աղավաղվել է դարեր ի վեր և քողարկվել ցուցամոլությամբ: Այնուամենայնիվ, այն ճանաչվել է նվիրյալ քրիստոնյաների կողմից որպես մի ժամանակ, որ մտածեն Իմ՝ իրենց Փրկչի հանդեպ ունեցած իրենց հավատարմության մասին: Խնդրում եմ, Ես կոչ եմ անում ձեզ, զավակներս, օգտագործել այս Տոնը աղոթելու համար աշխարհում բոլոր նրանց համար, ովքեր կարիք ունեն արթնանալու՝ հասկանալու համար այն փաստը, որ իրենք ժառանգություն ունեն: Այստեղ է, որ նրանց համար հատուկ տեղ է պահված Իմ Հոր Թագավորության մեջ, եթե նրանք ընտրեն այն ընդունել:

Մեծ Նախազգուշացման ժամանակը որոշված է
Այնքան կլանված են Իմ զավակները նորություններով օրվա յուրաքանչյուր րոպե, որ ազդում է իրենց կյանքի վրա, բայց ոչ մի հետևանք չունի Հավիտենական Կյանքում: Զավակներս, ժամանակն է, որ դուք բոլորդ քննեք ձեր գիտակցությունը հիմա, նախքան Մեծ Նախազգուշացումը, որը նախորդում է Իմ Երկրորդ Գալուստին: Աղոթեք ձեր սեփական պարզ բառերով Աստվածային առաջնորդության համար:

Մեծ Նախազգուշացման ժամանակն արդեն որոշված է: Զգոն եղեք:

Ձեր Աստվածային Փրկիչ և Արդար Դատավոր Հիսուս Քրիստոս

Նախազգուշացում հավատացողներին՝ չմերժել իսկական մարգարեներին

Ստացված երեքշաբթի 28 դեկտեմբերի, 2010թ, առավոտյան ժ11.00

Իմ սիրելի աղջիկ, հիմա քեզ տալիս եմ վերջնական պատգամը մարդկության համար՝ մտածելու նախքան վերջին ժամանակը, որպեսզի փրկեն իրենց հոգիները:

Ինչպես կանխասացվել է, հիմա բազմաթիվ հրեշտակներ են ցրված աշխարհով մեկ նախապատրաստելու երկիրը Իմ հայտնվելու համար: Այդ հրեշտակներից շատերը մարդկային տեսքով են, և ինչպես դու, Իմ սիրելի աղջիկ, ընտրել են այս դերը: Ծննդյան պահին նրանց ներգրավումը ժամանակադրված էր այնպես, որ համընկնի վերջնական Նախազգուշացման և Վերջին Ժամանակների հետ: Նմանապես, Դժոխքի խորքերից արձակված դևերը սանձազերծվում են: Նրանք, երբ իրենց ներկայացնում են այս երկրի վրա, ներկայանում են գայթակղության և ստերի միջոցով: Նրանք հարձակվում են Իմ զավակների վրա, ովքեր բաց են նրանց ազդեցության հանդեպ: Նրանք վարակում են այն հոգիներին, որոնք արդեն խավարի մեջ են: Նրանք մտնում են այդ հոգիների ոգիների մեջ՝ խաբելով նրանց և համոզելով, որ Իմ և Իմ Երկնային Հոր հանդեպ նրանց հավատը անմտություն է:

Այս մարդիկ արտաքնապես չունեն այնպիսի տեսք, որը ասոցացված կլինի ձեր կարծած չարի հետ: Դրա փոխարեն նրանք կերևան խելացի և ոգեշնչող: Նրանք նաև բավականին համոզիչ կլինեն քարոզելիս այն, ինչը Իմ բարի զավակները կհամարեն ճշմարտություն: Տխուր է, բայց նրանց սրտերում սեր չի լինի, և դուք պետք է զգոն լինեք նրանց ուսուցումների հանդեպ:

Հիմա Ես ցանկանում եմ կոչ անել Իմ հավատացողներին: Դուք, զավակներս, աղոթքի և հավատքի միջոցով ստացել եք այն ընծաները, որոնք Ես խոստացա բոլոր նրանց, ովքեր հետևում են Ինձ: Ձեզ տրվել են տարբեր ընծաներ, և յուրաքանչյուր ընծա նախատեսված է տարբեր սովորությունների մեջ Իմ խոսքը տարածելու համար:

Տեսանողների գնահատումը

Նրանց, ում Ես տալիս եմ իմացության ընծան, որ օգնի ձեզ տարբերել Իմ անունով եկողներին և նրանց, ովքեր գալիս են Սատանայի անվամբ, խնդրում եմ եղեք չափազանց զգույշ: Ճիշտ է միայն, որ զգուշանաք կեղծ մարգարեներից: Այնուամենայնիվ, երբեք մի դատեք նրանց, ովքեր ասում են, որ գալիս են Իմ անվամբ, առանց նրանց պատգամները նախապես հստակորեն գնահատելու: Դուք երբեք չպետք է <<արտաքին երևույթով>> դատեք Ինձնից եկող պատգամները: Երբ մեկն ասում է, թե գալիս է Իմ անունով, մի ենթադրեք, թե նրան տված ձեր գնահատականն անսխալական է: Ուշադիր եղեք այն մարգարեների հանդեպ, որոնց ծաղրում են, կամ բարկանում, երբ նրանք

հայտարարում են, թե իրենք ստանում են աստվածային պատգամներ Իմ կամ Իմ Օրհնյալ Մոր կողմից:

Տեղի մի տվեք գայթակղությանը անմիջապես դատողություն նետելու նրանց հանդեպ, առանց նախապես ուշադրությամբ լսելու պատգամները: Այդ պատգամները ոչ միանյ կվերաբերեն Իմ ուսուցումներին, այլև Իմ խոսքին և կլինեն սիրով լի: Նրանք կսովորեցնեն ձեզ, ինչպես ապրել ձեր կյանքն Իմ անվամբ, որ հասնեք փրկության:

Երբեք մի անհանգստացեք, երբ Իմ իսկական մարգարեները հայտարարում են, որ նրանք մեկուսի ստանում են պատգամներ գալիք իրադարձությունների մասին: Մի ընդունեք գործելու կանխակալ կարծիքի մեղքը, դատելով պատգամները ելնելով նրանից, թե ինչ խավի մարդիկ են դրանք ստանում: Նրանցից ոմանք կրթված չեն լինի: Ոմանք կրթված կլինեն և պարզ: Շատերը չեն համապատասխանի <<Սուրբ>> անձնավորության ձեր պատկերացումներին:

Բայց կան միջոցներ, որոնցով կարող եք վստահանալ նրանց վավերականությանը: Նրանք, ովքեր հաղորդակցվում են Իմ Սիրելի Մոր հետ, մեծ մասամբ, կանխասում են Նրա ասած երևումները ժամով և ամսաթվով: Այդ երևումներին գնացողները շատ դեպքերի ականատես կլինեն: Այն դեպքերում, երբ Իմ պատգամները կտրվեն մարդկության համար, դրանք կարվեն առանց մարգարեի կողմից փառք փնտրելու:

Մարդկանց մասին դատողություններ անել
Վերջապես, Ինձ հավատացողները, չնայած Իմ հանդեպ իրենց նվիրվածությանը, կշարունակեն վիրավորանք թափել նրանց վրա, ովքեր ասում են գալիք իրադարձությունների մասին և վիրափորանքների տարափ կտեղան այն օրհնյալների վրա, ովքեր Սուրբ Հոգուց ունեն բուժման զորություն: Կանդ առեք և արթնացեք ձեր խաղաղ թմբիրից: Այս մարգարեները կխանգաներն ձեր առօրյան, որովհետև նրանք հարմարավետորեն չեն նստում ձեր սուրբ խմբի հետ: Նրանք չեն համապատասխանի այն ձևին, որը դուք եք ակնկալում: Ուշադրություն դարձրեք սրան: Եթե դատեք այդ մարդկանց հերետիկոսության համար կամ ելնելով երրորդ կողմի բամբասանքներից կամ չարամիտ ակնարկներից, դուք կմեղադրվեք մեղքի մեջ: Մեղքը Իմ մարգարեների հանդեպ խորապես վիրավորում է Ինձ: Երբ մերժում եք Իմ իսկական տեսանողներին և մարգարեներին, դուք ձեր մեջքն եք շրջում դեպի Ինձ:

Սակայն սա ճիշտ այն է, ինչ պատահում է այսօր աշխարհում, մինչ ավելի շատ տեսանողներ են հրապարակ ելնում: Ինձ հավատացողների համար հեշտ չէ:

Պարզապես հիշեք, որ Իմ մարգարեների կողմից բերված պատգամները պետք է նախապես կարդալ, հետո դատել, և դա նաև նույնիսկ նրանց համար, որոնք գալիս են կեղծ մարգարեներից: Խնդրեք առաջնորդություն, երբ մտածում եք այս պատգամների մասին: Իսկական պատգամները լի կլինեն սիրով: Սակայն հաստատուն՝ իրենց իրավասության մեջ: Այն պատգամները, որոնք դեմ են այն ամենին, ինչ դուք սովորել եք Իմ ուսուցումներից և Իմ առաքյալներից, անկախ նրանից, թե որքան ճարպիկ են, հեշտությամբ կգնահավեն:

Լուռ մի նացեք ձեր հավատքի մասին
Գնացեք հիմա զավակներս, և ձեր սիրտը բացեք Իմ մարգարեների հանդեպ: Նրանք պատրաստ են տալու ձեզ հավաստիացումները, որ ժամանակն արդեն եկել է, որ Ես ձեզ բոլորիդ նախապատրաստեմ խոսելու Իմ անունից: Հիշեք, փառքը տրվում է Իմ մարգարեներին, ովքեր խոսում են չնայած այն նվաստացումներին ու վիրավորանքներին, որոնք նրանք ստիպված են կրել: Այնուամենայնիվ, պատիժ կհասնի նրանց, ովքեր ասում են, թե հետևում են Ինձ, բայց կլռեն իրենց հավատի մասին, իսկ մյուս կողմից արագ կլինեն Իմ իսկական տեսանողների դեմ խոսելու մեջ: Ձեր սրտերի մեջ դուք գիտեք, որ նրանք, ում դուք արհամարհել եք, խոսում են իրադարձությունների մասին, որոնք ձեզ համար չափազանց դժվար է ընդունել: Դուք կհարցնեք, թե ինչու՞ է իմ Փրկիչ Հիսուս Քրիստոսն աշխատում այդպիսի անհատների հետ: Վերջին հաշվով, նրանք սուրբ հետևորդներ չեն ըստ Իմ ճափանիշերի:Լավ, Իմ հարցը ձեզ սա է. Ինչու՞ եք հավատացած, որ միայն մի քանի ընտրյալները, ովքեր նվիրում են իրենց կյանքը աղոթքին, իրավասություն ունեն հեռացնելու նրանց, ովքեր խոսում են ձեր շրջաններից դուրս: Դուք ոչինչ չե՞ք իմացել: Դուք չե՞ք հասկանում, որ նրանք, ովքեր անց են կացնում իրենց կյանքը աղոթքին նվիրելով, նույնպես կարող են դառնալ Խաբեբայի զոհը:

Իմ իսկական մարգարեներին կատեն
Հիշեք, Ինձ նույնպես ծաղրել են, ծաղր ու ծանակի ենթարկե, մերժել և վերևից նայել ծերերն ու քահանաները, երբ Ես Երկրի վրա էի: Եթե Ինձ ատել են, ուրեմն կարող եք վստահ լինել, որ Իմ իսկական մարգարեներին կատեն ամենից շատ, ճիշտ ինչպես նրանց կպատվեն այլ վայրերում:

Ամոթ ձեզ բոլորիդ: Իմ մարգարեները դուրս չեն գա ձեր խմբերից, սակայն դուք պետք է պատվեք նրանց: Նրանք կլինեն ամենաանհավանական մարգարեները իրենց վարած կյանքի պատճառով: Ոմանք կլինեն աղքատ խավերից: Ոմանք կլինեն ավելի հարուստ խավերից: Ոմանք կլինեն թերուս, մինչ մյուսները կծնվեն գրագիտության ընծայով: Սրանք են Իմ ընտրյալ մարգարեները: Լսեք նրանց ձայնը, նախքան կարհամարհեք նրանց:

Աղոթեք նրանց համար: Աղոթեք, որ Իմ խոսքը, տրված այդ մարգարեներին, չմերժվի: Դուք նույնպես մի մեժեք Իմ խոսքը: Չհավաատացողները միշտ կփորձեն վարկաբեկել այդ խիզախ հոգիներին, ովքեր ասում են Իմ խոսքը բարձրաձայն, բայց դա սպասելի է: Իմ սիրտը կոտրվում է երկու մասի, երբ Ինձ հավատացողները՝ հատկապես աղոթախմբերում, մենաստաններում և այլ հաստատություններում, արտաքին տեսքից ելնելով մերժում են Իմ իսկական տեսանողներին: Լսեք Իմ խոսքերը: Նրանք երբեք չեն շեղվում ճշմարտությունից, որքան էլ որ դուք, Իմ սիրելի հետևորդներ, փորձեք շեղել ճշմարտությունը, որ համապատասխանի ձեր մեկնաբանությանը:

Բացեք ձեր աչքերը: Արթնացեք: Նշանները սկսվել են, որ բոլորը տեսնեն: Դուք, Ինձ հավատացողներ, շատ ժամանակ չունեք: Լսեք: Աղոթեք: Միավորվեք և հայտարարեք Իմ անունը միասնությամբ, որ հոգիներ փրկեք նախքան ժամանակը լրանա:

Ձեր սիրող Քրիստոս – Հիսուս, Փրկիչ և Արդար Դատավոր

Լրատվամիջոցները և գալիք գրաքննությունը

Ստացված շաբաթ 1 հունվարի 2011թ, առավոտյան ժ 2

Իմ սիրելի աղջիկ, եկել է ժամանակը մեկ այլ տարվա համար, երբ Իմ սիրելի զավակները ավելի շատ կիմանան Ինձնից, թե ինչպես հարմարեցնել իրենց կյանքը, որպեսզի երբ Ես գամ որպես Դատավոր, մարդկությունը պատրաստ լինի:

Իմ սիրելի զավակներ, դուք բոլորդ, ում Ես մոտ եմ պահում Իմ Սուրբ Սրտին, հիմա դուք պետք է լսեք Ինձ: Ես երբեք չեմ լքի ձեզ, երբ դուք ճանաչեք Ինձ և նոր Դրախտի ճշմարտությունները, այն խոստումը, որը Ես տվեցի ձեզ բոլորիդ նախքան խաչի վրա կմահանայի ձեր մեղքերի համար: Հիմա ժամանակը մոտենում է Իմ սիրելի զավակներ: Մի վախեցեք: Եթե սիրում եք Ինձ և հավատում եք Ինձ, ուրեմն ի՞նչ կա վախենալու: Քանի որ սերը վախով լի չէ: Սերն ուրախություն է, երջանկություն, և դուք բոլորդ, ովքեր հավատում եք Երկնքում Հավիտենական կյանքին, վախենալու ոչինչ չունեք: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ:

Աստծո Մոր դերը Քրիստոսի Երկրորդ Գալուստի մեջ

Իմ սիրելի մայրը, ով պատասխանատու էր Իմ գոյության Գավաթը վերցնելու համար՝ սաղմնավորման պահին ազդարարելու մի նոր սկիզբ մարդկության համար, կազդարարի նաև Իմ Երկրորդ Գալուստը:

Ես կազատագրեմ բոլոր նրանց, ովքեր շրջվում են դեպի Ինձ Գթասրտության համար: Իմ Մայրը, ով ուղարկված է Իմ Հավիտենական Հոր կողմից աշխարհին ազատագրում և փրկություն բերելու, կկանգնի Իմ կողքին այս երկրորդ անգամ:

Իմ Սիրելի Մայրը՝ լույսի Հրեշտակը, հիմա կհաղթի՝ տալու Իմ Գթասրտությունը և ազդարարելու Իմ Երկրորդ Գալուստը երկիր: Իմ նվիրյալ Մայրը՝ Անարատ Հղացյալը, որպես Միջնորդ կօգնի նախապատրաստել աշխարհը Իմ Երկրորդ Գալուստի համար: Դարեր շարունակ նա նախապատրաստել է մարդկությանը, բայց հիմա՝ վերջին 100 տարիների ընթացքում նա փորձում է սեր լցնել ձեր սրտերի մեջ՝ վառելու համար այն երբեմնի քարացած սերը, որը դուք ունեք Իմ և Իմ Հավիտենական Հոր հանդեպ:

Կար ժամանակ, երբ Իմ Մայրը աստվածային երևմամբ ուշադրություն էր հրավիրում երկրի վրա: Տխուր է, բայց Ֆաթիմայից և Գարաբանդալից սկսած Ինձ նվիրաբերված ծառաներից մի քանիսն են միայն լրջորեն ընդունում նրա աստվածային երևումները: Ոչ էլ նրա տեսանողներին՝ այդ մի քանի ընտրյալներին են լրջորեն ընդունում: Այս անգամ, մինչ 2011թ. սկսվում է, աշխարհում շատ ու շատ փոփոխություններ են պատրաստվում տեղի ունենալու: Սա այն պատճառով է, զավակներս, որ ձեր ճանաչած աշխարհը փոխվելու շեմին է:

Ֆաթիմայի գաղտնիքի կապը ապագայի հետ
Ձեզանից՝ անմեղ և վստահող հոգիներից, այնքան շատերը չեն կարողանում հասկանալ այն չարիքը, որը պատրաստվում է ծավալվել: Զավակներս, Ես նաև ներառում եմ նրանց, ովքեր առաջին անգամ են կարդում այս պատգամները հետաքրքրությունից դրդված՝ հոգևոր պակաս զգալով, լսեք հիմա:

Ձեզ և ձեր ընկեր եղբայրներին ու քույրերին, հիմա ձեզ տանում են դեպի մի աշխարհ, որը կառավարվում է մի խմբի կողմից՝ կանխասացված Ֆաթիմայի վերջին գաղտնիքի մեջ, որը ձեզ համար ծածուկ է, և շուտով դուք կհայտնաբերեք հետևյալը:

1. Ձեր փողն անօգուտ կլինի, և միայն ոսկով ու արծաթով առևուր կանեն:

2. Դուք պետք է աղոթեք խմբերով և գտնեք գաղտնի հոգևորական, որը բավականին քաջ կլինի, դիմակայելու համար Հալածանքին:

3. Դուք պետք է աղոթելու համար ապաստարաններ փնտրեք, որովհետև ձեր եկեղեցիները կվաճառվեն դրամական եկամուտի համար:

4. Պահեք Սուրբ Գրքերը, նույնիսկ եթե նախկինում երբեք դրանք չեք կարդացել, համոզված եղեք, որ հետագայում հնարավոր չի լինի գնել դրանք:

5. Կազմեք աղոթախմբեր, որ աղոթեն մարդկության փրկության համար: Երեք տարվա ընթացքում կհասկանաք, թե ինչու է դա կարևոր:

Լրատվամիջոցների գրաքննություն
Լրատվամիջոցներին Ես ասում եմ հետևյալը: Ամբարտավանությունը, որը դուք այսօր ցուցադրում եք աշխարհին որպես աշխարհում լրատվական միջոցներ, կփոխվի հուսահատության, երբ ձեր խոսքն այլևս չի լսվի: Դուք նույնպես շուտով կհասկանաք,աղոթքի կարևորությունը, երբ մարդկությունը շրջվի ճշմարտությունից: Այսօր ձեր խոսքը դեռևս կարողանում է ներկայացնել կարևոր անկախ ճշմարտությունը: Բայց այդ ընծան կվերցվի ձեզնից: Դրա փոխարեն ճշմարտությունն արդեն կթաքցվի մարդկությունից այն դիկտատուրայի ժամանակ, որին շուտով ականատես կլինեք Մեծ Դժբախտության ընթացքում: Այն ժամանակ ձեր խոսքը կմերժվի այնպես, ինչպես հիմա Իմն է մերժվում:

Հաղորդակցության <<Գաղտնի ուղին/կանալը>>
Ոչ ոք չի լսի ձեզ, որովհետև միակ խոսքը՝ մարդկությանը տրվող, որը կունենա ազդեցություն, կլինի Գաղտնի Ուղին, որը աշխարհին կհաղորդվի տեխնոլոգիաների միջոցով: Դուք ձեզ կգտնեք անապատում և կավարտեք նրանով, որ կփորձեք հաղորդակցվել մի անհավատ աշխարհի հետ, ճիշտ ինչպես Ես եմ հիմա անում, երբ ձեր խոսքը չի լսվի:

Զգուշացեք դիկտատորներից
Մի վախեցեք դուք բոլորդ, ովքեր հետևում եք Աստծուն, անկախ նրանից, թե ինչ ձևով եք դա անում, պարզապես լսեք Ինձ հիմա: Կռվեք նրանց դեմ, ովքեր ձեր խոսքի վրա իշխանություն են պարտադրում, քանի որ դրանք Սատանայից են: Երբեք չհիմարացվեք նրանց կողմից, անկախ նրանից, թե որքան շատ կվճարեն ձեզ, որ ստեր հաղորդեք: Նրանք կկանգնեն հավիտենական դատապարտության առջև, եթե չապաշխարեն: Չնայած ժամանակը նրանց կողմից չէ: Կռվեք այն ազատության համար, որ հաղորդեք այն անարդարությունը, որին ականատես կլինեք: Կապ չունի դուք հավատում եք Ինձ, թե ոչ, որովհետև երբ տեսնեք այս մարգարեությունը իրականանալիս, այն ժամանակ կհասկանաք Իմ ուսուցումների ճշմարտությունը:

Հայտնության Գիրքը
Այսօր , տնտեսական փլուզման հետևանքով ջախջախված ու վնասված երևացող աշխարհում, հեշտ է հավատալ, թե ամեն ինչ լավ կլինի: Այո, զավակներս, անցյալում դա բնական ենթադրություն լիներ, բայց ոչ այլևս հիմա: Սյուժեն, մշակված աշխարհում սփռված յուրաքանչյուր երկրում գործող կազմակերոպությունների միջուկ խմբի կողմից, որն ունի սատանայական ծագում, հիմա պատրաստ է ի դերև գալու: Ձեզնից նրանք, ովքեր Ինձ չեն հավատում, այդ ժամանակ վերջապես կհասկանան Իմ հոր Գրքում և Հայտնության Գրքում պարունակվող մարգարեությունները:

Չվախենաք, զավակներս: Շրջվեք դեպի Ինձ և խոսեք Ինձ հետ անձնապես ձեր սեփական բառերով, և Ես կտամ ձեզ այն ուժը, հույսն ու էներգիան, որ անցնեք մարդկության պատմության այս խավար անցումի միջով:

Դուք, որ կարդում եք այս պատգամը, զգուշորեն մտածեք: Եթե կասկածում եք սրա բովանդակությանը, նայեք ձեր շուրջը և որոշեք, արդյո՞ք հասկանում եք նշանները: Նկատու՞մ եք, որ ձեր ազատ կամքի ազատությունը, Իմ Հավիտենական Հոր կողմից տրված մի ընծա, հիմա ոտնահարվում է: Ես և Իմ Հավիտենական Հայրը երբեք չենք խախտի այս Աստվածային ընծան, որն այնքան սուրբ ընծա է Բայց եթե մարդը որոշում է ընտրել Սատանային և Դժոխքի բոցերը, ուրեմն թող այդպես լինի:

Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը,չ ի կարող կանխել սա: Սակայն սատանան, կփորձի ձեզնից վերցնել ազատ կամքի այդ ընծան. Երբ հասկանաք, որ ձեր ազատ կամքը խլվում է ձեզնից հզոր ուժերի կողմից, որոնց վրա դուք վերահսկողություն չունեք, այդ ժամանակ կհասկանաք, որ Չարն է դրա ետևում:

Սատանան երբեք չի հաղթի
Խնդրում եմ, խնդրում եմ զգոն եղեք Իմ թանկագին զավակներ: Տեղի չտաք: Եթե ձեզնից բավական շատերն աղոթեն և ոտքի կանգնեն, դուք կփրկեք հոգիներ: Սատանան և նրա բանակը երբեք չեն հաղթի: Նրանք չեն կարող: Դա անհնարին է: Միայն Աստված ուժ ունի վերջ տալու այս սարսափելի հակասությանը:

Ես՝ ձեր Փրկիչն ու նշանակված Դատավորը, ձեզ հիմա կոչ եմ անում ոտքի կանգնել, խիզախ լինել և կռվել նրա համար, ինչը ձեր սրտերի մեջ ճիշտ է, նունիսկ եթե վախից տառապեք: Վախը ձեզ տրվում է սատանայի կողմից: Վախը երբեք Իմ կամ Իմ Հավիտենական Հոր կողմից չի դրվում ձեր սրտերի մեջ:

Ցած դրեք ձեզ վախը և բացեք ձեր սրտերը սիրո համար, ոչ թե վախի: Սերը գալիս է Աստծուց: Ես ձեզ ասել եմ, որ սերը չեն զգում մինչև չեն բացում սիրտը: Սերը և Աստված՝ Հավիտենական Հայրը, այս երկրի Արարիչը, գնում են ձեռք ձեռքի տված: Հնարավոր չէ նրանց անջատել: Երբ նրանք անջատված են, ուրեմն Սատանան է գործում:

Գնացեք հիմա զավակներս և պատրաստեք ձեր մտքերը: Դուք ցանկանում եք սե՞ր, որ պարուրի ձեզ Իմ Սուրբ Սրտի միջոցով, թե՞ վախ: Դա ձեր որոշումն է:

Ձեր Աստվածային Ուսուցիչ, Փրկիչ և Գթասրտության Արդար Դատավոր

Ինչ ձևով է Նախազգուշացումը պարզև մարդկությանը

Ստացված կիրակի 2 հունվարի 2011թ, երեկոյան ժ 9.45

Ինչու են այս պատգամները վախեցնող
Իմ սիրելի աղջիկ, երբ մարդիկ լսեն այս պատգամները, նրանք հարցականի տակ կդնեն դրանք, մարտահրավեր կնետեն և կմասնատեն: Ավելին, նրանք կվիրավորեն դրաց և կհարցնեն, թե ինչու այս պատգամներն ավելի շատ չեն խոսում ուրախության և երջանկության մասին: Ինչու՞ են դրանք սարսափեցնող: Չէ՞ որ աշխարհի հետ հաղորդակցվելու այս ձևը չի գալիս Հիսուս Քրիստոսից: Չէ՞ որ Հիսուս Քրիստոսը քարոզում է սեր, այլ ոչ թե սարսափ: Իմ պատասխանն այս հարցերին պարզ է: Դա այն պատճառով է, որ Ես սիրում եմ ձեզ բոլորիդ, որ Ես հիմա Իմ Գթասրտությունն եմ ցույց տալիս այս պատգամների միջոցով: Ես գալիս եմ սկզբում որպես փրկիչ ձեզ բոլորիդ ազատելու համար, որպեսզի բոլորն օգուտ ստանան Փրկությունից: Իմ մահը խաչի վրա նրա համար էր, որ ձեզ երկրորդ անգամ հնարավորություն տա ներս մտնել Իմ Հոր Թագավորություն: Այս անգամ Ես վերադառնում եմ որպես Արդար Դատավոր: Հիմա ձեզ բոլորիդ Իմ սիրո միջոցով Ես առաջին հերթին ցույց եմ տալիս Իմ Գթասրտությունը: Այդ Գթասրտությունը նախապես Նախազգուշացման ձևն է ընդունում, որ օգնի ձեզ կարգավորել ձեր կյանքը նախքան Ես կվերադառնամ Դատաստանի Օրը:

Ձեզնից յուրաքանչյուրի հանդեպ ունեցած Իմ կարեկցանքից ելնելով Ես իմա ձեզ տալիս եմ մի վերջնական հնարավորություն, որ բացեք ձեր սրտերը և ապրեք ձեր կյանքն այնպես, ինչպես նախատեսված էր, որ ապրեիք:

Երկրի վրա եղած ուրախությունը չի կարող համեմատվել Երնքում եղած ուրախության հետ
Շրջեք ձեր մեջքը դեպի մեղքը, ապաշխարեք և ետ բերեք աղոթքը ձեր կյանքի մեջ: Գթասրտությունից ելնելով է, որ Ես պետք է նախազգուշացնեմ ձեզ ճշմարտությա մասին: Այն ուրախությունը, որը ձեր հավատացմամբ բացակայում է Իմ պատգամի մեջ, այն փաստի հետևանքով է, որ մարդկությունն իր մեջքը շրջել է ճշմարիտ ուրախության հանդեպ: Երկնքում զգացած ուրախությունը չի կարող համեմատվել այն այսպես կոչված ուրախության հետ, որը դուք զգում եք երկրի վրա: Երկրի վրա ճշմարիտ սիրուց եկող ուրախությունը կլինի մաքուր: Աշխարհիկ բարիքներից եկող ուրախությունն անիմաստ է:

Զավակներս, այն ուրախությունը, որը Ես զգում եմ ձեզ նայելիս, կարճատև է, դժբախտաբար, այն բանի պատճառով, ինչին Ես այսօր ականատես եմ լինում երկրի վրա: Ձեզ համար թանկ է միայն այն, ինչը գալիս է աշխարհիկ ույնեցվածքից և ուրիշների կողմից ձեր ստացած գովաբանությունից: Քիչ ժամանակ է նվիրվում ձեզ հաջորդ կյանքին նախապատրաստելուն:

Նախազգուշացումը ընծա է
Իմ Գթասիրությունը տրվում է ձեզ որպես մի ընծա: Ընդունեք այն: Ճաշակեք այն: Ձգվեք դեպի Ինձ: Ես ձեր կյաքնի լաստն եմ կատաղի ծովի մեջ, որը լի է անսպասելի հեղեղներով և ժայթքումներով: Փրկեք ինքներդ ձեզ հիմա կամ կանգնեք հանդիման կլանվելու այնպիսի հզորության հոսանքի մեջ, որ եթե վերջին րոպեին որոշեք բարձրանալ լաստի մեջ, ուժ չեք ունենա այդ անելու:

Մաքրագործումը շարունակվում է աշխարհում
Ես հոգնած եմ զավակներս: Չնայած Ես շատ եմ փորձում հաղորդակցվել, ձեզնից շատերը դեռևս չեն լսում: Նույնիսկ Իմ քահանաներն ուշ չեն դարձնում Իմ կանչին, երբ Ես ցանկանում եմ բացահայտել Իմ Գթասրտությունը: Մինչ այսօր աշխարհում մաքրագործումը շարունակվում է և արագություն է ձեռք բերում, ժամանակն է կանչելու Իմ զավակներին:

Երկրաշարժեր և այլ գլոբալ աղետներ
Երբեք չվախենաք փոթորիկներից, երկրաշարժերից, ցունամիներից, ջրհեղեղներից, հրաբուխներից և ջերմային ալիքներից որոնք կիջնեն աշխարհի վրա օգնելու կանգնեցնել Հակաքրիստոսին և նրա բազուկը: Իմ հետևորդներն ապահով կլինեն գիտենալով այն մասին, ինչ սպասում է նրանց Նոր Դրախտի մեջ, երբ Երկինքն ու Երկիրը միանան դառնան մեկ: Այս բաները պետք է տեղի ունեան: Նրանց հնարավոր չէ կանգնեցնել, ինչպես կանխասացվել է: Այս իրադարձությունները, այնուամենայնիվ, զավակներս, կարճ կտևեն:

Դուք Իմ հետևորդներ, կպարգևատրվեք հսկա օպոզիցիայի դեմ ձեր հավատի և դիմացկունության համար: Այդ ուրախությունը, զավակներս, դժվար է պատկերացնել: Նրանք,ովքեր լույսից են,կպարուրվեն այն փառքի և սիրո մեջ, որ սպասում է իրնց: Խավարի մեջ գտնվողները չեն կարողանա դիմանալ լույսին: Դուք կցանկանաք մնալ, բայաց այն այնպես կծակի ձեզ, որ ստիպված կլինեք թաքնվել: Բայց գնալու տեղ չի լինի խավարի որջից բացի, ուր գնում է հենց ինքը՝ խավարի թագավորը՝ Չարը: Մի՞թե դուք սա եք ցանկանում:

Ինչպես է սատանան աշխատում մարդկանց միջոցով
Դուք հասկանու՞մ եք այն սարսափը, որը Խաբեբան է երկայացնում: Մի՞թե չեք հասկանում, որ նա դարան է մտած եսասիրության, ագահության և ինքնասիրության յուրաքանչյուր արարքի ետևում: Մինչ դուք ապրում եք ձեր հավատացմամբ ձեր գրավիչ, զվարճություններով լի և բազմազբաղ կյանքով, ծախսելով, ուտելվ, սնափառորեն հագնվելով և մշտապես փնտրելով հաջորդ ժամանցը, դուք երանելիորեն անգիտակից եք նրան, ինչ թաքնված է ձեր գործողությունների ետևում:

Այն գաղտնի ձայնը, որը դուք չեք կարողանում լսել, բայց զգում եք, երբ զգում եք պարտավորություն գործել, որը քշնում է ձեզ փնտրել, փնտրել և փնտրել ավելի շատ զվվարճություն, հուզմունքներ և հուզումներ, գալիս է Չարից: Կապ չունի, որ ձեր գործողությունները ձեզ ժպիտ, ծիծաղ կամ հուզմունքից ծափ զարկել են պատճառում: Այն քիչ նշանակություն ունի: Այս ուժգին ցանկությունները նախատեսված են օգնելու ձեզ, որ մշտապես փնտրեք ինքնաբավարարություն: Դրանից ի՞նչ օգուտ կա: Մի՞թե դա ձեզ ստիպում է լավ զգալ, երբ ավարտվում է: Իհարկե ոչ: Երբ կանգ եք առնում և հարցնում ինքներդ ձեզ. Իսկ ի՞նչ կլինի, երբ ես այլևս չկարողանակ անել այս բաները, հետո ի՞նչ կլինի: Մի՞թե դա նշանակություն ունի: Սկզբում՝ այո: Գուցե դա դառնություն պատճառի: Բայց միայն այն ժամանակ, երբ մնաք առանց որևէ բանի, այն ժամանակ ուշադրությունը կբեռնացնեք միայն մի բանի վրա, որ կարողանաք կենդանի մնալ:

Մնունդը կդառնա ավելի կարևոր, քան նյութական բարիքների զվարճությունը: Հետո, երբ մնաք առանց սննդի և քաղցած պտտվեք, կհասկանաք, որ այդ նախկին գրավչություններից ոչ մեկը նշանակություն չունի: Սա է այն մաքրագործումը հիմա, որ հիմա արագորեն տեղի կոնենա աշխարհում: Այս մաքրագործման միջոցով, մաքրվելու մի ձև՝ դուք նորից ամբողջական կդառնաք: Միայն և միայն այդ ժամանակ դուք պատրաստ կլինեք ընդունել ճշմարտությունը:

Ինչպես է սատանան ձեզ մոտ դատարկության զգացողություն թողնում
Զավակներս, դուք չեք տեսնում , թե սատանան ինչ կերպ է աշխատում: Դուք

չեք կարողանում տեսնել նրան, սակայն նա իր ողջ ժամանակն անց է կացնում փորձելով գողանալ ձեզ ինձնից: Նա ձեզ սարսափելի ցավ է պատճառում, զավակներս: Ձեր ճանապարհին նրա կողմից դրվող բոլոր գայթակղությունները օգտագործում են փողի, գեղեցկության, ունեցվածքի և տաղանդի աշխարհիկ տեսնքով, որոնք կլանվում են ձեր կողմից ագահության և ցանկության պատճառով: Դուք հավատացած եք, որ ավարտի եք հասել այն ժամանակ, երբ ունեք այս ամեն բաները: Տխուր է, բայց դա ճիշտ չէ: Սա այն սուտն է, որը սատանան օգտագործում է ծուղակը գցելու հմար: Երբ ձեզանից, նրանք, ովքեր հասել են հարստության այդպիսի բարձունքների, տեսնեք որ կորցրել եք այդ ամենը, անկախ նրանից թե ինչ պատճառով, ուրեմն շնորհակալ եղեք: Քանի որ միայն այն ժամանակ,երբ մերկանում եք աշխարհիկ ունեցվածքից, այդ ժամանակ կարող եք ճշմարտապես Ինձ թույլ տալ մտնելու ձեր սրտի մեջ:

Պատգամ հարուստներին
Դուք, ովքեր հարստություն ունեք, Ես ձեզ չեմ արհամարհում: Քանի ոդ ուք ունեք նյութական բարիքներ, դա չի նշանակում, թե դուք չեք հետևում ճշմարիտ ուղուն: Բայց դուք պարտավորություն ունեք կիսելու և օգնելու ձեզնից քիչ ունեցողներին: Սա է ձեր պարտականությունը: Հարստությունը և նյութական հարմարությունները չէ, որ սխալ են: Կյանքը զգալու ձեր ուրախությունն ու ծիծաղը չէ, որ սխալ են: Սխալն այն է, երբ դրանք դառնում են կիրք և երբ ճոխ ապրելու ձեր ցանկությունը դառնում է առաջնահերթ ձեր սեփական հավատքի և ուրիշների բարեկեցությունից , որը վիրավորանք է Իմ Հոր աչքում:

Ձեր հարստությունը, տները, հագուստն ու ունեցվածքը նման են երկնքում անցնող ամպերի: Նրանք հիմա կան, հաջորդ պահին արդեն անցել են: Դուք չեք կարող դրանք ձեզ հետ տանել հաջորդ կյանք: Հետևեք Իմ ուսուցումներին: Խնդրեք իմ գթասրտությունը: Միայն այդ ժամանակ կմիանաք Ինձ Նոր Դրախտի մեջ երկրի վրա: Գրավ մի դրեք ձեր ժառանգությունը և ձեր տեղը Իմ Հոր Թագավորության մեջ:

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

2011-ը մաքրագործման տարի

Ստացված11-12 հունվարի, երեկոյան ժ 11.45 – առավոտյան ժ 12.30

Իմ սիրելի աղջիկ, վերջապես մենք վերամիավորվեցինք: Մի քանի օր է, որ տրամադրված ես ստանաու Իմ պատգամները: Մի վախեցիր, որովհետև հիմա

քեզ ժամանակ է պետք, որ լսես Իմ մինչ այժմ աշխարհին տրված պատգամներից ամենահրատապը:

2011թ-ը ժամանակի այն տարին է, որի ընթացքում կսկվեն փոփոխությունները՝ մաքրագործումը, և դրան ականատես կլինեն միլիոնավոր մարդիկ ողջ աշխարհով մեկ: Չնայած աղոթքը կօգնի նվազեցնել գլոբալ աղետները, այժմ այն բավարար չի լինի կանգնեցնելու Իմ Հավիտենական Հոր ձեռքը, երբ շուտով այն իջնի մարդկության վրա:

Չար վարքագիծն ու մտքի, մարմնի ու հոգու կեղտը, որը բացահայտվում է աշխարհում այս պահին, պարզ է հիմա ձեզ բոլորիդ համար, որ տեսնեք: Ձեզնից նրանք, ովքեր այնքան զբաղված են և փաթաթված իրենց կյանքի մեջ, հիմա ժամանակն է կանգ առնելու և տեսնելու, թե ինչ է տեղի ունենում ձեր աչքերի առջև:

Չարը, որն աշխատում է նրանց հետ, ովքեր խավարի մեջ են, ավերածություն է ստեղծել, երբ այժմ ամեն օր սպանությունն այնքան սովորական բան է դարձել, որ մարդկությունը կորցրել է զգալու կարողությունը այն չար հանցագործների հանդեպ, որոնք կատարում են այդպիսի ոճրագործություններ: Եսասիրությունն ու ագահությունը գերիշխում են ձեր հասարակության մեջ: Ձեր առաջնորդներն ու քաղաքագետները ծարավի են իշխանության և շատ դեպքերում չեն կարողանում նույնիսկ ապահովել նվազագույնը ձեր բարօրության համար: Ինքնասպանությունը ավելացել է ձեր հասարակության մեջ Խաբեբայի՝ Չարի կողմից ստեղծած հուսահատության միջոցով:

Նա, ով երբեք ինքն իրեն չի բացահայտում ձեզ, թաքնված է հանրային ցուցադրման յուրաքանչյուր գործողության տակ, որը փառաբանում է սեռական անբարոյականություն և ծանրագույն մարմնական վնասներ ուիշներին և իրենք իրենց:

Շքեղության առարկաների ետևից մշտական վազքը, որը դուք առաջնահերթ եք համարում ձեր ընտանիքների բարօրության համար, անիմաստ է: Մինչ դուք, զավակնրս, հետապնդում եք այդ անարժեք երազանքները, շուտով կտեսնեք որ մնացել եք առանց սննդի: Այս դատարկ և անօգուտ իրերը չեն կերակրի ձեր դատարկ ստամոքսները: Ոչ էլ կլցնեն ձեր դատարկ հոգիները, որոնք ճչում են հանգստության համար, մի հանգստություն, որը այլևս չունեք ձեր տրամադրության տակ: Այս հանգստությանը հնարավոր է հասնել միայն աղոթքի միջոցվ և հատկապես կազմակերպված խմբային աղոթքի միջոցով:

Մաքրագործումը տեղի է ունենալու Իմ Երկրորդ Գալուստից առաջ
Հիմա երկրաշարժերը պատրաստ են հարվածելու երկրին, երբ Իմ Հոր

զայրույթը կթափվի: Այո, Իմ անշնորհակալ զավակներ, որ ձեր մեջքն եք դարձրել ճշմարտության լույսին, հիմա պետք է վախենաք: **Մեծ Դժբախության** սկիզբը հիմա պատրաստ է ծավալվելու, երբ էկոլոգիական անհանգստության տեսանելի երևույթը կսկի աճել: Մարդը կլինի անուժ: Ժամանակի հետ նա կհասկանա և կընդունի, որ Իմ Հայրը գոյություն ունի և որ Ես, Նրա Սիրելի Որդին, հիմա նախապատրաստում եմ ճանապարհը, որ աշխարհն ականատես լինի Իմ երկիր գալուն երկրորդ անգամ: Այդ ժամանակը հիմա մոտենում է: Այնուամենայնիվ աշխարհը սկզբում պետք է ենթարկվի այս էական մաքրագործմանը: Մինչ աշխարհում տեղի ունեցող աղետների թիվը կշարունակի աճել, կշատանան նաև Սատանային հետևորդները: Նրանք բացահայտորեն կշարունակեն իրենց թշվառ չար կյանքը և կպարտադրեն ցավ ու տեռոր Ինձ հավատացողների և նրանց վրա, ովքեր ապրում են արդար կյանքով:

Մինչ Ինձ հավատացողները հայտարարում են ճշմարտությունն աշխարհին, շատ ավելի մարդիկ կնստեն և կընդունեն, որ իսկապես աշխարհում տեղի են ունենում փոփոխություններ: Շուտով նրանք իմ ընտրյալ մարգարեների միջոցով Իմ տված մարգարեություններից կհասկանան թե իսկապես ինչի են ականատես լինում: Քանի որ իրադարձությունները, որոնք տեղի կունենան, չեն կարող կատարվել մարդու կողմից: Նրանք կարող են տեղի ունենալ եթե և այն ժամանակ, երբ Իմ Հավիտենական Հայրը տա այդ թույլտվությունը:

Եկել է կնիքները բացելու ժամանակը
Եկել է ժամանակը, զավակներս, երբ ինչպես կանխասացվել է կնիքները պետք է բացվեն և փողերն ազդարարեն փոփոխությունները: Չարիքը չի թույլատրվի Աստծո՝ մարդկության արարչի կողմից, և կկնքվի աշխարհում՝ հանուն բարիքի: Չարի ոչ մի հետևորդ, անկախ նրանից, թե ինչ չափով է նվիված Սատանային և նրա խոստումներին, չի խնայվի մինչև չապաշխարի:

Սերը, զավակներս, ցույց կտրվի Իմ բոլոր զավակներին և նրանց, ովքեր Հավիտենական Հորից են, երբ բացեք ձեր սրտերը: Սատանան, սակայն, հիմա հասել է այնպիսի բարձունքների, որ նրա զորությունն ազդել է Իմ զավակներից այնքան շատերի վրա, որ նրանք այլևս չեն հավատում այնպիսի արժանիքների, ինչպես ազնվությունը, բարի գործերը, կյանքի հանդեպ հարգանքը, միմյանց կամ իրենց ընտանիքների հանդեպ հարգանքը: Եղբայրը դուրս է գալիս եղբոր դեմ, քույրը՝ քրոջ դեմ, հարևանը՝ հարևանի, քահանան՝ իր ղեկավարի, եպիսկոպոսը՝ Սուրբ Գրքի ուսուցումների:

Ինչու՞ եք պատժում Ինձ ձեր սիրո պակասով
Իմ զավակները մեջք են դարձրել նույնիսկ այս գեղեցիկ մոլորակին, որն այնքան սիրով ձեզ է ներկայացվել Հայր Աստծո կողմից՝ ամեն բանի արարչի և

ստեղծողի կողմից: Ի՞նչ եք արել դուք: Ինչու՞ եք պատժում Ինձ ձեր սիրո պակասով: Ձեզ փրկելու համար: Ինչու՞ Եք ձեր մեջքը շրջում ձեր սեփական կարինքերի վրա՝ ձեր սեփական հոգիները սնելու հրատապության վրա, Իմ Հոր Թագավորության՝ Երկնքի, ձեզ խոստացված ժառանգության հանդեպ ձեր ծարավը հագեցնելու վրա: Դուք, զավակներս, շրջում եք ձեր մեջքը ձեր սեփական փրկության վրա: Մի՞թե չեք հասկանում սա: Խնդրում եմ հավատացեք, որ մինչև չզննեք ձեր սեփական գիտակցությունը հիմա և չաղոթեք առաջնորդության համար, դուք չեք կարողանա և չեք փրկվի:

Քահանաներն անտեսում են ուսուցումները

Ինձ նվիրված ծառաները, հենց այն հովիվները, որոնք նշանակված են առաջնորդելու Իմ հոտը, չեն բացատրել Չարի գոյությունը: Նրանք, ժամանակակից, լայնախոհ և պրակտիկ ուուցիչներ երևալու իրենց ձգտման մեջ, չեն կարողացել մատնացույց անել Իմ Հոր Գրքում պարունակվող ուսուցումների անտեսման վտանգները: Այն Գրքի, որը հստակ կերպով հաստատում է Չարի գոյությունը և թե ինչպես է Չարն աշխատում ձեզնից ամեն մեկի և յուրաքանչյուրի միջոցով, որպեսզի կարողանա ձեզ հեռացնել ձեր վերջնական, բայց իրավամբ ձեզ պատկանող տնից՝ Նոր Դրախտից, որը Ես խոստացա ձեզ բոլորիդ, երբ մեռա խաչի վրա ձեզ համար: Ես չմեռա մարդկանց մի անդեմ խմբի համար: Ես Իմ կյանքը տվեցի ձեզնից յուրաքանչյուրի և ամեն մեկիդ համար, որ կարողանաք փրկվել:

Հիշեք, չնայած Իմ սերը ձեր հանդեպ անսահման է, այն նաև Ինձ տառապանք է պատճառում: Այդ տառապանքը գալիս է նաև նրանից, որ դուք անատեսում եք Իմ գոյությունը: Դուք ընտրում եք, կուրորեն շարունակելով միամտորեն հավտալ, թե երկիրը տալիս է այն ամենը, ինչ կցանկանաք: Դուք մոռանում եք, որ կյանքը, այս կյանքից հետո կյանքը, կշարունակվի անժամկետ:

Մարգարեություններ տրված ձեզ Գթասրտությունից դրդված
Տարիների ընթացքում, Իմ սիրելի զավակներ, Իմ Գթասիրությունից դրդված, ձեզ տրվել են նշաններ, պատգամներ և մարգարեություններ: Բացառությամբ Ինձ հետևողների, շատ քչերն են լսում, բացում իրենց աչքերը կամ գեթ մի պահ մտորում իրենք իրենց հարցնելու, գուցե սա իսկապե՞ս աստվածային հաղորդակցություն է: Եթե այո, ապա ես ի՞նչ պետք է անեմ: Պատասխանը՝ լսել և ընդունել ճշմարտությունը ձեր սեփական գալիք ընտրության մասին: Որոշեք, թե որ ուղին եք ցանկանում ընտրել: Հետո աղոթեք ձեր հոգիների և ձեր սիրելիների հոգիների համար:

Դուք, ովքեր հպարտորեն վիրավորանքով ձեր մեջքն եք դարձնում երբ Իմ անունը տրվում է կամ դուք, ովքեր անհարգալից կերպով թափահարում եք ձեր ձեռքը երբ Իմ հետևորդները հայարարում են Իմ ճշմարտությունը, այդ դեպքում դուք կորած եք Ինձ համար:Ես կարող եմ միայն, Իմ Գթասրտությունից դրդված, տալ այս աշխարհին նշաններ և պատգամներ, որ օգնեմ ձեզ առաջնորդելու: Աստծո՝ Հավիտենական Հոր, մարդկության և ամեն բանի Արարչի կողմից ձեզ տրված ազատ կամքի ընծայի պատճառով Ես չեմ կարող ուժ գործադրել ձեզ վրա: Մինչդեռ սիրո և կարեկցանքի պատգամը, ինչպես նաև վիրավորանքի և հուսահատության զգացումը միշտ կլինի ձեզ հետ Իմ հաղորդակցվելու պատճառը:

Իմ տառապանքը, ցավը և վիրավորանքն ավելանում է, երբ Իմ զավակները ցատկում են Սատանայի բաց բազուկների մեջ: Սա նշանակում է, որ Ես հիմա ստիպված եմ հստակորեն ձեզ բոլորիդ ցույց տալ, թե ինչ է վիճակված նրանց, ովքեր մերժում են Ինձ և Իմ Հավիտենական Հորը:

Դժոխքի իրական լինելը

ԸՆտրեք Խաբեբայի կողմից խոստացված ստերը, որոնցից հիմնականն այն է, թե Աստված՝ Հավիտենական Հայրը, գոյություն չունի, և դուք դատապարտված եք: Դժոխքի դարպասներից ներս մտնելու, այդ ժամանակ դուք կհասկանաք այն սարսափելի սխալը, որ կատարել եք: Հավատացեք Ինձ, զավակներս, Եթե կարողանայիք միայն ականատես լինել այն հոգիների զգացած շոկին և սարսափին, երբ մահից հետո նրանց բացահայտվում է վերջնական ճշմարտությունը, դուք նունիսկ մի պահ չէիք դիմանա այդ տառապանքին: Եթե հիմա, մարդկային հնարավորություններով, մի պահ տեսնեիք այդ վայրը, դուք մեռած կընկնեիք միայն այն սարսափից, որը վիճակված է նրանց, ովքեր ընտրում են մեղքի ճանապարհը:

Ճանապարհը, որը թվում է հաճելի, գայթակղիչ, փառահեղ և լի հրաշք փոոխություններով, երբ անցնում եք դրա կեսը: Ճանապարհի կեսին ձեզ հանդիպող փոոխությունները ցույց են տալիս, որ դուք բավարարված չեք: Այս տարօրինակ դատարկ և հիասթափեցնող զգացողությունը շարունակում է աճել ճամփորդության մնացած մասի ընթացքում: Դուք չեք կարողանում հասկանալ, թե ինչու եք այդպես զգում: Ձեզ փորձառությունները, որոնք արտաքինից հաճելի են, լի են անսպասելի անհանգստացնող, զզվելի զգացողություններով, որոնք խառնված են զայրույթի, խորտակման, միայնության և վախի հետ: Միայն երբ հանդիպում եք ձեր կուռքի հետ ձեր ճամփորդության վերջում և նայում չար աչքերի մեջ, որոնք ուրախությունից պարում են զվարճանքով, այդ ժամանակ կբղավեք մինչև ձեր ձայնը խռպոտի: Մինչև այդ վերջնական պահը դուք չեք կանչի Ինձ օգնության: Բայց չափազանց ուշ կլինի: Այդ էտապում ետ դարձ չի լինի: Դուք կատարած կլինեք ձեր

ընտրությունն այս կյանքում: Եվ չնայած Ես դառն արցունք կթափեմ Իմ յուրաքանչյուր կորած հոգու համար, Ես չեմ կարող փրկել ձեզ այդ էտապում: Ձեր ազատ կամքը, ուր դուք ընտրում եք ձեր սեփական ճակատագիրը, ամբողջապես Իմ ձեռքերից դուրս կլինի:

Այս պատգամով, չնայած այն կոշտ է,Ես տալիս եմ աշխարհին վերջնական նախազգուշացումը, ելնելով ձեզանից յուրաքանչյուրի հանդեպ ունեցած մաքուր սիրուց: Ես աղերսում եմ ձեզ վերջապես լսել Իմ ձայնը հիմա, որ կարողանաք փրել ձեր հոգիները:

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս, մարդկության Փրկիչ և Արդար Դատավոր

Նախազգուշացումը – Երկրորդ Գալուստը մոտ է – Հնարավորություն փրկելու ձեր հոգիները

Ստացված չորեքշաբթի 12 հունվարի 2011թ, ցերեկվա ժ 3

Աղջիկս, երեկվա Իմ պատգամը կոպիտ էր: Շատերը, այն կարդալով, կասեն, <<Տերն այս ձևով չի խոսում>>: Բայց ի՞նչ են նրանք մտածում: Ուրիշների կողմից Իմ սիրելի զավակների կրած տառապանքի պատճառով է, որ Ես պետք է բարձրաձայն խոսեմ: Ես խոսում եմ Իմ Աստվածային Գթասիրության պատճառով, Իմ սիրելի զավակներ, որ օգնեմ փրկվել ձեզ, որպեսզի մենք կարողանանք միավորվել որպես մեկ Սուրբ Ընտանիք Նոր Դրախտի մեջ: Ես չեմ ցանկանում կորցնել ոչ մի հոգու հօգուտ Խաբեբայի: Կարևոր է, որ Իմ ձայնը լսվի:

<u>Չհավատացողների համար դա այնքան դժվար է</u>
Ես հասկանում եմ, որ Իմ զավակներից շատերի համար, հատկապես չհավատացողների, չափազանց դժվար է հավատալ հաջորդ կյանքին: Նրանք այնքան են պայմանավորված աշխարհիկ հարցերով, որ գոյատևելու իրենց պայքարի մեջ, նրանք մերժել են իրենց հոգևորությունը այն աստիճան որ չեն հավատում ընդհանրապես այլ կյանքի գոյությանը: Հիմա նրանք պետք է հաշվի առնեն: Նրանք հավատացած են, որ ամեն ինչ վերջանում է մահից հետո, և որ միակ աշխարհը որի մասին կարիք կա անհանգստանալու այն է, ուր նրանք հիմա ապրում են: Որքան եմ Ես հուսահատվում այդ սխալ ընթացող հոգիների համար: Եթե նրանք միայն կարողանային մի հայացք նետել թե ինչ է տալիս Դրախտը, ապա իրենց օրերն անց կկացնեին աղոթքի և պաշտամունքի մեջ Իմ

և Իմ Հավիտենական Հոր հանդեպ գովաբանություններով և շնորհակալությամբ:

Նոր աշխարհը, որը Ես խոստացել եմ նրանց, իրականություն է: Գովաբանեք հավատացողներին, ովքեր երբեք չեն մոռացել այս փաստը և ովքեր դեռևս աղոթում են Ինձ ամեն օր: Որքան եմ Ես սիրում Ինձ հետևողներին: Բայց որքան եմ Ես տառապում նաև նրանց համար: Այդ նվիրյալ հետևորդներն իրենց կարողացած ամեն ինչ անում են, որ համոզեն մյուսներին Իմ գոյության մասին: Հետո նրանց վրա ծիծաղում են և վիրավորում Ինձ համար: Որքան է դա կոտրում Իմ սիրտը:

<u>Որքան են այս կյանքից հեռացածները վշտանում բոլոր նրանց ամար, ովքեր հավատ չունեն</u>
Որքան են այս կյանքից հեռացածները մյուս կողմում վշտանում ձեզ բոլորիդ համար, չհավատացողներ: Ձեզնից նրանք, ում սիրելիները խաղաղության մեջ են Իմ Հոր Թագավորությունում, նրանք շարունակ աղոթում են ձեզ համար բարեխոսելու: Դուք դա չեք հասկանում: ԵթԵ ժամանակ տրամադրեք Ինձ հետ առանձին խոսելու, ձեր սեփական բառերով, և Ինձնից առաջնորդություն խնդրելու, նույնիսկ երբ ձեր հավատը գաղջ է, այդ դեպքում Ես կպատասխանեմ: Շրջվեք դեպի Ինձ հիմա, զավակներս ձեր սեփական բառերով և խնդրեք Ինձ, որ վերականգնեմ ձեր հավատը:

Հետևեք Իմ ուսուցումներին այս պատգամների և Աստվածաշնչի միջոցով և հիշեցրեք ինքներդ ձեզ, թե ինչպես պետք է ապրեք ձեր կյանքը: Ես, Իմ Գթասրտությամբ, շատ շուտով կբացահայտեմ ձեզ այն դժգոհությունները Իմ ուսուցումների հանդեպ և ամեն մի մեղք ու վիրավորանք, որը դուք կատարել եք ձեր կյանքի ընթացքում:

<u>Ոչ թե Դատաստանի Օր, այլ զգացողություն, թե ինչի նման կլինի Դատաստանի Օրը</u>
Սա Գթասրտության գործողություն է Իմ կողմից: Դուք կտեսնեք ձեր մեղքերը և անմիջապես կհասկանաք, թե ինչպես են դրանք երևում Ինձ: Վայրկենապես դուք պարզ կերպով կհասկանաք, թե դրանք որքան վիրավորական են և սխալ: Սա ձեր հնարավորությունն է, զավակներս, որ ապաշխարեք: Այն Դատաստանի Օրը չէ, այլ զգացողություն, թե ինչի նման կլինի Դատաստանի Օրը:

Գթասրտությունից դրդված ձեզ տրվում է ամենամեծ ընծան երբեմնի տրվածներից, նախքան Դատաստանի Օրը, մի հնարավորություն, որ ապաշխարեք և փոխեք ձեր կյանքը նախքան Վերջնական Օրը՝ այն ժամանակը, երբ Ես ետ կգամ այս երկիր: Այդ ժամանակ, ինչպես գիտեք, Ես

կգամ ոչ որպես Փրկիչ, այլ որպես արդար դատավոր: Այդ ժամանակը մոտ է հիմա, զավակներս: Մի վախեցեք, Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Դուք Իմ սրտի մեջ եք: Թույլ տվեք Ինձ հիմա մտնել ձեր կյանքի մեջ և առաջնորդել ձեզ դեպի Իմ Հոր Թագավորություն: Երբեք մի վախեցեք մահից: Մահը պարզապես կլինի մուտք դեպի մի նոր գեղեցիկ կյանք երանավետ հավիտենության, լի սիրով, խաղաղությամբ և երջանկությամբ:

Կյանքը երկրի վրա՝ միայն ժամանակի մի հատված
Ձեր կյանքը երկրի վրա պարզապես ժամանակի մի հատված է: Այն կարող է լինել սիրով, ուրախությամբ, ցավով, մերժումներով, վախով, զայրույթով, հուսահատությամբ, արգելքներով և տխրությամբ լի: Բայց միայն այն ժամանակ, երբ դուք շրջվում եք դեպի Ինձ, այդ ժամանակ ձեր ցավը կթեթևանա: Օրհնյալ են նրանք, ովքեր տառապում են և հատկապես Իմ անվան համար, քանի որ դուք կփառավորվեք Իմ Հոր Թագավորության մեջ: Օրհնյալ են նաև նրանք, ովքեր շրջվում են դեպի Ինձ, քանի որ մեծ ուրախություն կլինի Երկնքում:

Դուք կմտնեք Նոր Դրախտ: Աղոթեք ձեր հոգիների համար և ձեր ընտանիքի անդամների հոգիների համար հիմա: Նախազգուշացումը տեղի կունենա շուտով: Այդ ժամանակ դուք կիմանաք ճշմարտությունը: Այդ ժամանակ դուք հնարավորություն կունենաք ազատագրելու ձեզ Իմ աչքում:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Ես հրճվում եմ, որովհետև գիտեմ, որ այնքան շատերն Իմ զավակներից հիմա կշրջվեն դեպի Ինձ և դեպի Աստված՝ Հավիտենական Հայրը, մինչ վերջին ժամանակների ժամանակն այնքան մոտենում է հիմա: Նախապատրաստված եղեք:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Ինչպես մտնել երկինք – տառապանքի դերը

Ստացված շաբաթ 14 հունվարի, 2011թ, առավոտյան ժ 10

Իմ սիրելի աղջիկ, այն ձևը, որով Ես հաղորդակցվում եմ քեզ հետ, սկսում է փոխվել: Մինչ Ես նախորդ պատգամներում նախազգուշացնում էի Իմ զավակներին ապաշխարելու հրատապությունը, փրկության հասնելու համար, Իմ հաջորդ հաղորդակցությունները ուշադրությունը կկենտրոնացնեն հոգիներին օգնելու վրա, որպեսզի նրանք գնան դեպի հոգևոր կատարելություն:

Դրախտ, աղջիկս, չնայած այն ձեզանից ամեն մեկի և յուրաքանչյուրի իրավամբ պատկանող տունն է, հեշտ չէ մտնել: Մուտքը փոքր է և միայն շատ քչերը կարող են մտնել միանգամից: Որպեսզի ներս մտնեն, հոգիները պետք է ցուցաբերեն խոնարհություն և իրենց ամբողջապես հանձնեն Իմ ձեռքերին: Նրանք պետք է մի կողմ հրեն հպարտությունը, կամքի ուժը և այն ցանկությունն ու կապվածությունը, որոնք ունեն այս երկրի վրա նյութական իրերի հանդեպ, եթե ցանկանում են մտնել Դրախտ:

Իմ բոլոր զավակները, ովքեր հիմա հասկանում են ճշմարտությունը և սկսում են իրենց հոգևոր ճամփորդությունը դեպի Ինձ, կարիք ունեն շատ աշխատելու հասկանալու այն հատկանիշները, որոնք էական են Իմ Հոր Թագավորություն մտնելու համար:

Խոնարհության կարևորությունը
Խոնարհությունը մի տերմին է, որը Իմ զավակներից շատերն են հասկանում Իմ ուսուցումների միջոցով: Մինչ Իմ հետևորդներից շատերն են հասկանում, թե ինչու է դա կարևոր, նրանք շփոթության մեջ են այն մասին, թե իրականում դա ինչ է նշանակում: Խոնարհություն նշանակաում է անկեղծություն: Դա նշանակում է ընդունել, արժանապատվությամբ, փորձությունները, դժվարությունները, մեղադրանքները որոնց կհանդիպեք հատկապես երբ գալիս եք Իմ անվամբ: Իմ լավագույն խորհուրդը սա է: Մտածեք ձեր մասին որպես մի երեխայի, մի պարզ անմեղ երեխայի, որը ոչինչ չգիտի այն չար հասարակության մասին, որը դուք նորմալ ձևով զգում եք որպես հասուն մարդ: Միշտ ձեր աղոթքների մեջ հաղորդակցվեք Ինձ հետ երեխայի աչքերով ու սրտով:

Շարունակեք աղոթքներն ու հաղորդակցությունը պարզ կերպով: Ես չեմ ակնկալում, որ դուք ասեք այն բոլոր աղոթքները որոնք տրվել են աշխարհի հնդեպ սիրուց ելնելով: Նայեք վեր և կիսեք ձեր խնդիրներն Ինձ հետ: Կիսեք ձեր տառապանքները: Հանձնեք դրանք Ինձ: Դուք մեծապես կպարգևատրվեք, երբ Ինձ համար ձեր կյանքի մեջ ընդունեք վիշտ կամ տառապանք: Դուք դա չեք հասկանա, բայց երբ դա անեք, կփրկեք բազմաթիվ հոգիների, և նրանց համար ճանապարհ կհարթեք դեպի Երկինք: Այս փաստը չի բացահայտվի ձեզ մինչև դուք նույպես մտնեք Երկինք, ուր կզգաք Ինձ տված ձեր առատաձեռն ընծայի փառքը:

Մի բարկացեք, երբ պաշտպանում եք ձեր հավատքը
Խոնարհություն ցույց տալ նշանակում է ընդունել այն, ինչ կատարվում է ձեր շուրջը, չնայած դա կարող է ցավալի լինել: Արժանապատվություն ցույց տվեք միշտ, նույնիսկ այն ժամանակ, երբ Իմ անունն անպատվում են ձեր ներկայությամբ: Ամեն դեպքում պաշտպանեք, և կրքոտ կերպով, եթե այդպես

եք ցանկանում, բայց երբեք մի հեռացրեք նախատողներին՝ նրանց հրապարակայնորեն վիրավորելով:

Բացատրեք Իմ ուսուցումների ճշմարտությունը հանդարտորեն: Մի կորցրեք ձեր համբերությունը: Ոչ էլ ցույց տվեք, թե վախենում եք նախատողից: Հաստատուն եղեք: Պաշտպանվեք, բայց միայն վերահաստատելով Իմ ուսուցումները: Երբեք մի վախեցեք բահայտ կերպով խոսել ճշմարտությունը: Մի շփոթեք խոնարհությունը վախկոտության հետ: Իմ հետևորդներից ոմանք, ովքեր հասկանում են խոնարհության կարևորությունը և դրա անհրաժեշտությունը հոգիների սրբագործման մեջ, շփոթում են դա, լուռ մնալով երբ Իմ անունը հրապարակայնորեն ծաղրի է ենթարկվում: Այո, դուք երբեք չպետք է դատեք այն մարդուն ով ծաղրում է Ինձ կամ Իմ Հավիտենական Հորը, կամ էլ Իմ սիրելի Օրհնյալ Մորը, բայց դուք պետք է կանգնեք ձեր դիրքերի վրա՝ պաշտպանելով ճշմարտությունը:

Վիշտը՝ ընծա Աստծուց
Երբ երեխայի պես խոսում եք Ինձ հետ, հասկացեք սա. Եթե բացեք ձեր սրտերը և ձեր ամբողջ վստահությունը հանձնեք Ինձ, Ես ուղղություն կտամ ձեզ, երբ տառապեք այս երկրի վրա: Մի դարձրեք ձեր մեջքը դեպի Ինձ: Չնայած վիշտը չափազանց ցավոտ է, Իմ զավակներն այն ընդունում են որպես ընծա Աստծուց: Որպես օրհնություն: Որովհետև վշտի տառապանքի միջոցով է մաքրագործումը տեղի ունենում: Առաջարկեք ձեր տառապանքներն Ինձ: Այդ անելով դուք թեթևացնում եք այն տանջանքը, որը Ես կրում եմ, երբ զգում եմ Իմ Տառապանքի ցավը խաչի վրա նորից ու նորից ամեն օր, մինչ ականատես եմ լինում այսօր աշխարհում եղած սարսափին:

Մաքրագործումը, որը տեղի է ունենում երբ դուք ընդունում եք վիշտը կամ տառապանքը, անկախ նրանից թե որքան վատն է այն, երբ ուրախությամբ առաջարկվում է մարդության փրկության համար, չի կարող ճշմարտապես հասկացվել ձեր կողմից, զավակներս: Բայց մինչ դուք մոտենում եք Ինձ՝ բացելով ձեր սրտերը, հանձնելով ձեր կամքն Ինձ և ամբողջապես հանձնվելով Ինձ, դուք ավելին կհասկանաք: Հասկացեք, որ միայն դա անելով է, որ դուք կլինեք Ինձ հետ միության մեջ: Եվ երբ դա անեք, ձեր փորձություններն ու տառապանքները երկրի վրա կթեթևանան: Ժամանակի ընթացքում դուք կընդունեք տառապանքն ուրախությամբ ձեր սրտի մեջ: Հատկապես երբ դա առաջարկեք Ինձ որպես ընծա:

Տառապանքը ընծա է Աստծո կողմից և թույլ է տրվում: Հոգիներին փրկվել օգնելու միջոցով ձեզ տեղ է երաշխավորվում Իմ Հոր Թագավորության մեջ:

Այս ուսուցումները նոր չեն զավակներս: Պարզապես ձեզ չեն հիշեցրել պարզ ճշմարտությունը: Իմ պատգամներն ու ուուցումները երբեք չեն փոխվել: Նրանք պարզ են և ընդհանչացված Ավետարաններում և Տասը Պատվիրանների մեջ: Պարզապես հիշեք, որ երբ տալիս եք ձեզ յուրաքանչյուրին, դուք տալիս եք ձեզ Ինձ: Սեր ցույց տվեք ձեր հարևանի հանդեպ, և դու սեր ցույց տված կլինեք Իմ հանդեպ:

Վարվեք նրա հետ այնպես, ինչպես կցանկանայիք, որ վարվեն ձեզ հետ: Եվ երբեք մի մոռացեք, որ երբ բարկանում եք ուրիշների վրա և հակված եք վնասել կամ պատժել նրանց ինչ-որ ձևով, որ Ես ներկա եմ նրանց մեջ, նույնիսկ նրանց, ովքեր ատում են Ինձ: Վնաս պատճառեք Իմ զավակներից ցանկացածին, և դուք դա կանեք Ինձ:

Ժամանակի ընթացքում, զավակներս, այս բոլոր շնորհով լի արարքներն իմաստ կստանան: Աղոթեք ամեն օր այն ուժի համար, որ ապրեք ձեր կյանքի ամեն օրը Իմ անվամբ: Իմացեք, որ ամեն անգամ, երբ ներում եք մյուսին, չնայած նա կարող է թվա;լ որպես թշնամի, դուք ընդլայնում եք Սիրո և Գթասրտության Իմ Սիրտը: Դրա համար դուք Երկնքում կստանաք հավիտենական ուրախություն:

Աղոթեք հաստատակամության համար: Կրկնօրինակեք Իմ կյանքը: Դա հեշտ չի լինի: Բյց ձեր գործողությունները, անկախ նրանից, թե որքան փոքր կլինեն, կօգնեն հոգիների:

Ձեր սիրող Ուսուցիչ և Փրկիչ
Հիսուս Քրիստոս՝ Մեկ Աստծո՝ Հավիտենական Հոր և Սուրբ Հոգու հետ

Իմ Խաչը Տանելը

Ստացված կիրակի 16 հունվարի 2011թ, ցերեկվա ժ 3

Այո, Իմ սիրելի աղջիկ, այդ Ես եմ: Սա քեզ համար մի երկար կորագիծ էր և դու կշարունակես սնվել ճշմարտության գիտության Սուրբ Հոգու ընծայի միջոցով, որ լցնում է քո հոգին:

Աղջիկս, խնդրում եմ վստահ եղիր, որ այս պատգամները, որոնք նախազգուշացումների, մարգարեությունների մի խառնուրդ են և Իմ ուսուցումների ընդհանրացում, տարածվեն աշխարհի յուրաքանչյուր անկյունում: Կենսական է, որ Իմ զավակները հասկանան, թե ինչ կերպ կարող

են նախապատրաստել իրենց հոգիները, որպեսզի ազտագրեն իենց Իմ Հոր աչքում:

Հոգևոր նորացում է տեղի ունենում աշխարհում հիմա

Հենց հիմա աշխարհում տեղի է ունենում մի հրատապ պաշտամունք և նվիրվածություն Իմ, Իմ Հավիտենական Հոր, Սուրբ Հոգու և Իմ սիրելի Մոր Հանդեպ: Չնայած դա դեռևս հստակորեն տեսանելի չէ, այս հզոր հոգևոր նորացումը կօգնի պաշտպանել Իմ զավակներին, նույնիսկ նրանց, ովքեր ամենուր իրենց մեջքն են շրջում դեպի Ինձ: Հիմա Սուրբ Գիրքը կվերանայեն, երբ մարդիկ սկսեն զգալ ճշմարտության հանդեպ քաղցի ցավերը: Մինչ մաքրագործումը հաստատուն կերպով աճում է և դառնում ավելի լայնատարած աշխարհով մեկ, նույնպես այն հոգիները, որոնք դատարկ են Իմ հանդեպ ունեցած սիրո մեջ, նորից կբացեն իրենց սրտերը:
Մինչ սերը տարածվում է Իմ հետևորդների լույսի միջոցով, Չարի ազդեցությունները և նրանց վարքագիծը, ում Չարը վարակում է, կթուլանա: Չարը կփոխհատուցի:

Սատանայի օրերը հաշված են
Մինչ նրա օրերն այս երկրի վրա նվազում են ժամ առ ժամ, նա կփորձի պատճառել որքան հնարավոր է շատ վնաս: Նրա հետևորդները կարագացնեն իրենց գործունեությունը և անմիջապես կբարձրանան՝ ամենուր չարություն տարածելու համար: Նրանց գործողությունները, որոնց դժվար կլինի ականատես լինել, մինչ նրնաք իրենք իրենց կցուցադրեն ձեր սարսափած աչքերի առջև, կարճ կտևեն:

Հավատը, զավակներս, ուժեղացված կանոնավոր ամենօրյա աղոթքով, կկնքեն այդ վայրագությունները: Ետ գնացեք, զավակներս, և վերագտեք Իմ ուսուցումները: Ետ բերեք Ինձ ձեր կյանքի մեջ: Մեկ անգամ ևս Ինձ վերցրեք ձեր սրտերի մեջ, որպեսզի Ես կարողանամ պահել ձեզ Իմ բազուկների մեջ: Թույլ տվեք Ինձ առաջնորդել ձեզ դեպի հոգևոր կատարելություն, որպեսզի նախապատրաստվեք Հավիտենական Կյանքի համար, երբ Երկիրն ու Երկինքը միանան որպես մեկ:

Կրկնօրինակեք Ինձ, զավակներս, ձեր ամենօրյա կյանքում: Վերցրեք Իմ խաչը նույնիսկ այն դեպքում, երբ դա անելու բեռը չափից շատ կթվա:: երբեք մի վախեցեք ընդունել Իմ խաչը, քանի որ Ես թույլ կտամ ձեզ տանել միայն այնքան, որքան կարող եք:

Այս կյանքում տառապանքի իմաստը
Երբ դուք տառապում եք այս կյանքում, դուք տանում եք Իմ խաչը: Դուք ունեք

երկու ընտրություն: Եթե մերժեք Իմ խաչը, ողբաք և դառնանաք դրա պատճառով, այդ դեպքում տառապանքը աճելով կավելանա: Մյուս կողմից, եթե ընդունեք խաչը և առաջարկեք տառապանքը հոգիներ փրկելու համար, այդ դեպքում դա մի հրաշալի ընծա կլինի Ինձ: Եթե ընդունեք տառապանքը, փորձություններն ու դժբախտությունները ուրախությամբ, ապա ձեր բեռը կդառնա ավելի թեթև: Ես կօգնեմ ձեզ տանել այն: Այդ ժամանակ ցավը կհանդարտվի և խաղաղությունը, սերը, ուրախությունն ու մաքուր երջանկությունը կթագավորեն ձեր մեջ:

Ապրեք պարզ կյանքով
Ապրեք պարզ կյանքով, զավակներս, և ամեն ինչ արեք չափավոր: Երբ ուտում եք, խմում, քնում, հանգստանում, արեք այն չափավոր ձևով: Երբ ձեր ֆիզիկական կարիքները բավարարված են, չպետք է շարունակեք ավելին փնտրել, քանի որ ան քանդում է ձեր ոգին: Զոհաբերությունը, զավակներս, կենսական է, որ դուք ավելի մոտենաք Ինձ: Սրանով Ես ի նկատի ունեմ անձնական զոհաբերությունը: Ծոմապահությունը զոհաբերության մի օրինակ է: Ես քարոզել եմ զոհաբերության կարևորությունը, երկրի վրա Իմ եղած ժամանակ: Նույնպես Իմ թանկագին մարգարե Հովհաննես Մկրտիչը:

Ես, 40 օր ծոմ պահելով, այպես արեցի, ձեզ օրինակ ցույց տալու համար: Միայն ծոմապահության միջոցով է զավակներս, որ կօգնեք դուրս վռնդել Չարին:

Իմ սիրելի զավակներ, ձեր առջևում դեռ այնքան շատ բան կա: Դուք դեռևս չեք հասկանում , թե գալիք տարիներին ձեզնից ինչ կպահանջվի: Միևնույն ժամանակ, կարևոր է Ինձ ավելի մոտենալ, որպեսզի նախապատրաստված լինեք այն փորձություններին, որոնք սպասում են քրիստոնյաներին ողջ աշխարհով մեկ:

Գնացեք խաղաղությամբ: Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Որքան հեշտ է մեղք գործելը

Ստացված երկուշաբթի 24 հունվարի 2011թ, երեկոյան ժ 9.50-10

Այսօր, Իմ սիրելի աղջիկ, դու վերջապես հասկացար Խաբեբայի կողմից դրված վտանգները, երբ թուլացրիր զգոնությունդ: Իմ Հավիտենական Հորն ուղղված **Աստվածային Գթասրտության** աղոթքը կարևոր է քո հոգին սրբագործելու համար:

Մեղքից, Իմ սիրելի աղջիկ, դժվար է խուսափել: Ավելի դժվար է հասնել Իմ հատուկ շնորհներին, քան խուսափել ցանկացած ձևի մեղքից: Երբ դու կանչվում ես այս սրբազան աշխատանքը կատարելու, դու միշտ էլ դառնում ես Չարի թիրախը, ով ամեն հնարավորության դեպքում, սկսում է բացասականություն ստեղծել քո կյանքում: Նա կօգտագործի քո շուրջը գտնվողներին՝ որպես միջոց քեզ վրա հարձակվելու համար, դրա համար դու պետք է միշտ զգոն լինես նրա հանդեպ:: Երբեք թույլ մի տուր նրան հաղթել, որովհետև երբ նա հաղթում է, նա հաջողացնում է թունավորել հոգիներին և առաջացնում է սարսափելի ցավ, տառապանք ու հուսահատություն: Նա քանդում է ընկերությունները, խառնում, հուսահատեցնում և կեղծ մտքեր ներարկում իր թիրախների ուղեղների մեջ: Հետո, երբ Իմ զավակները մեղավոր են զգում իրենց սեփական թուլության համար՝ գայթակղությանը տեղի տված լինելու համար, նրանք զգում են մի տեսակ թշվառություն, որը բերում է հուսահատություն, թշվառություն և ավերածություն իրենց կյանքի մեջ:

Զավակներս, դուք միշտ կգայթակղվեք մեղք գործելու: Ձեր հոգիների կատարելության չափազանց դժվար է հասնել և պահանջում է հսկայական կարգապահություն և վճռականություն ձեր կողմից: Եթե և երբ դառնաք Չարի գայթակղության զոհը և մեղք գործեք, դուք պետք է անմիջապես աղոթեք ձեր սրտից և ներում հայցեք:

Կանոնավոր խոստովանությունը մի խորհուրդ է, որը հիմնականում սխալ է հասկացվում: Միայն ամենշաբաթյա հաճախումները խոստովանության կարող են պահել ձեր հոգին շնորհի վիճակում: Երբ ձեր հոգին սրբագործվում է այս կերպ և ամենօրյա աղոթքի միջոցով, միայն այդ ժամանակն կարող եք հալածել Խաբեբային:

<u>Մեղավորության զգացումը</u>
եթե մեղքի զգացում ունեք որպես մեղավոր արարքների հետևանք, անկախ Իմ Հոր աչքում վիրավորանքի ծանրությունից, մի հուզվեք: Շրջվեք, բացեք ձր սիրտը և ներում խնդրեք: Մեղավորության զգացումը բացասական զգացում է: Եվ մինչ այն ծառայում է որպես ձեր գիտակցության ուղղորդման ձև, առողջարար չէ մնալ այդ վիճակի մեջ: Աղոթքի միջոցով խնդրեք այն շնորհները, որ հասնեք անհրաժեշտ հոգու մաքրության, որպեսզի ծառայեք Ինձ: Համբերությունը կարևոր է: Երբեք թույլ մի տվեք, որ մեղքը ձեզ հեռացնի Ինձնից: Մեղավորությունը երբեք չպետք է կանգնի ազատագրման ճանապարհին:

Հիշեք, զավակներս, որ սկզբնական մեղքի պատճառով դուք միշտ զոհ կգնաք չարի գայթակղություններին:Միայն աղոթքի, ծոմապահության և Սուրբ

Հաղորդությանը նվիրվածության միջոցով է, որ դուք ավելի կմոտենաք Ինձ: Սա պահանջում է ժամանակ, որը պետք է հատկացվի:

Գնացեք հիմա, զավակներս, և հիշեք մի բան – երբեք մի վախեցեք ետ շրջվել դեպի Ինձ երբ մեղք եք գործել: Երբեք մի վհատվեք ներում հայցել, երբ իսկապես խղճի խայթ եք զգում: Բայց նաև հիշեք, որ եթե չանեք, դուք նորից ու նորից կգրավեք Խաբեբային, և ձեր հոգին կիջնի խավարի մեջ: Խավարը ձգում է խավար: Լույսը ձգում է լույս: Ես լույսն եմ:

Շրջվեք դեպի Ինձ հիմա և թույլ տվեք որ Իմ սերը փայլի ձեր խեղճ կորած հոգիների մեջ: Ես ձեզ այնքան շատ եմ սիրում, զավակներս, որ երբ դուք ձեր սիրտը դարձնում եք դեպի Ինձ, անկախ նրանից թե որքան մեկուսացված եք դուք զգում, Ես ձեզ երբեք չեն մերժի:

Գնացեք Խաղաղությամբ և Սիրով

Ձեր Աստվածային Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Նախապատրաստվեք Նախազգուշացմանը, գիտակցության լուսավորում

Ստացված հինգշաբթի 28 հունվարի 2011թ, առավոտյան ժ 12.15-1.00

Այս գիշեր, Իմ սիրելի աղջիկ, քեզ տրվեցին շնորհներ քեզ ավելի հզորացնելու համար, որ կարողանաս շարունակել այս սուրբ գործի աշխատանքը: Իմ սիրելի և նվիրական հետևորդների պաշտամունքի միջոցով, ովքեր եռանդով աղոթում են քեզ համար, դու աղջիկս, արագորեն առաջ կգնաս վերջացնելու Ճշմարտության Գիրքը: Անկախ նրանից, թե որքան զբաղված ես, քեզ համար դժվար է մերժել Իմ հանդեպ ունեցած քո պարտականությունը: Սա գոհացնում է Ինձ, բայց մենք շատ ժամանակ չունենք:

Աշխարհին, աղջիկս, տրվում է այս յուրահատուկ ընծան՝ Ճշմարտության Գիրքը, ցույց տալու համար Իմ զավակներին, թե նրանք հիմա ինչ պետք է անեն Նախազգուշացմանը՝ գիտակցության լուսավորմանը, նախապատրաստվելու համար, որը տրվում է մարդկությանը, որ օգնի նրանց համապատասխան ձևով նախապատրաստվել Իմ Երկրորդ Գալուստին:

Նրանք, ովքեր չեն հավատում Ինձ, պետք է տրվի հնարավորություն ճշմարտությունը կարդալու: Երբ այդ իրադարձությունը տեղի ունենա, այս պատգամներն աշխարհին տալուց հետո, մարդիկ կհասկանան մարդկությունը փրկելու նպատակով քո միջոցով տրված Իմ խոսքերի վավերականությունը, աղջիկս:

Խորհրդավոր իրադարձությունը կզգան 7 տարեկանից բարձր բոլոր մարդիկ
Մի վիրավորվիր, երբ մարդիկ ուշադրություն չդարձնեն այս պատգամներին, աղջիկս: Պարզապես շնորհակալ եղիր, որ նրանց տրվում էայս ընծան: Նրանք կհասկանան այս մարգարեության ճշմարտությունը, երբ այդ առեղծվածային երևույթը, որը կզգան 7 տարեկանից բարձր բոլոր մարդիկ ամբողջ աշխարհում, տեղի ունենա: Նրանք ովքեր դիմանան այդ իրադարձությանը, ավելի զգոն կլինեն այս սուրբ գրքի բովանդակության հանդեպ: Նրանց համար դժվար կլինի անտեսել դա, նույնիսկ եթե նրանց հավատքը թույլ է: Մյուսները, ովքեր չեն ցանկանում իմանալ ճշմարտությունը, դեռևս կարիք կունենան այս գրքի բովանդակության մասին հիշեցման:

Երբեք տեղի մի տուր զավակս, երբ հարցը վերաբերում է հոգիների փրկությանը: Իմ բոլոր թանկագին զավակները ծնվել են Իմ Հավիտենական Հոր սիրուց: Երբ նրանք մոլորվում են, դա նշանակություն չունի: Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը շարունակում է սիրել Իր զավակներից բոլորին և յուրաքանչյուրին:

Հավատքը, զավակս, կարող է վերավառվել Սուրբ Հոգու կողմից օրհնված մյուսների հավատքի միջոցով: Իմ ընտրյալ զավակները, որոնք հիմա ուղարկված են տարածելու Իմ խոսքը աշխարհում, կարողություն ունեն ուրախության արցունքներ բերել այդ խեղճ հոգիների մոտ, որոնք ճչում են ուղղորդություն ստանալու համար իրենց դատարկ խառնաշփոթ կյանքերի մեջ:

Նայեք յուրաքանչյուրին Իմ աչքերով
Միշտ ձեր ընկերներին, ընտանիքին,հարևաններին և աշխատանքային գործընկերներին նայեք Իմ աչքերով: Միշտ տեսեք լավ կողմը: Սեր ցույց տվեք նրանց հանդեպ, և նրանք կզգան Իմ ներկայությունը: Նրանք կձգվեն դեպի ձեզ առանց հասկանալու թե ինչու:

Իմ օրինակի միջոցով, կրկնօրինակեք Ինձ, և դուք կօգնեք Ինձ դարձի բերել Իմ կորած զավակներին: Ջանասիրաբար աղոթելով նրանց համար, դուք կարող եք նրանց ավելի մոտեցնել Ինձ: Ջորհաբերության և չարչարանքների ընդունման միջոցով Ինձ հետ միության մեջ, դուք կարող եք փրկել հոգիների: Սա

ներառում է այն հոգիներին, որոնք հեռանալու են այս երկրից, ինչպես նաև նրանց, ովքեր սպասում են դատաստանի Քավարանում:

Թույլ տվեք Ինձ վերջապես հիշեցնել ձեզ, որ ունեք երկու ընտրություն: Հավատացեք Ինձ՝ բացելով ձեր միտքը Կտակարանում պարունակվող ճշմարտության հանդեպ: Եթե կորցրել եք հավատն ամբողջությամբ, ապա կարդացեք մի կտոր Իմ ուսուցումներից: Հետո խնդրեք Ինձ ցույց տալ ճշմարտությունը ձեր սրտերի մեջ: Հետո կիմանաք, թե որ ճանապարհը կառաջնորդի ձեզ դեպի Ինձ Երկնքում: Որպես այլընտրանք կարող եք ձեր աչքերը փակած պահել և մերժել լսել: Այդ ժամանակ ձեզ կարող է օգնել միայն հավատացողների կողմից ասված աղոթքը: Իմ հետևորդների կողմից ասված աղոթքը, համակցված 20-րդ դարի սկզբին քույր Ֆաուստինային տված Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքի հետ, կարող է փրկել ձեր հոգին ձեր մահվան ժամին:

Աղոթեք Աստվածային Գթասրտության աղոթքը
Աղոթեք, աղոթեք, աղոթեք **Աստվածային Գթասրտության** աղոթքը ձեր հոգիների և չհավատացողների հոգիների համար հիմա: Աղոթախմբերը կօգնեն տարածելու ճշմարտությունը, հավատ ներարկել նրաց մեջ, ովքեր կորցրել են զգացողությունը, թե ով են իրենք և որտեղից են գալիս: Այն նշանակալի կլինի ավետրաանական լուսավորության տարածումը բոցավառելու գործում, որն այժմ կզգացվի աշխարհի բոլոր մասերում, մինչ Երկիր Իմ Երկրորդ Գալուստի մասին արված մարգարեությունների ժամանակը մոտենում է, որոնք սկսում են բացահայտվել մինչ կատարվում են մի շարք գլոբալ իրադարձություններ:

Միշտ պատրաստ եղեք զավակներս: Մնացեք շնորհի վիճակի մեջ և ձեր սրտերը բաց երկրի վրա սիրո և խաղաղության Իմ ուսուցումների հանդեպ: Եթե Իմ զավակները բոլորը հետևին Իմ ուսուցումներին, ապա չէին լինի պատերազմներ, ագահություն, ատելություն կամ աղքատություն աշխարհում: Դուք պետք է հանգիստ նստեք, ձեզնից յուրաքանչյուրը, առնվազն կես ժամ ամեն օր:

Կարդացեք սաղմոսները, առակները և հարցրեք ինքներդ ձեզ. <<Արդյո՞ք այս դասը կիրառելի է իմ կյանքում այսօրվա աշխարհում>>: Դուք գիտեք պատասխանը, իհարկե՝ այո: Աղոթեք զորության համար, որ փոխեք մահից հետո կյանքի հանդեպ ձեր ունեցած վերաբերմունքն ու հայացքները: Հիշեք այս կարևոր դասը: Երկիրը պարզապես ժամանակի մի կարճ անցում է: Միակ ճշմարիտ երջանկությունն ու հավիտենական կյանքն Ինձ հետ է Երկնքում, Դրախտում՝ Իմ Հոր Թագավորության մեջ:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Սերը փրկության ճանապարհն է

Ստացված 5 փետրվարի 2011թ, ժ 11:50

Իմ սիրելի աղջիկ, քեզ այսօր տրվել են լրացուցիչ շնորհներ, որ Ես կարողանամ քեզ ավելի մոտեցնել: Քանի որ միայն Ինձ մոտիկ լինելով դու կկարողանաս ոգալ խաղաղություն, սեր և ուրախություն քո սրտում: Միայն աղոթքի և քո խնդիրներն Ինձ հանձնելու միջոցով դու կլինես Ինձ հետ միության մեջ: Երբ դու հանձնվում ես, աղջիկս և վստահում Ինձ, այն ժամանակ հասկանում ես այն սերը, որը Ես ունեմ քո հանդեպ Իմ սրտում: Եվ երբ դա անում ես, քո սերն Իմ հանդեպ ուժեղանում է: Միայն այն դեպքում երբ դու առաջարկում ես քո բոլոր մտահոգությունները և դնում դրանք Իմ ձեռքերի մեջ, այդ ժամանակ նրանց մասին հոգ կտարվի:

Դու կարող ես իսկական սեր ցույց տալ ուրիշների հանդեպ միայն այն դեպքում երբ սիրում ես Ինձ: Սիրո միջոցով է, որ դու կօրհնվես այն շնորհներով, որ կարողանաս նայել այլ մարդկային էակների Իմ սրտի միջոցով, որը լի է սիրով ու կարեկցանքով:

Միայն այն դեպքում, երբ Իմ հանդեպ ճշմարիտ սեր ցույց տաս, քո կյանքը կփոխվի և ուրախությունը ներս կխուժի քո ամենօրյա կյանքի մեջ: Երբեք մի վախեցեք Իմ սիրուց, զավակներս: Այն միշտ կա առատորեն ձեզ բոլորիդ համար, եթե միայն դուք շրջվեք դեպի Ինձ և խնդրեք այն: Երբ ստանաք այդ սերը, առատաձեռն եղեք: Տարածեք Իմ սերն ամենուրեք, որպեսզի դուք բոլորդ, հատկապես գաղջ հոգիները, կարողանան հրավիրել Ինձ իրենց հոգիների մեջ: Սա է միակ ճանապարհը դեպի փրկություն:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Շուտով տեղի կունենա գլոբալ դարձ

Ստացված կիրակի 6 փետրվարի 2011թ, ցերեկվա ժ. 1.40-2

Սիրելի աղջիկս, սա Իմ սուրբ գրվածքների <<Նախազգուշացում>> վերնագիրը կրող հատորի մեջ դրվելիք վերջին պատգամներից մեկն է

Իմ սիրելի զավակներ, շուտով դուք կիմանաք Իմ գոյության մասին երկնային պատժի միջոցով: Շատ շուտով հիմա Ամենակարող Աստծուն հավատացողներին և աթեիստներին հավասարապես կտրվի վերջնական ընծան, որը կնախորդի այն փառահեղ օրվան, երբ Ես կվերադառնամ դատելու համար:

Այս մեծ իրադարձությունը կբացի ձեր սրտերը և դուք սարսափով կնայեք այն հրաշալի սիրուն, որը Ես ցույց եմ տալիս ձեզ Գթասրտության այս գործողությամբ: Ձեզնից շատերը չեն հասկանում, որ Ես կամ Իմ Հավիտենական Հայրը գոյություն ունենք: Ձեզ համար անմեղ հոգիներ դուք պետք է հասկանաք, որ Իմ Գթասրտությունը տարածվում է դեպի ձեզ Նախազգուշացման ընթացքում:

Անկախ այն բանից, թե դուք Ինձ ինչ անուն եք ուզում տալ, այդ ժամանակ մի նոր հասկացողություն կպարուրի ձեր հոգին: Շնորհակալ եղեք, երբ դա տեղի ունենա, քանի որ Երկնային Պատիժը կլինի ձեր Փրկությունը:

Երբ այդ իրադարձությունն ավարտվի, բոլոր հավատացողները, նրանց հետ միասին, ովքեր կհամաձայնեն՝ ճշմարտությունը վերջապես հասկանալու պատճառով կկազմեն երկրի վրա Իմ նոր բանակը: Ձեզանից յուրաքանչյուրը, ով ներում կփնտրի, երբ ձեր մեղքերը բացահայտվեն ձեզ, կփորձի տարածել ճշմարտությունը խավարի մեջ գտնվողներին:

Այս ընծան, զավակներս, ձեզ վիրավորանք կբերի, երբ ձեզ ծաղրեն հանուն Ինձ: Շնորհակալ եղեք, երբ դա տեղի ունենա, որովհետև այդ ժամանակ կիմանաք, չնայած այդ փորձառությունները ցավոտ կլինեն, որ դոք Իմ ճշմարիտ աշակերտն եք: Դուք կմիանաք Ինձ Դրախտի մեջ, երբ ժամանակը գա: Երբեք մի վախեցեք ձեր հավատից, սիրելիներս: Քանի որ եթե սոսկ մի պահ տեսնեիք այն սոսկ ճոխությունը, որն Իմ Հայրը ստեղծել է ձեզ համար Դրախտում, ձեր մարդկային աչքերը չէին կարողանա դիմանալ լույսին և փառքին: Երբ նայեիք, այս երկրին ձեր կապվածությունը, չնայած այն գեղեցիկ է, քանի որ սա նույնպես ստեղծվել է Աստծո կողմից, կխնդրեիք այն ժամանակը, երբ կարող եք միանալ Ինձ Դրախտի մեջ:

Սիրո պատգամ աթեիստների համար
Հիշեք մի վերջին դաս Ինձնից: Աթեիստներ ամենուր, լսեք հիմա այս պատգամը, նույնիսկ եթե ձեզ համար դժվար է դա: Իմ զավակներից յուրաքանչյուրն այս երկրի վրա սեր է զգում իր կյանքի որոշակի էտապում: Երբ ձեր սրտերում սեր եք զգում, չեք կարող տեսնել այն, ձեռք տալ, և դժվարանում եք նկարագրել այն:Գոյություն չունի ոչ մի գիտական մեթոդ, որ գնահատի այն: Սերը ձեզ դարձնում է խոնարհ: Սերը ձեզ դարձնում է առատաձեռն սրտով:

Սերը կարող է օգնել ձեզ, կատարելու մեծ զոհողություններ: Սերը շփոթեցնող է, բայց համբերատար: Սերը մարդու կողմից պատրաստված չէ: Այն մի ընծա է Աստծուց: Սերը գալիս է միանյ մեկ աղբյուրից: Սերն Աստված է: Աստված սեր է: Դա այնքան պարզ է: Բացեք ձեր սրտերն այն մաքուր սիրո հանդեպ, որը Ես և Իմ Հավիտենական Հայրն ունենք աձեզնից ամեն մեկի և յուրաքանչյուրիդ հանդեպ: Նայեք Ինձ այնպես, ինչպես երեխան կնայի Իր ծնողին: Կանչեք Ինձ և Ես կլցնեմ ձեր սրտերը: Երբ դա տեղի ունենա, դուք երբեք չեք շրջվի:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրրիստոս

Հրատարակիր Իմ պատգամներն աշխարհով մեկ

Ստացված երկուշաբթի 7 փետրվարի 2011թ, երեկոյան ժ 10.00

Աղջիկս, դու մի փոքր շեղվեցիր, և հիմա խնդրում ես ուժ, որ քեզ վստահություն և արիություն տա կատարելու Իմ հրահանգները: Դա լավ է: Տվեք Ինձ ձեր ժամանակը, ինչպես Իմ Սիրելի Մայրը խնդրել էր, որովհետև ձեր հոգիները ամենից մաքուր են մնում այն ժամանակ, երբ շփվում են Իմ խոսքի հետ:

Ես հիմա պետք է խնդրեմ քեզ, որ սկսես պլանավորել Իմ թանկագին Նախազգուշացման տարածումը, մի ընծա աշխարհում ապրող յուրաքանչյուր մարդու համար: Նրանց պետք է մանրամասներ տրվի այդ մասին մինչև փետրվարի վերջը ինտերնետի միջոցով և ամբողջ աշխարհում: Շտապիր զավակս, արա այն, ինչ պետք է արվի, որպեսզի որքան հնարավոր է շատ մարդիկ հնարավորություն ունենան լսելու այդ մասին: Տուր այդ ժամանակը, աղջիկս, որովհետև հիմա այն հրատապ է: Այս խնդրանքը չի արվում քեզ վախեցնելու համար: Այն հրատապությունը շեշտելու համար է, որպեսզի որքան հնարավոր է շատ մարդիկ նախապատրաստված լինեն աշխարհում: Այդ դեպքում նրանք կարող են հաշտություն փնտրել, երբ իրենց մեղքերը քողազերծվեն իրենց աչքերի առջև:

Նախապատրաստվելով, նրանք մեծապես կօգտվեն դրանից: Քեզ հիասթափված կամ վախեցած մի զգա: Սա մի ընծա է մարդկության համար: Այս կանչի ընդունումը քո կողմից նշանակում էր, որ դու տառապել ես, բայց ոչ քո ակնկալած ձևով: Քո տառապանքը եկավ գայթակղությունից: Քո կասկածները չթողեցին քեզ ընդունել այն խաղաղությունն ու ուրախությունը քո հոգու մեջ, որը քոնն է, եթե դու Ինձ թույլ տաս քեզ վերցնել և առաջնորդելու

ազատությունը: Հիմա, աղջիկս, ժամանակն է, որ ամեն ինչ Ինձ հանձնես: Առաջարկիր Ինձ քո ազատ կամքը որպես ընծա: Ես կտամ քեզ ամենամեծ և ամենացանկալի ընծան: Խաղաղություն, ուրախություն, և Իմ հանդեպ հսկայական սեր քո էության յուրաքանչյուր մասնիկի մեջ: Արի հիմաաղջիկս: Եղիր Իմը:Վերջապես միացիր Ինձ հետ միության մեջ: Տուր Ինձ քո ողջ սերը, տառապանքը, անհանգստությունները և հոգսերը: Պարզապես թող դրանք հիմա: Միայն և միայն այդ դեպքում դու իսկապես ազատ կլինես և սիրտդ թեթև:

Այս աշխատանքը ուժ կպահանջի ազջիկս: Դու սոսկ տեսանող չես: Ես տալիս եմ քեզ մարգարեության ընծան: Ինչու՞ Որովհետև դու, Իմ թանկագին մարգարե, գործիք կլինես տարածելու համար բարի լուրը ամբողջ աշխարհին Իմ Երկրորդ Գալուստի մասին, երբ Ես վերադառնամ երիկիր:

Ես հասկանում եմ, որ այս նորությունը շոկի պես կգա, բայց դու նախապատրաստվում էիր այս դերի համար բավականին երկար ժամանակ, միայն թե դու չգիտեիր այդ մասին: Այս առաջադրանքնի մեջ քեզ օգնելու համար Ես քեզ մոտ նշանակել եմ մի քանի սրբերի, որ օգնեն քեզ: Դրանց թվում են սուրբ Բենեդիկտը, սուրբ Ավգուստինը, սուրբ Հովհաննես Պողոս 11 Պապը, սուրբ Ֆաուստինան, սուրբ Մաղաքիան և Ավիլայի սուրբ Թերեզան: Ես մյուսներին կբացահայտեմ ժամանակին: Հիմա բոլորն աշխատում են, օգնելու համար քո առաջադրանքին, որը պատմության այս կարևոր ժամանակներում մարդկությանը տվածներից ամենակրևորներից մեկն է:

Մի վախեցիր, աղջջիկս, դու ավելի քան կարող ես այս աշխատանքի համար: Ինչու՞ ես կարծում, որ Ես քեզնից այդպիսի կարգապահություն եմ պահանջում: Դու դեռևս ճանապարհ ունես անցնելու քո հոգևոր զարգացման մեջ, բայց դա կգա ժամանակին: Ես կշարունակեմ անձնապես հաղորդակցվել քեզ հետ մինչ առաջին հատորը կհրապարակվի: Ես սիրում եմ քեզ, աղջիկս: Ես գիտեմ, որ դու Ինձ սիրում ես: Ես գիտեմ, որ քեզ համար չափազանց դժվար կլինի, քո բոլոր ճնշումների հետ: Բայց դու հաստատակամ կլինես, ավելի ու ավելի ուժեղ կդառնաս: Քո էներգիան և մտքի արագ ընթացքը կապահովի, որ պատգամների այս կարևոր շարքը դուրս գա հասնի Իմ բոլոր զավակներին ամենուրեք:: Բոլոր երկրներին:

Այժմ այսքանը: Շնորհակալ եմ, որ ժամանակ տրամադրեցիր մտորելու և պատասխանելու Ինձ այս երեկո:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Պատգամ Սուրբ Հոգուց

Հիմա եկել է ժամանակը վեր կենալու և վերցնելու այս գավաթը: Խմիր դրանից, քանի որ դա Փրկության Գավաթն է: Խմելով այս գավաթից, դու արդեն պատրաստ կլինես կիսելու այս գավաթը մարդկության հետ: Հիմա նախապատրաստիր քողազերծել Քրիստոսի խոսքերը, որպեսզի հոգիները կարողանան փրկվել Նախազգուշացման ժամանակ:

Մի կորցրու ոչ մի պահ, մինչ ժամանակը մոտենում է այս մեծ իրադարձության: Աշխարհին միայն մի կարճ ժամանակ է մնում կարդալու դրա բովանդակությունն ինտերնետում: Սակայն այս շրջանը գործնական կլինի Դժոխքի կրակներից միլիոնավոր հոգիների փրկելու գործում:

Սա մի մեծ պատասխանատվություն է, սակայն դու հիմա պատրաստ ես:

Գնա հիմա սիրով և խաղաղությամբ:

Սուրբ Հոգի

Արաբական աշխարհի բարձրացումը - աշխարհի 3 ղեկավարներ կսպանվեն

Ստացված հինգշաբթի, 17 Փետրվար, 2011թ., երեկոյան 11.45-ին

Իմ սիրելի աղջիկ, այսօր Ես լի եմ ուրախությամբ, երբ պատգամների այս կարևոր շարքն արդեն պատրաստ է ներկայացվելու ողջ մարդկությանը: Շուտով կիմանաս, որ բոլոր երկրները փնտրում են այս ուղերձները: Մի անհանգստացիր քո անվտանգության համար, քանի որ Ես միշտ կպաշտպանեմ քեզ եւ քո ընտանիքի անդամներին: Չնայած Ես սիրով լի եմ քո հանդեպ, զավակս, Իմ սիրտը կոտրվում է խորը վշտից երկրների վրա իշխանության ձգտող խորամանկ հասարակության կողմից հասցվող տառապանքների համար:

Նրանք դա կանեն՝ խելամտորեն հեռացնելով առաջնորդներին .* Հետո կառաջարկեն օգնություն: Հետո նրանք կգնեն երկրների նոր ղեկավարների (ռեժիմների) բարեկամությունը, մինչեւ հասնեն նրանց վրա վերահսկողության: Այս նոր հսկողությունը լինելու է ավելի վատ, քան իշխանության տենչացող

դիկտատորները, որոնք կհեռացվեն (ցած կգցվեն) հանուն ազատության:

Ուշադրություն դարձրու հիմա, աղջիկս, այն արագությանը, որով արաբական աշխարհը կմիավորվի իմ ժողովրդի՝ հրեաների դեմ: . Ուշադիր եղիր, թե ինչպես նրանց բոլոր դաշնակիցները կհեռանան՝ թողնելով նրանց բացահայտված:

Աղջիկս, երբ տեղի ունենա **Նախազգուշացումը,** դարձից հետո իմ խոսքն ավելի հեշտությամբ կլսվի: Սա կլինի այն ժամանակը, երբ իմ սուրբ հետեւորդները կմիավորվեն վճռականորեն այն բռնապետության դեմ, որը ի հայտ կգա արեւմտյան աշխարհում, հատկապես Եվրոպայում: Պայքարեք հանուն ձեր աղոթելու իրավունքի: Եթե դուք դա չանեք, ապա դա կլինի ոչ թե կրոնական պատերազմ, այլ ցեղասպանություն:

Շուտով մեկ առ մեկ կսպանվեն երեք համաշխարհային առաջնորդներ. Հիշեք, որ յուրաքանչյուրը կսպանվի Չարի խմբի ծրագրերի միջոցով՝ այն ենթա-մշակութային կազմակերպությունների, որոնք իշխում են բոլոր ազգերի մեջ, չնայած դուք չեք կարող տեսնել նրանց, քանի որ նրանք վախկոտներ են: Բայց նրանք երկար թաքնված չեն մնա: Երբ վերահսկողությունը նրանց ձեռքում լինի, նրանք կգրավեն ձեր ուշադրությունը եւ հարգանք կպահանջեն:

Նախազգուշացումը կօգնի փրկել իմ երեխաներին ամենուր. Դարձը, մի նվեր Իմ կողմից, տրվելու է նույնիսկ նրանց, ովքեր դավադրություն են նյութում եւ ձգտում հաստատել վերահսկողություն Աստծո երկրի վրա: Եթե նրանք կարողանան հասկանալ, որ այս իշխանությունը երբեք իրենցը չի լինի, նրանք կանգ կառնեն: Բայց նրանք կույր են:

Հիմա Իմ հրեշտակներից ** ավելի շատերը կներթափանցեն երկիր որպես մարդկային արարածներ՝ կօգնեն ցույց տալ այդ խեղճ սխալ ուղղորդված հոգիներին ճշմարտությունը. Շատերը դարձի կգան, ոմանք՝ ոչ:

Աղջիկս, գնա, տարածիր արագորեն այս խոսքը: Ձեզ մնացել է միայն մի քանի շաբաթ: Օգտագործիր քո տրամադրության տակ եղած բոլոր միջոցները: Խիզախ եղիր: Արա բացառապես ամեն ինչ, որ հնարավորություն տաս Իմ բոլոր զավակներին, բոլոր ազգերին հասկանալու Իմ յուրահատուկ նվերի իմաստը՝ մի հատուկ նվեր, երբ իմ ձեռքը կհասնի Երկնքից նրանց հոգիները փրկելու համար:
Նրանք, ովքեր սկզբում դարձի չեն գա, դա կանեն նախքան **Հետապնդումը,** երբ ավելի ու ավելի շատ հոգիներ կշրջվեն դեպի Ինձ: Դա չափազանց դժվար ժամանակաշրջան կլինի բոլորի համար: Բայց համբերատար եղեք, առջևում լավ ժամանակներ են սպասվում, երբ խաղաղությունը կվերադառնա Երկիր: Իմ

զավակները, արթնացման այս կանչից հետո, կտեսնեն Իմ սերը և վազելով ետ կգան կընկնեն Իմ բազուկների մեջ: Հետո, երբ դա տեղի ունենա, Իմ բազուկը կկազմի և կպաշտպանի Իմ Թագավորությունը Խաբեբայից, որի կառավարումը շատ կարճ կլինի:

Սա շրջադարձային կետ է մարդկության պատմության մեջ, զավակներս: Շատ շուտով դուք կհասկանաք սա: Եթե մինչ **Նախազգուշացումը** թերահավատ եք, ապա դրանից հետո դուք կբացեք ձեր սրտերը ճշմարտության հանդեպ:
Գնա հիմա, աղջիկս, Խաղաղությամբ եւ սիրով ողջ մարդկության հանդեպ:
Հիսուս Քրիստոս՝ Արքա հրեաների

Ծանոթություն * Տեսանողուհին ցանկանում է, որ աշխարհին պարզ լինի, թե ինչու չի կարող հայտնել այն առաջնորդների անունները, ՈՐՈՆՑԻՑ ԵՐԿՈՒՄՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՑ ԵՆ, ԻՍԿ ՄԵԿԸ ԵՎՐՈՊԱՅԻՑ; ԴԱ ԱՐՎՈՒՄ Է ՀԱՐԳԱՆՔԻՑ ԵԼԵԼՈՎ ԵՎ ԱՎԵԼՈՐԴ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ. Այնուամենայնիվ, նա պատգամները տվել է մի քանի հոգևորականների և լրատվամիջոցների՝ պատրաստ հրապարակման, հենց որ սպանությունները տեղի ունենան (իրար հետևից կարճ ժամանակի ընթացքում):

** Տեսանողուհու կարծիքով <<հրեշտակները>> այն մարդիկ են, ովքեր այսօր ընտրվել են աշխարհով մեկ տարածելու այս պատգամները՝ համատարած դարձի համար:

<<Նախազգուշացում>> հատորի վերջին պատգամը

Ստացված շաբաթ 19 փետրվարի 2011թ, ցերեկվա ժ3

Իմ սիրելի աղջիկ, դու ջանասիրաբար փորձում ես ենթարկվել Իմ ցուցումներին քո հոգին մաքրագործելու համար, և սա մեծապես գոհացնում է Ինձ: Խնդրում եմ տուր Ինձ մեկ ամբողջ ժամ քո օրվա ընթացքում լռության մեջ Ինձ հետ և թույլ տուր Ինձ քեզ ավելի մոտեցնել Իմ Սուրբ Սրտին:

Դու ավելի ուժեղ կզգաս, երբ դա անես: Սկսիր այսօրվանից, անցկացնելու այդ ժամանակը Իմ ընկերակցությամբ, որպեսզի Ես կարողանամ լուսավորել քո սիրտը և թեթևացնել քո բեռը:

Այսօր Ես ցանկանում եմ քողազերծ անել քեզ համար մարդկության հանդեպ Իմ ցանկությունը, որ սկսեն գնահատել իրենց կյանքը՝ Նախազգուշացմանը

նախապատրաստվելով: Աղջիկս, ձեզնից նրանք, ովքեր չեն նախապատրաստվի, աղոթքի կարիք ունեն և դրանից ավելին:

Նախազգուշացումը, մեծ ընծան, հիմա կներկայացվի աշխարհին: Բոլորին կտրվի հնարավորությունը զգալու այն ուրախությունը երբ նրանք վերջապես կհասկանան ճշմարտությունը: Իմ գոյության ճշմարտությունը: Ազոթիր բոլորի համար, զավակս, որ նրանք արիություն ունենան փնտրելու Իմ ներողամտությունը:

Վերջապես աղջիկս, Իմ զավակներն ամենուրեք սկսում են բացել իրենց աչքերը: Նրանք հիմա հասկանում են, որ աշխարհը փոխվում է Աշխարհը, որը նրանք ճանաչում էին, արդեն տեղափոխվել է նոր փուլ: Այս նոր փուլը կտանի դեպի մի քանի էտապներ, նախքան նրանք, Իմ զավակները, վերջապես պատրաստ կլինեն Նոր Դրախտի համար:

Խաբեբայի պարազիտները համառորեն կկռվեն մինչև վերջ դժվախտաբար: Աղոթիր այն խողճ մոլորված հոգիների համար հիմա, որ լույսի մի կայծ հեղեղի նրանց սրտերը, երբ նրանք հանդիպեն Իմ նվիրյալ հետևորդներին: Դուք, Իմ հետևորդներ, ձեզ տրված են շնորհներ, օգնելու դարձի բերել այն բոլոր հոգիներին, որոնք կորած են անապատում և որոնց հոգիներում Սատանայի կողմից խառնաշփոթ վիճակ է ստեղծված:

Լա Սալետի, Ֆաթիմայի, Գարաբանդալի մարգարեությունները հիմա կկատարվեն
Լա Սալետում, Ֆաթիմայում, Գարաբանդալում օրհնյալ տեսանողներին տրված բոլոր մարգարեությունները հիմա կկատարավեն, որ բոլորը տեսնեն: Այն բոլոր հազարավոր հավատացյալների համար, ովքեր գիտեն և ընդունում են այս մարգարեությունները, իմացեք, որ հիմա Ես՝ ձեր Փրկիրը կոչ եմ անում ձեզ բոլորիդ աղոթել ողջ մարդկության հոգիների համար: Մեկ անգամ ևս ձեր սրտերը բավեք այս նոր պատգամների հանդեպ՝ իրենց տեսակի մեջ վերջին մարգարեությունները, որոնք հեղվելու են Իմ բոլոր զավակների վրա նախքան Ես ետ կգամ դատելու:

Կոչ բոլոր եկեղեցական առաջնորդներին
Ես նաև կոչ եմ անում Իմ սրբազան ծառաներին բոլոր եկեղեցական դավանություններից, ովքեր պատվում են Իմ Հավիտենական Հորը, լսեք հիմա: Թույլ չտաք, որ Խաբեբան իր կեղծ մարգարեի միջոցով խաբի ձեզ, որ հավատաք այն ստին, որը կիրագործվի նրա անվամբ շուտով: Սա մի չափազանց դժվար ժամանակ կլինի ձեզնից նրանց համար, ովքեր սիրում են Ինձ, որովհետև դուք չափազանց շփոթված կլինեք:

Կեղծ մարգարեն և Հակաքրիստոսը
Պարզ աչքերով դիտեք Կեղծ մարգարեին, ով կփորձի առաջնորդել Իմ եկեղեցին, քանի որ նա չի գալիս Իմ Հավիտենական Հոր Տնից: Նա կթվա ինչպես որ կա: Բայց դա կեղծ կլինի: Հետևեք նաև այն ընկերությանը, որ նա կունենա Հակաքրիստոսի հետ, քանի որ նրանք կլինեն Սատանայի ամենախաբեբա հետևորդներից՝ հագած ոչխարի մորթի: Նրանք կունենան զորություններ, որոնք կթվան ինչպես հին ժամանակների հրաշքները, բայց այդ ուժերը կլինեն սատանայական: Դուք պետք է ամեն ժամանակ մնաք շնորհի մեջ, որպեսզի պաշտպանեք ձեր հավատը: Աղոթեք Իմ սուրբ ծառաների համար, ովքեր իրենց գաղջ հավատով, կքշվեն դեպի Խաբեբայի բազուկները: Նա դուր կգա նրանց, որովհետև կառաջարկի հուզմունք, կիրք, այսպես կոչված սեր, որը կլինի եսասիրական ուղղության, և նրա խարիզմատիկ տեսքին դժվար կլինի դիմադրել: Իջեք ներքև այդ ճանապարհով, Իմ նվիրյալ ծառաներ, և դուք կորած կլինեք Ինձ համար ընդմիշտ:

Դուք կհարցնեք, թե ինչու այդ իրադարձությունները պետք է այդպիսի դժվարություններ ներկայացնեն: Հետո կզարմանք, թե Ես ինչու եմ թույլ տալիս, որ այդ բաները տեղի ունենան: Իհարկե Հիսուսը, Իր Գթասրտությամբ, չի ներկայացնի այդպիսի խոչընդոտներ: Դե, Ես պետք է թույլ տամ դրանք, որովհետև այդ մարտահրավերների միջոցով կարող է տեղի ունենալ վերջնական մարտը Չարի և Իմ Հավիտենական Հոր միջև: Առանց վերջնական հակամարտության, նա՝ Սատնան, չի կարող վերջնականապես նետվել Հավիտենական Դժոխքի անդունդի մեջ:

Զգոն եղեք այս խաբեության հանդեպ: Թույլ մի տվեք, որ ձեր հոգիները կորչեն այս ձևով: Աղոթեք, աղոթեք, աղոթեք զանազանման շնորհների համար, որ կարողանաք տեսնել Կեղծ մագարեին այնպիսին, ինչպիսին նա իրականում կա. Դժոխքի խորքերից ուղարկված մի դև, որ ոչնչացնի ձեզ: Շնորհակալ եղեք, որ դուք նրա թիրախներն եք: Իմ հանդեպ ձեր ուեցած հավատարմության պատճառով դուք կենթարկվեք ծայրագույն փորձության. Ձեր հավատի փորձությանը: Այլևս դուք երբեք նորից չեք դիմակայի այդպիսի փորձության: Ուստի պատրաստ եղեք: Շրջվեք դեպի Ինձ դուք բոլորդ, Իմ նվիրյալ ծառաներ, հիմա, քանի դեռ չափազանց ուշ չէ:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս